

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի 2021-2022 ուսումնական տարվա գործունեության

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետվությունը հաստատվել է
09.02.2023 թվականի հոգաբարձուների
խորհրդի թիվ 3-Լ որոշմամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 4

ՀՖԿՍՊԻ-Ի ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ..... 8

ՀԻՄՆԱԴՐԻ ԱՆՈՒՆԻՑ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ 9

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ..... 22

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ 42

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ 49

ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ..... 55

ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ..... 62

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԶԱՆԵՑՈՒՄ 67

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ..... 69

ՖԻՄԱ ՄԱՐԶԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 74

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 76

ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ 98

ԲՈՒՀ–ԳՈՐԾԱՏՈՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ.....104

ՀՖԿՍՊԻ–Ի ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՔՈԼԵՋԻ ՀԻՄՆՈՒՄ..... 106

Հարգելի՛ դիմորդներ, ուսանողներ, գործընկերներ

Բոլորին է հայտնի, որ կրթական համակարգի փոփոխությունները կապված են հասարակության արագ փոխակերպվող պահանջների հետ: Ժամանակակից հասարակությունը թևակոխել է զարգացման նոր փուլ: Հայաստանի Հանրապետության հետագա զարգացման և բարգավաճման գրավականներից մեկը որակյալ և մրցունակ մասնագետների, ազգային արժեքներ կրող և արժանապատիվ անհատների պատրաստումն է, նրանց գիտելիքահեն կրթության ապահովումը:

Լինելով ոլորտային բացառիկ բարձրագույն ուսումնական հաստատություն, մենք կարևորում ենք շարունակական կրթական գործընթացի միջոցով երիտասարդ սերնդի մոտ հայրենասիրության ձևավորումը, գիտելիքների ներդրման և մասնագիտական հմտությունների շնորհիվ հայրենիքին օգտակար լինելու գաղափարների իրագործումը:

Բարձրագույն ուսումնական համակարգն իր հիմնական գործառույթն իրականացնում է հավատարիմ մնալով պետական ինստիտուտների կայացման և արդիականացման ուղղությամբ տարվող աշխատանքներին՝ առաջնահերթ նպատակ ունենալով նպաստել Հայաստանի Հանրապետությունում ինտելեկտուալ ներուժի զարգացմանը:

Մեր երկրի առջև ծառացած տնտեսական, տեղեկատվական և անվտանգային բազմաթիվ մարտահրավերներ հնարավոր է հաղթահարել համախմբված և միասնական ջանքերի շնորհիվ:

Մեր բուհը, որպես սպորտի և սպորտը սպասարկող ոլորտների համար մասնագետներ պատրաստող բարձրագույն ուսումնական հաստատություն, հավատարիմ է մնում իր առաքելությանը՝ խելացի և փորձառու շրջանավարտ–մասնագետների հետ միասին կերտել մեր հայրենիքի կայուն ապագան:

ՀՖԿՍՊԻ–ում գործող բազմաստիճան կրթական համակարգը, տարբեր կրթական ծրագրերը, մասնագիտությունները և մասնագիտացումները ապահովում են մասնագետների պատրաստման լայն շրջանակ սպորտի և սպորտը սպասարկող ոլորտների համար: Յուրաքանչյուրին նախընտրելի մասնագիտություն ընտրելու հարցում օգնելու համար ստեղծվել և արդյունավետորեն գործում է դիմորդների նախապատրաստման համակարգ՝ ներառելով հենակետային քոլեջը և բուհում գործող նախապատրաստական դասընթացները:

Սպորտը հանդիսանում է ապաքաղաքական ոլորտ, սակայն սպորտը կարող է մեծապես նպաստել Հայաստանի հանրահռչակմանը, մեր երկրի ճանաչելիության բարձրացմանը, իսկ ֆիզիկական կուլտուրան և մասսայական սպորտը առողջ և կարող քաղաքացիների կրթման և ձևավորման կարևորագույն ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներից են:

Մաղթում եմ քաջառողջություն, նպատակների իրագործում, լավատեսություն, ստեղծագործական ոգեշնչում և հաջողություններ: Լինենք մեր անկախ երկրի արժանի քաղաքացիներ: Մեր գործերով և գիտելիքներով ապահովենք մեր երկրի զարգացումը և առաջընթացը:

ՆԱԽԱԲԱՆ

Առաջնորդվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության, Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին օրենքով, բուհի կանոնակարգի, բուհի կառավարման և գիտական խորհուրդների, որոշումների ու արձանագրությունների դրույթներով ՀՖԿՍՊԻ–ին իր զարգացման հետևյալ ուղենիշներն է սահմանել՝

1. **արդյունավետ կառավարում,**
2. **որակյալ կրթություն՝ դասավանդման և գնահատման մեթոդների արդիականացմամբ,**
3. **պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական զարգացման ապահովում,**
4. **դպրոց-բուհ-աշխատաշուկա ֆունկցիոնալ կապերի ապահովում:**

2021-2022 ուսումնական տարվա ընթացքում իրականացված լայնածավալ բարեփոխումների նպատակն է ժամանակակից մարտահրավերներին և բուհի ռազմավարության սկզբունքներին համապատասխան արձանագրել առաջընթացի այնպիսի արդյունքներ, որոնք նպատակաուղղված են բուհի վարկանիշի և հեղինակության բարձրացմանը:

Հաշվետվության մեջ ներկայացված են անհրաժեշտ տվյալներ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի գործունեության վերաբերյալ, որոնք իրականացվել են հաշվետու ժամանակաշրջանում նախատեսված բարեփոխումներն ապահովելու համար:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

2021-2022 ՈՒՍՏԱՐԻՆ ԹՎԵՐՈՎ ՄԵՆՔ 77 ՏԱՐԵԿԱՆ ԵՆՔ

Ինստիտուցիոնալ հավատարմագրում
4 տարի ժամկետով

4
Բակալավրի
կրթական ծրագրեր

9
Մագիստրոսի
կրթական ծրագրեր

3
Հետբուհական
կրթական
ծրագրեր



2158
Բակալավրի
ուսանողներ

131
Մագիստրանտներ

13 հայցորդ
6 ասպիրանտ

59
Սփյուռքի և օտարերկրացի
ուսանողներ

30
Մեր
գործընկերները

1
Մասնագիտական
խորհուրդ



895
Դիմորդ

16
Անվանական
կրթաթոշակ

38
Միջազգային պայմանագրեր
և համաձայնագրեր

ԲԱՐԵԼԱՎՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2021-2022 ուստարի

Միջազգային ուսանողների աշխարհագրության ընդլանում — 8

ՌԴ, Վրաստան, Կանադա, Ուզբեկստան, Լիբանան, Սիրիա, Իրան, Ուկրաինա

Անվանական կրթաթոշակ — 16

Հետբուհական Կրթական ծրագրեր — 3

1. ԺԳ.00.02 -Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (ֆիզիկական կուլտուրա և սպորտ),
2. ԺԹ.00.01 -Ընդհանուր հոգեբանություն հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն
3. Գ.00.09 -Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա

Ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով

Լրացուցիչ և շարունակական կրթություն — 5

ԺԳ 00.02 թվանշով մասնագիտական խորհրդ — 1

Դրամաշնորհային ծրագիր — 5

Միջազգային շարժունության ծրագիր — 1

Erasmus + միջազգային շարժունության ծրագիր - **1**
Նոր հայտերի ներկայացում - **4**

ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ դրամաշնորհային ծրագիր — 1

Նախապատրաստական - **5**
Մերսման դասընթացներ - **29**
Ֆիթնես - **7**
Փոքրիկ օլիմպիկ - **26**
Ուսուցիչների վերապատրաստում - **106**

Նյութատեխնիկական բազայի արդիականացում — 7

Լսարան - 9
Մեդիալաբ - 1
Գրադարան - 1
Սանհանգույց – 5
Պրոյեկտոր -3
Կոնֆերանսների աուդիո համակարգ-1
Տեսախցիկ - 1

Հենակետային քոլեջ — 4

1. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ
2. Զբոսաշրջություն/ ըստ ճյուղերի / սպորտային
3. Բուժական մերսում
4. Թիկնապահական գործ

95

Բարձր վարկանիշ ունեցող շտեմարաններում տպագրություն — 5

ՀՖԿՍՊԻ-Ի ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

ՀՖԿՍՊԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ՝

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Հիմնադրի անունից առաջադրված խորհրդի անդամներ	
Կարեն Գիլոյան	- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ
Արսեն Միխայլով	- ՀՀ վարչապետի օգնական
Գոհար Մամիկոնյան	- Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ)
Սերգեյ Աբրահամյան	- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բաժնի պետ
Արսեն Հակոբյան	- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության ուսանողների աջակցության բաժնի պետ
Լիազոր մարմնի կողմից առաջադրված խորհրդի անդամներ	
Սամվել Գևորգյան	- Ն. Մուշեղյանի անվան ըմբշամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն (համաձայնությամբ)
Էդուարդ Քալանթարյան	- Հայաստանի Հանրային հեռուստաընկերության մարզական մեկնաբան (համաձայնությամբ)
Հարություն Յավրյան	- ՀՀ սպորտի վաստակավոր գործիչ (համաձայնությամբ)
Ռոբերտ Պետրոսյան	- Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի նախագահ (համաձայնությամբ)
Դավիթ Մոսինյան	- «Հակադոպինգային գործակալություն» ՊՈԱԿ-ի տնօրեն (համաձայնությամբ)
Պրոֆեսորադասախոսական կազմից ընտրված խորհրդի անդամներ	
Մարտին Ալիխանյան	- Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի ամբիոնի դասախոս
Անահիտ Բարսեղյան	- Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոս
Մխիթար Խաչատրյան	- Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի ամբիոնի դասախոս
Եղիշե Դավթյան	- Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի մարզախաղերի ամբիոնի դասախոս
Վարինկա Ավագիմյան	- Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոս

Սովորողների կողմից ընտրված խորհրդի անդամներ	
Դիաննա Ալեքսանյան	- Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման ֆակուլտետի սովորող
Մերուժան Սարգսյան	- Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման ֆակուլտետի սովորող
Յուրի Իսրաելյան	- Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի մարզչամանկավարժական ֆակուլտետի սովորող
Արմեն Պանչուլազյան	- Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման ֆակուլտետի սովորող
Գայանե Չիլոյան	- Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի մարզչամանկավարժական ֆակուլտետի սովորող

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դավիթ Սենիկի Խիթարյան	Գիտական խորհրդի նախագահ, մ.գ.թ., պրոֆեսոր
Լուսինե Սամվելի Ստեփանյան	Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, կ.գ.թ., դոցենտ
Անժելա Ռուբենի Նուշիկյան	Արտաքին կապերի և ռազմավարական ծրագրերի գծով պրոռեկտոր
Արամ Արմենակի Գևորգյան	Ֆինանսավարչական գծով պրոռեկտոր
Աշոտ Աղվանի Չատինյան	Գիտական քարտուղար, մ.գ.դ., պրոֆեսոր
Տիգրան Գրիգորի Սիմոնյան	Մարզչամանկավարժական ֆակուլտետի դեկան, մ.գ.թ., դոցենտ
Ֆրունզիկ Գաբրիելի Ղազարյան	Գիտահամակարգող բաժնի ղեկավար, մ.գ.դ., պրոֆեսոր
Վարդան Ավետիսի Սմբատյան	Ցիկլիկ մարզաձևերի ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ
Ելենա Սուրենի Հակոբյան	ՖԴՏ, մեթոդիկայի և ադապտիվ ՖԿ ամբիոնի մ.գ.դ., պրոֆեսոր
Մարինա Գերասիմի Աղաջանյան	Բժշկակենսաբանական գիտությունների ամբիոնի բ.գ.դ., պրոֆեսոր
Արմեն Լեոնիդի Հակոբյան	Ցիկլիկ մարզաձևերի ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ
Հարություն Արտավազդի Բաբայան	Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, հ.գ.թ., պրոֆեսոր
Խաչիկ Թորգոմի Հարությունյան	Ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի ամբիոնի վարիչ, դոցենտ

Արտակ Գառնիկի Ստեփանյան	ՖԴՏ, մեթոդիկայի և ադապտիվ ՖԿ ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ
Աշոտ Ռոմանի Դանիելյան	Ծանրամարտի, բռնցքամարտի և սուսերամարտի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր
Սուրեն Հակոբի Դանիելյան	Սպորտային տուրիզմի և փրկարարական գործի ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ
Նունե Շմավոնի Հայրապետյան	Սպորտի կառավարման և մարքեթինգի ամբիոնի ժ/պ. տ.գ.թ., դոցենտ
Նունե Գևորգի Տեր-Մարգարյան	Բժշկակենսաբանական գիտությունների ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ
Մուշեղ Էդուարդի Նիկոյան	Ֆուտբոլի ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ
Էրիկ Զավենի Մարտիրոսյան	Ցիկլիկ Մարզաձևերի ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ
Հարություն Հովհաննեսի Մելքոնյան	Մարզախաղերի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր
Գևորգ Լևոնի Նալբանդյան	Ֆիզիկական վերականգնման ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ
Հասմիկ Յուրիկի Ավագյան	Հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ
Նարինե Վիլիկի Սելումյան	Մարմնամարզության, սպորտային պարերի, գեղասահքի և շախմատի ամբիոնի վարիչ, մ.գ.թ., պրոֆեսոր
Արևհատ Ռաֆիկի Բաղդասարյան	Մարզական լրագրության ամբիոնի վարիչի ժ/պ
Գոհար Արարատի Մուրադյան	Որակի ապահովման բաժնի ղեկավար
Վրեժ Լիպարիտի Նավասարդյան	Մարզչամանկավարժական ֆակուլտետ 2-րդ կուրս
Աշոտ Սոսի Սարգսյան	Մարզչամանկավարժական ֆակուլտետ 2-րդ կուրս
Նատալի Հենրիկի Համբարձումյան	Մարզչամանկավարժական ֆակուլտետ 2-րդ կուրս
Լիլիթ Կարենի Մկրտչյան	Մարզչամանկավարժական ֆակուլտետ մագիստրատուրա 1-ին կուրս
Աննա Նորայրի Պետրոսյան	Մարզչամանկավարժական ֆակուլտետ 2-րդ կուրս
Հայկ Համլետի Ղարիբյան	ԱՏՍՏԿ ֆակուլտետ 3-րդ կուրս
Գրետա Արայի Թևանյան	ԱՏՍՏԿ ֆակուլտետ 2-րդ կուրս
Էրիկ Անուշավանի Շահբազյան	ԱՏՍՏԿ ֆակուլտետ 2-րդ կուրս

ՀՖԿՍՊԻ–ի կառավարման մարմիններն են հանդիսանում հոգաբարձուների խորհրդը և գիտական խորհուրդը:

Հաշվետու տարվա ընթացքում կազմակերպվել և իրականացվել է Հոգաբարձուների խորհրդի 5 նիստ, նիստերի ընթացքում քննարկվել և հաստատվել են «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի 2017-2021թթ ռազմավարական ծրագրի կատարողականը, Հիմնադրամի ռեկտորի տարեկան հաշվետվությունը, հիմնադրամի 2021 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունը (բյուջեի կատարողական), Հիմնադրամի 2022-2026 թվականների Ռազմավարական ծրագիրը, Հիմնադրամի 2022 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը, Հիմնադրամի 2022-2026 թվականների Ռազմավարական ծրագրից բխող պլան–ժամանակացույցը, 2021 թվականի տարեկան ֆինանսական և աուդիտորական հաշվետվությունները:

Հաշվետու տարվա ընթացքում իրականացրել է Գիտական խորհրդի 19 նիստ, ընդունվել է 95 որոշում: Գիտական խորհրդի հաստատման է ներկայացվել Գիտական խորհրդի աշխատակարգը և Ռեկտորատի աշխատակարգը, որոնք հաստատվել են 31.08.2022 թվականի Գիտական խորհրդի նիստի թիվ 132-Լ և թիվ 133-Լ որոշումներով: Աշխատակարգերը ուժի մեջ են մտնելու 2022 թվականի սեպտեմբերի 1-ից:

Կառավարման և հաշվետվողականության համակարգի բարելավում

2021-2022 ուստարում ՀՖԿՍՊԻ–ի գործունեությունը նպատակաուղղված էր բուհի 2022-2026 թթ. Ռազմավարական ծրագրով նախատեսված գործողությունների պլան–ժամանակացույցի մշակման և ներդրման իրականացմանը, ինստիտուտի կառուցվածքի և վարչակառավարչական գործառույթների բարելավմանը:

2019 թ" դեկտեմբերին բուհում ներդրվել է կազմակերպչական նոր կառուցվածք:

Ռազմավարական ծրագրով նախատեսված Նպատակ 3 այն է՝ Կառավարման արդյունավետության բարձրացում, մարդկային կապիտալի իրացում իր համապատասխան խնդիրներով՝

1. կատարելագործել կառավարման մասնակցային մոդելը,
2. ապահովել մրցունակ և առողջ աշխատանքային միջավայր՝ կարողունակ մասնագետներով, բացահայտել և զարգացնել անձնակազմի մասնագիտական ներուժը,
3. մշակել սեփական կադրային դպրոցի ստեղծման կառուցակարգեր:

Համաձայն 2019 թ. ներդրված կազմակերպական նոր կառուցվածքի կառավարման օղակների միջև հաստատվել են հորիզոնական և ինտեգրացված կապեր, որոնք նախկինում մասնատված էին: Կառավարման հորիզոնական մակարդակում ամրապնդվել են վերահսկման, հաշվետվողականության գործառույթները, ամրագրվել են հակակշիռների և փոխզսպումների մեխանիզմները, ներդրվել են փոխներգործության մեխանիզմներ կառուցվածքային միավորների միջև:

ՀՖԿՍՊԻ-ի որդեգրած քաղաքականությունը և վարչարարության ներկայիս գործունեությունն իրականացվում է որակի կառավարման (P-D-C-A cycle) (ՊԻԳԲ) փուլային մոդելի կիրառմամբ՝ համապատասխան ընթացակարգերով:

Հաշվետու տարում պլանավորվել և իրականացվել է արդյունավետ կառավարման համակարգի համար անհրաժեշտ ներքին իրավական ակտերի, ընթացակարգերի և կանոնակարգերի մշակում և հաստատում, ինչը համապատասխանում է որակի ապահովման կառավարման ՊԻԳԲ շրջափուլին:

Վերանայվել են Ինստիտուտի «Աշխատանքային էթիկայի կանոններ»-ը և «Աշխատանքային էթիկայի հանձնաժողովի ձևավորման, գործունության և գործառույթների իրականցման կանոնակարգ»-ը:

Հիշյալ կարգերի վերանայման և ներպետական մյուս բուհերի փորձի ուսումնասիրության արդյունքում այդ երկու փաստաթղթերը միավորվել են մեկ փաստաթղթի ներքո և մշակվել է բոլորովին նոր ակտ՝ «Աշխատանքային էթիկայի կանոնագիրք»-ը, որը հաստատվել է Գիտական խորհրդի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N 72-Լ որոշմամբ: Կանոնագրքի մշակմամբ սահմանվել են էթիկայի սկզբունքները, առավել հստակեցվել են աշխատակիցների վարքագծի պարտադիր կանոնները, ինչպես նաև սահմանվել են, թե վարքագծի որ դրսևորումներն են համարվում աշխատանքային էթիկայի խախտում, սահմանվել է նաև Էթիկայի հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը և գործառույթները:

Էթիկայի հանձնաժողովի աշխատանքային գործունեության շրջանակներում, մշակվել են ուսանողի վարքագծի կանոնները, որոնցով սահմանվել են ուսանողի էթիկայի պարտադիր կանոնները և ուսանողին արգելված վարքագիծը: Վերը նշված փաստաթղթի հաստատումը նախատեսվում է 2022-2023 ուստարում:

Հաշվետու ժամանակաշրջանում վերանայվել են նաև Ինստիտուտի «Ներքին կարգապահական կանոններ»-ը, որի արդյունքում, կանոնները լրացվել են նոր՝ 9.1 գլխով, այն է՝ «Կարգապահական պատասխանատվություն»:

2021-2022 ուսումնական տարում վերջնական մշակվել և Գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացվել «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական, գիտական և վարչական անձնակազմերի թափուր պաշտոնների համալրման ընթացակարգ»-ը (Համալրման ընթացակարգ): Համալրման ընթացակարգը հաստատվել է Գիտական խորհրդի 2022 թվականի մայիսի 25-ի N 119-Լ որոշմամբ:

Համալրման ընթացակարգի հաստատման արդյունքում՝ մեկ փաստաթղթում մեկտեղվել են «Վարչական համակազմի աշխատանքի ընդունման և պայմանագրերի լուծման ընթացակարգ»-ը և «Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգ»-ը:

Համալրման ընթացակարգը մշակվել է ներպետական և արտասահմանյան մի շարք բուհերի փորձի ուսումնասիրման հիման վրա՝ Գիտական քարտուղարի հետ

համատեղ համագործակցության արդյունքում և մինչ հաստատվելն ուղարկվել է Ինստիտուտի ներքին շահակիցների և կառուցվածքային ստորաբաժանումների կարծիքին:

Համալրման ընթացակարգի մշակմամբ անդրադարձ է կատարվել թափուր պաշտոնների բացահայտմանը, տարանջատվել և առավել մանրամասնորեն նկարագրվել են տարբեր պաշտոնների համալրման ընթացակարգերը, հստակեցվել են որոշ պաշտոններին առաջադրվող պահանջները: Արդյունքում Ինստիտուտում համալրման գործընթացը դարձել է առավել կանոնակարգված և հստակ պահանջներով:

2021-2022 ուստարում մշակվել և Գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացվել **«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանումների և վարչական աշխատակիցների տարեկան աշխատանքների պլանավորման և կառուցվածքային ստորաբաժանումների և աշխատակիցների աշխատանքային գործունեության տարեկան արդյունքների ամփոփման և գնահատման ընթացակարգ»-ը** (այսուհետ՝ Կատարողականի գնահատման ընթացակարգ): Կատարողականի գնահատման ընթացակարգը հաստատվել է Գիտական խորհրդի 2022 թվականի օգոստոսի 31-ի N 130-Լ որոշմամբ:

Կատարողականի գնահատման ընթացակարգի հաստատման արդյունքում ուժը կորցրած է ճանաչվել «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի վարչական, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմերի աշխատողների աշխատանքային գործունեության գնահատման և խրախուսման կարգ»-ը:

Կատարողականի գնահատման ընթացակարգը մշակվել է ներպետական և արտասահմանյան մի շարք բուհերի փորձի ուսումնասիրման հիման վրա՝ Գիտական քարտուղարի հետ համատեղ համագործակցության արդյունքում:

Կատարողականի գնահատման ընթացակարգի մշակմամբ կանոնակարգվել է աշխատանքային պլանների հաստատման, կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարված աշխատանքների ամփոփման կարգն ու ժամկետները, աշխատակիցների աշխատանքային գործունեության արդյունքների ամփոփման և գնահատման կարգը, մշակվել են նաև աշխատակիցների գնահատման տարբերակված սանդղակներ:

Կատարողականի գնահատման ընթացակարգի հաստատման արդյունքում ակնկալվում է ստանալ աշխատակիցների կատարած աշխատանքի օբյեկտիվ պատկեր, որին կհետևի նաև օբյեկտիվ գնահատական:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և հաստատվել են հետևյալ կանոնակարգերը

1. Բակալավրիատի բաժնի կանոնակարգ 29.04.2022թ թիվ 102-Լ որոշում (խմբագրվել է բաժնի կողմից)

2. Ուսումնական գործընթացների կառավարման բաժնի կանոնակարգ 29.04.2022 թիվ 106-Լ որոշում (խմբագրվել է բաժնի կողմից)
3. Նախապատրաստական, լրացուցիչ և շարունակական կրթության բաժնի կանոնակարգ 30.06.2022թ թիվ 124-լ որոշում (ամբողջությամբ փոփոխվել է բաժնի կողմից
4. Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի բաժնի կանոնակարգ 23.09.2021թ թիվ 56 որոշում (խմբագրվել է բաժնի կողմից)
5. Ներքին անվտանգության բաժնի կանոնակարգ 25.05.2022թ թիվ 116–Լ որոշում (մշակվել է բաժնի կողմից)
6. Հանրային և ինստիտուցիոնալ կապերի բաժնի կանոնակարգ 29.04.2022 թ թիվ 105-Լ որոշում (մշակվել է բաժնի կողմից)
7. Պրակտիկայի բաժնի կանոնակարգ 30.06.2022թ թիվ 121-Լ որոշում (մշակվել է բաժնի կողմից)
8. Կրթության էլեկտրոնային կառավարման և վիճակագրության բաժնի կանոնակարգ 25.05.2022թ թիվ 115-լ որոշում (մշակվել է բաժնի կողմից)
9. Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի կանոնակարգ 25.05.2022թ թիվ 117-Լ որոշում (մշակվել է բաժնի կողմից)
10. Կարիերայի բաժնի կանոնակարգ 25.05.2022թ թիվ 118-Լ որոշում (մշակվել է բաժնի կողմից)
11. Արխիվի կանոնակարգ 30.06.2022թ թիվ 125-Լ որոշման (մշակվել է բաժնի կողմից)
12. Գնումների համակարգման բաժնի կանոնակարգ 30.06.2022թ թիվ 126-Լ (մշակվել է բաժնի կողմից)
13. Հատուկ բաժնի կանոնակարգ 30.06.2022թ թիվ 127-Լ որոշման (մշակվել է բաժնի կողմից)
14. Հաշվապահական հաշվառման բաժնի կանոնակարգ 30.06.2022թ թիվ 128-Լ որոշման (մշակվել է բաժնի կողմից)
15. Գիտահամակարգող բաժնի կանոնակարգ 29.04.2022թ 103-Լ որոշում (խմբագրվել է բաժնի կողմից)
16. Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժնի կանոնակարգ 29.04.2022թ 104–լ որոշում (ամբողջութամբ խմբագրվել է բաժնի կողմից)
17. Գրադարանի կանոնակարգ 23.09.2021թ թիվ 57-Լ որոշում (մշակվել է բաժնի կողմից)
18. ԱՏՍՏԿ ֆակուլտետի կանոնակարգ 23.09.2021թ թիվ 48-Լ որոշում (խմբագրվել է բաժնի կողմից)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 1752-Ն որոշումը, համաձայն որի փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի թիվ 1183-ն որոշման մեջ, խմբագրել է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի «Վճարովի

համակարգում սովորողների ուսման վճարի (լրիվ և մասնակի), պետության կողմից ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման (փոխատեղման) և ներբուհական անվանական կրթաթոշակների հատկացման քաղաքականությունը և ընթացակարգը» և ներկայացվել է Գիտական խորհրդի հաստատմանը: Ընթացակարգը հաստատվել է 28.12.2021 թվականի Գիտական խորհրդի նիստում:

Աշխատակիցների համալրման գործընթաց

ՄՌԿԸ բաժինը, կազմակերպչական առումով, իր մասնակցությունն է ունեցել Ինստիտուտի թափուր հաստիքների համալրման գործընթացում:

Ինստիտուտի ռեկտորի հանձնարարությամբ և Ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումներից ստացվող պահանջների հիման վրա, ՄՌԿԸ բաժնի կողմից հայտարարված մրցույթների և դրանցով կազմված հայտարարությունների թիվը 2021-2022 ուսումնական տարում ութն է:

Հայտարարված մրցույթներով ստացվել է ընդհանուր 169 ինքնակենսագրական: Վերջիններս ըստ էության ուսումնասիրվելուց հետո, ըստ ենթակայության ուղարկվել են համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարներին, որոնց առաջարկությամբ թեկնածուների մի մասը հրավիրվել է մրցույթի հերթական փուլերին:

2021-2022 ուսումնական տարում պրոֆեսորդասախոսական անձնակազմի համալրումն իրականացվել է արդեն նոր հաստատված «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական, գիտական և վարչական անձնակազմերի թափուր պաշտոնների համալրման ընթացակարգ»-ով սահմանված պահաջներին համապատասխան:

Ինստիտուտի 14 ամբիոնների դասախոսի 66 և պրոֆեսորի 2 թափուր հաստիքների համալրման նպատակով հայտարարվել է մրցույթ՝ 38 մասնագիտացումների գծով: Մրցույթի արդյունքում համալրվել է դասախոսի 56 և պրոֆեսորի 2 թափուր հաստիք:

ՄՌԿԸ բաժնի կողմից կազմակերպվել և անցկացվել է ՊԴԱ կազմի թափուր հաստիքների համար դիմած և մրցույթի 1-ին փուլը հաղթահարած թվով 77 թեկնածուների օտար լեզվի և համակարգչային գիտելիքների իմացության թեստավորում:

ՄՌԿԸ բաժնի ղեկավարը համապատասխան հանձնաժողովների կազմում իր մասնակցությունն է ունեցել ինչպես 77 թեկնածուների 144 թեստերի (օտար լեզու/համակարգիչ) ստուգման աշխատանքներին, այնպես էլ 77 թեկնածուների բանավոր հարցազրույցներին:

Վարչական թափուր հաստիքների համալրման համար հայտարարված 3 և Քոլեջի ուսուցիչների թափուր հաստիքների համալրման համար հայտարարված մրցույթները բաղկացած են եղել միայն հարցազույցի (Քոլեջի տնօրենի դեպքում նաև

պրեզենտացիայի փուլ) փուլից: ՄՌԿԸ բաժնի ղեկավարն իր մասնակցությունն ունեցել է 29 թեկնածուների հարցազրույցներին:

Համալրման ընթացակարգի ընդունումից հետո հայտարարված 3 մրցույթներով ՄՌԿԸ բաժնի կողմից կազմակերպվել և անցկացվել է վարչական հաստքիների համար դիմած թեկնածուներից 5-ի օտար լեզվի և համակարգչային գիտելիքների իմացության թեստավորում:

ՄՌԿԸ բաժնի ղեկավարը համապատասխան հանձնաժողովների կազմում իր մասնակցությունն է ունեցել ինչպես 5 թեկնածուների թեստերի ստուգման աշխատանքներին, այնպես էլ բանավոր հարցազրույցներին:

Վերը թվարկված բոլոր մրցույթներն ամփոփվել են համապատասխան արձանագրությունների կազմամբ, որոնց թիվը 8-ն է:

Հայտարարված մրցույթներով, որպես թույլ կողմ, առանձնացվել է որոշակի նեղ մասնագիտությունների գծով շատ ցածր դիմելիությունը:

Պաշտոնի նկարագրերի կազմում

2021-2022 ուսումնական տարում ՄՌԿԸ բաժնի մասնակցությամբ, Ուսումնագիտական և Արտաքին կապերի և ռազմավարական ծրագրերի գծով պրոռեկտորների և շահագրգիռ ստորաբաժանումների ղեկավարների հետ համագործակցությամբ, վերանայվել, հստակեցվել և լրամշակվել են Բակալավրիատի, Ուսումնական գործընթացների կառավարման, Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի, Գիտահամակարգող, Նախապատրաստական, լրացուցիչ և շարունակական կրթության, Կրթության էլեկտրոնային կառավարման և վիճակագրության, Պրակտիկայի, Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի, ինչպես նաև Հանրային և ինստիտուցիոնալ կապերի բաժինների ղեկավարների և աշխատակիցների գործառույթները:

Հաշվետու ժամանակահատվածում ՄՌԿԸ բաժնի կողմից մշակվել և ռեկտորի հաստատմանն է ներկայացվել ասիստենտի, դասախոսի, դոցենտի, պրոֆեսորի և ամբիոնի վարիչի պաշտոնների նկարագրերը:

Աշխատողների ատեստավորում, վերապատրաստումներ

Հաշվի առնելով, որ դասախոսի թափուր հաստիքների համալրման համար հայտարարված մրցույթին դիմած թեկնածուները Ինստիտուտի գործող աշխատակիցներն էին, իսկ մրցույթի պարտադիր պայման էր օտար լեզվի և համակարգչային գիտելիքների իմացությունը և ստուգարքային թեստերի լրացումը, Ինստիտուտի 74 աշխատակիցներ անցել են լեզվի և համակարգչային գիտելիքների իմացության ատեստավորում, որի արդյունքները հիմք կհանդիսանան որոշ աշխատակիցների համար վերապատրաստման ներքին դասընթացներ կազմակերպելու համար:

ՄՌԿԸ բաժնի կողմից մշակվել է աշխատակիցների վերապատրաստման կարիքների վերհանման հատուկ ձևաչափ և ուղարկվել է Ինստիտուտի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին:

Հաշվետու ժամանակահատվածում ՄՌԿԸ բաժնի ղեկավարը վերապատրաստվել է «Գործք» ընկերության կազմակերպած և 4 փուլից բաղկացած «Մարդկային ռեսուրսների կառավարում» թեմայով 48 ժամ տևողությամբ դասընթացի շրջանակներում:

Դասընթացի ընթացքում ուսումնասիրվել են 4 հիմնական թեմաներ, որոնք վերաբերել են աշխատատեղի համալրմանը, կատարողականի կառավարմանը և աշխատակիցների կատարողականի գնահատմանը, աշխատակիցների վերապատրաստմանն ու զարգացմանը, ինչպես նաև աշխատանքի անվտանգությանը:

2021-2022 ուսումնական տարում ՄՌԿԸ բաժինն իր մասնակցություն է ունեցել Ինստիտուտում 2 փուլով կազմակերպված «Ապրելակերպի բժշկություն» սեմինար-դասընթացին, որին ընդհանուր առմամբ մասնակից է դարձել Ինստիտուտի 31 աշխատակից:

Հաստիքացուցակի հաստատում

Վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմերի հաստիքացուցակները վերանայվել և հաստատվել են 2021 թ. նոյեմբերի 1-ին:

Հաստիքացուցակների վերանայման արդյունքում 2021 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ Ինստիտոտի ընդհանուր հաստիքների թիվը 322 է, որից վարչական հաստիքների թիվը՝ 165, պրոֆեսորադասախոսական անձնակազմի հաստիքների թիվը՝ 157:

2022 թվականի օգոստոսի 31-ի դրությամբ Ինստիտուտի աշխատողների թիվը 350 է, որից 148–ը՝ վարչական աշխատողներ, իսկ 202–ը՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատողներ:

Ներքին համատեղությամբ աշխատողների թիվը 2021-2022 ուսումնական տարում 25 է:

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԻ 2021-2022 ՈՒՍՏԱՐԻ



Աշխատողների շարժ

Ինստիտուտում վարչական և պրոֆեսորադասախոսական համակազմի համալրման և աշխատանքից ազատման գործընթացն իրականացվել է ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջներին և Ինստիտուտի ներքին իրավական փաստաթղթերին համապատասխան:

2021-2022 ուսումնական տարում ընդունվել է 24, աշխատանքից ազատվել է 50 աշխատող, որից 20-ը սեփական դիմումի համաձայն, 28-ը՝ ծանուցումով, 2-ը՝ մահվան փաստով:



Կազմվել է 185 նոր աշխատանքային պայմանագիր և գործող աշխատանքային պայմանագրերը փոփոխող և լուծող 433 համաձայնագիր:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմից՝

1) 18 հոգի ունեն պրոֆեսորի գիտական կոչում, որոնցից 5-ը՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 4-ը՝ դոկտորի գիտական աստիճան,
2) 53 հոգի ունեն դոցենտի գիտական կոչում, որոնցից 39-ը՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան,
3) 3 հոգի ունեն գիտությունների թեկնածուի աստիճան:

ՀՖԿՍՊԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ՝ ԸՍՏ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԵՎ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ



ՀՖԿՍՊԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ



ԳՈՐԾԱՏՈՒ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՖԿՍՊԻ ՄԿԾ-ՈՒՄ

Հետադարձ կապի մշակույթի ձևավորում. ներքին շահակիցների հետ հարցումների իրականացում, վերհանված խնդիրների հետևողական լուծում, հետադարձ կապի հիման վրա բարելավումների/բարեփոխումների նախագծում, որոշումների կայացման հիմնավորվածության ամրագրում:

2021-2022 թթ. բուհում կանոնավոր կերպով իրականացվում են ներքին և արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի հարցումներ, իսկ որոշ դեպքերում՝ տվյալները հավաքագրվել, սակայն չեն վերլուծվել: Արդյունքում՝ վավեր գործիքակազմով բացահայտված չեն շահակիցների բուն կարիքները, հետևաբար տեսանելի չեն այդ կարիքների ու խնդիրների լուծմանն ուղղված գործողությունների արդյունքները:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ռազմավարական նպատակով նախատեսված են հետևյալ խնդիրները՝

1. Բարելավել և արդիականացնել կրթական ծրագրերի որակը,
2. Ապահովել հետազոտակենտրոն և պրակտիկակենտրոն ուսուցում,
3. Արդիականացնել ՀՖԿՍՊԻ–ի ուսումնական գործընթացի կառավարման համակարգը,
4. Ստեղծել կրթական հավասար պայմաններ բոլոր սոցիալական խմբերի համար,
5. Ապահովել 5-րդ մակարդակի մասնագիտական կրթություն, հիմնել միջին մասնագիտական ուսումնական հաստատություն (ՄՄՈՒՀ) :

ՀՖԿՍՊԻ–ի մասնագիտությունները, մասնագիտական կրթական ծրագրերը և ուսանողական համակազմը

ՀՖԿՍՊԻ երկու ֆակուլտետում իրականացվում է 16 կրթական ծրագրեր, որոնցից 4-ը՝ բակալավրի, 9-ը՝ մագիստրոսի, 3-ը՝ ասպիրանտուրայի կրթական աստիճաններում:

Բակալավրի կրթական ծրագրեր

Հ	Մասնագիտություն և դասիչ	Կրթական ծրագիր և դասիչ	Որակավորում
1.	Մասնագիտական մանկավարժություն՝ 011401.00.6	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ՝ 011401.09.6	Մանկավարժության բակալավր առկա/հեռակա
		Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա՝ 011401.10.6	
2.	Սպորտ՝ 101401.00.6	Առողջարարական ֆիզիկական կուլտուրա – կինեզիոլոգիա՝ 101401.02.6	Սպորտի բակալավր առկա/հեռակա
3.	Լրագրություն՝ 032101.00.6	Լրագրություն՝ 032101.01.6	Լրագրության բակալավր առկա/հեռակա

Սույն հաշվետվությամբ ներկայացվում է 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում Բակալավրիատի բաժնի /այսուհետ՝ Բաժին/ կողմից իրականացված աշխատանքների ընդհանուր նկարագիրը:

Հաշվետու 2021-2022 ուսումնական տարին, Բակալավրիատի բաժնի համար առանձնահատուկ էր մի շարք առումներով: Մասնավորապես, 2020-2021 ուսումնական տարում բաժինը գործել է որպես ուսումնագիտական բաժին, իսկ 2021-2022 ուսումնական տարում առանձնացել և դարձել Բակալավրիատի բաժին: Բաժինն իր գործառույթներն իրականացնում է ՀՀ օրենսդրության, Ինստիտուտի կանոնադրության և ներքին իրավական ակտերի համաձայն:

Բաժինը 2021-2022 ուսումնական տարում իր գործունեությունն իրականացրել է հետևյալ ուղղություններով՝

1. Ուսանողներին առնչվող աշխատանքների կազմակերպում և համակարգում
2. ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից եկող գրությունների պատասխանների պատրաստում և պահանջվող փաստաթղթերի տրամադրում
3. Քննական տեղեկագրերի պատրաստում, արդյունքների մուտքագրում՝ կրեդիտային համակարգ
4. Ուսումնական գործընթացների թվայնացում:

Ստորև աղյուսակով ներկայացված է 2021-2022 ուստարվա բակալավրի ընդունելության ցուցանիշները ըստ ֆակուլտետների, մասնագիտացումների և ուսման ձևի:

Աղյուսակ 1

2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ



Աղյուսակ 2

2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ ԲԱԿԱԼԱՎՐԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ



ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ուսանողների հետ աշխատանքը բավականին ծավալուն, բայց միաժամանակ արդյունավետ է իրականացվել բակալավրիատի բաժնի ֆակուլտետի պատասխանատուների աշխատանքի շնորհիվ:

Բաժնի կողմից ընդունվել է ուսանողների ավելի քան 1000 դիմում, որոնք տարբեր բնույթի բովանդակություն են պարունակում (ազատման, վերականգնման, հեռացման, Ազգային բանակ զորակոչվելու, տեղափոխման): Համագործակցելով այլ բաժինների հետ ընթացք է տրվել ուսանողների բոլոր դիմումներին: Տրամադրվել է ուսանողի կարգավիճակի վերաբերյալ 550 տեղեկանք:

Բակալավրիատի բաժնի կողմից ուսանողների մասով տրվել է 875 հրաման՝ 178 անբարվարար առաջադիմության, 297 վերականգման, 73 իր դիմումի, 269 ազգային բանակ զորակոչվելու, 1 մահվան դեպքի, 137 ներբուհական ակադեմիական շարժունության, փոխատեղման, ընդունելության, ավարտման, ուսման վճարի մասնակի փոխհատուցման և այլն հրամաններ:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՇԱՐԺԸ

2021-2022 ուսումնական տարում բակալավրում սովորել է 2158 ուսանող, որից 979–ը՝ առկա համակարգում, 1179–ը՝ հեռակա համակարգում, այդ թվում՝ 59 սփյուռքահայ և օտարերկրացի: Ցածր առաջադիմության պատճառով բուհից հեռացվել է 178 ուսանող:

2021-2022 ուսումնական տարում Ինստիտուտն ավարտել է բակալավրի 429 ուսանող, այդ թվում 12 սփյուռքահայ և օտարերկրացի, 184-ը՝ առկա, 243–ը՝ հեռակա և 2 ուսանող նախորդ տարիներից:

Ստորև ներկայացված է 2021-2022 ուսումնական տարվա ուսանողների թիվն՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի.

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՇԱՐԺԸ



2021-2022 ուսումնական տարում ինստիտուտն ավարտել է բակալավրի 429 ուսանող, որից 185-ը՝ առկա, 244–ը՝ հեռակա:

ԱՎԱՐՏԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱԿԱԶՄԸ



Ստորև ներկայացված է 2021-2022 ուսումնական տարվա բակալավրի ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:

ԲԱԿԱԼԱՎՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱԿԱԶՄԸ՝ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԻ

Հ	Մասնագիտություն	2021-2022 ուստարի					
		Առկա			Հեռակա		
		ար.	իգ.	ընդ.	ար.	իգ.	ընդ.
1	Մասնագիտական մանկավարժություն	650	96	**746**	727	50	777
2	Սպորտ	135	53	**188**	73	50	123
3	Լրագրություն	29	16	**45**	16	1	17
	Ընդամենը	**814**	**165**	**979**	**1054**	**125**	**1179**

2021-2022 ուսումնական տարում վիճակագրական տվյալներով Ինստիտուտում վերականգնվել է 297 ուսանող: 2021-2022 ուսումնական տարում զորակոչվել է 269 ուսանող:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՃԱԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ

2021-2022 ուսումնական տարում բակալավրիատի բաժինը, ֆակուլտետները, ամբիոնները, նպաստել են հաճախումների և առաջադիմության հարցերը բավարար հիմքերի վրա դնելուն: Ուսանողների հետ անցկացվել են խորհրդակցություններ, զրույցներ, կոնսուլտացիաներ:

Երկու կիսամյակների հաճախելիությունը համապատասխանաբար կազմել է 1-ին կիսամյակ՝ առկա 71,8%, հեռակա 65.5%, 2-րդ կիսամյակ առկա՝ 69,7%, հեռակա՝ 79,2%:



Ուսանողների առաջադիմությունը ԱՏՍՏԿ ֆակուլտետում առկա ուսուցման ձևում համապատասխանաբար կազմել է՝ գերազանց 13.2%, լավ՝ 34.2%, բավարար՝ 47.3%, անբավարար՝ 5.4%, իսկ հեռակա ուսուցման ձևում կազմել է՝ գերազանց՝ 11.8%, լավ՝ 27.4%, բավարար՝ 54.2%, անբավարար՝ 6.7%:

ԱՏՍՏԿ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ



ՄՄ ֆակուլտետի առկա ուսուցման համակարգում ուսանողների առաջադիմությունը համապատասխանաբար կազմել է՝ գերազանց՝ 8.7%, լավ՝ 25%, բավարար՝ 56%, անբավարար՝ 10.3%, իսկ ՄՄ ֆակուլտետի հեռակա ուսուցման ձևում՝ գերազանց՝ 6%, լավ՝ 25.5%, բավարար՝ 56.5%, անբավարար՝ 12%:

ՄՄ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ



ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2021 թ. նոյեմբերին «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամում տեղի ունեցան կառուցվածքային փոփոխություններ, որի արդյունքում որպես առանձին ստորաբաժանում սկսեց գործել Ուսումնական գործընթացների կառավարման բաժինը՝ բաղկացած ղեկավարից, գլխավոր մասնագետից և երկու մասնագետներից:

Ուսումնական գործընթացների կառավարման բաժնի անփոփոխ գործառույթներից զատ /դասատախտակների և քննատախտակների կազմում, հաստատում, քննությունների կազմակերպում, ուսումնական պլանների կազմում և հաստատում, ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցի կազմում և հաստատում, ՊԴԱ տարեկան բեռնվածության կազմում/ հարկ է առանձնացնել մի շարք նախաձեռնություններ, որոնց արդյունքում ուսումնական գործընթացը հավակնում է դառնալ առավել արդյունավետ և կազմակերպված : Մասնավորապես՝

2022թ. հունվարի 24-ից փետրվարի 1-ը ՀՖԿՍՊԻ-ի ռեկտորի, ուսումնագիտական գծով պրոռեկտորի և ուսումնական գործընթացների կառավարման բաժնի ղեկավարի մասնակցությամբ կազմակերպվեց հանդիպումների շարք ամբիոնների վարիչների և դասախոսների հետ, որի ընթացքում քննարկվեցին նախորդ քննաշրջանի արդյունքները, առաջարկներ արվեցին քննությունների անցկացման ձևաչափի, անցկացման կարգի վերաբերյալ, անդրադարձ կատարվեց գիտելիքների ստուգման

ժամանակ թեստերի և տոմսերի արդյունավետությանը, ռեկտորի կողմից առաջարկվեց անհրաժեշտության դեպքում կազմակերպել վերապատրաստման դասընթացներ՝ թեստերի կազմման հմտություններ ձևավորելու նպատակով: Հանդիպումների շարքը գնահատվեց բավականին արդյունավետ, քանի որ Ուսումնական գործընթացների կառավարման բաժինը հնարավորություն ունեցավ լսելու և ամփոփելու քննաշրջանի վերաբերյալ կարծիքները, իսկ ամբիոնների պատասխանատուների համար հնարավորինս հստակեցվեցին ծածկագրված քննությունների պարագայում գիտելիքների ստուգման առավել արդյունավետ և միասնական ձևի պահանջները:

- ՊԴԱ 2022-23 ուստարվա բեռնվածությունը կազմելիս դրանում ներառվեց նաև քննությունների բեռնվածությունը /2 կրեդիտ ունեցող առարկաների դեպքում 4 ուսանողը 1 ժամ, 3 և ավելի կրեդիտ ունեցող առարկաների դեպքում՝ 2 ուսանողը 1 ժամ հաշվարկով/: Նման մոտեցումը թույլ է տալիս ֆինանսական բաժնին ավելի ճշգրիտ պլանավորել բյուջեի համապատասխան բաժինը, ինչպես նաև խնայել դասախոսների և վարչական ռեսուրսի աշխատաժամանակը, որը ծախսվում է քննական տեղեկագրերը հաշվելու վրա:

- Ուսումնական գործընթացների կառավարման բաժնի կողմից 2021 թ. հուլիսին ամբիոններին ուղարկվել էր ՊԴԱ 2021-22 ուստարվա բեռնվածությունը: Հաշվետու տարում բաժնի նոր և ամենապատասխանատու գործառույթներից էր ողջ ուսումնական տարվա ընթացքում ՊԴԱ գործունեության կատարողական ակտերի ստուգումը և տարվա վերջում փաստացի կատարված ժամերի համադրումը բեռնվածությամբ նախատեսված ժամերի հետ: Արձանագրվել է, որ արձանագրված շեղումները վերաբերում էին բացառապես թերակատարումներին՝ պայմանավորված տոն օրերով, ինչպես նաև ուսանողների քիչ թվաքանակի արդյունքում խմբերի միավորմամբ:

- Բաժնի կանոնակարգված աշխատանքի և ճիշտ թայմ-մենեջմենթի արդյունքում, 2022 թ. ապրիլ ամսին Գիտխորհրդի հաստատմանը ներկայացվեցին 2022-23 ուստարվա ուսումնական պլանները, նույն ամսին բոլոր ամբիոնները ստացան ՊԴԱ տարեկան բեռնվածությունը, իսկ մայիսին՝ առկա բակալավրի և մագիստրատուրայի 2022-23 ուստարվա 1-ին կիսամյակի դասատախտակները:

Բաժնի մյուս գործառույթները, որոնք իրականացվել են 2021-22 ուստարվա ընթացքում, ներկայացված են ստորև՝

Առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրիատի և մագիստրատուրայի դասատախտակների կազմում և հաստատում - 10 դասատախտակ

Առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրիատի և մագիստրատուրայի դասատախտակների և քննատախտակների կազմում և հաստատում - 12 քննատախտակ

2021-22 ուստարվա 1-ին և 2-րդ կիսամյակների դասալսումների ժամանակացույցի կազմում և հաստատում - 2 ժամանակացույց

Ստուգարքների և քննությունների գործընթացի կազմակերպում - 746 քննության և ստուգարքի կազմակերպում

2022-23 ուստարվա ուսումնական պլանների մշակում, ներկայացում Գիտխորհրդի հաստատմանը – 24 ուսումնական պլան

2022-23 ուստարվա բեռնվածության կազմում - 14 ամբիոնի դասախոսների համար

2022-23 ուստարվա մատյանների պատրաստում - 1960 մատյան:

Պրակտիկայի կազմակերպում

Պրակտիկայի բաժինը Ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանում է և իր առջև դրված խնդիրների լուծման նպատակով սերտ համագործակցում է Ինստիտուտի այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ: Բաժնի հիմնական գործառույթներն են Ինստիտուտի բակալավրիատում և մագիստրատուրայում իրականացվող կրթական ծրագրերով նախատեսված պրակտիկաների նախապատրաստումը, կազմակերպումը, համակարգումը և վերահսկումը: Բաժինը ունի իր կանոնակարգը:

Հաշվետու ժամանակահատվածում բաժնի կողմից իրականացվել են բաժնի աշխատանքային պլանով նախատեսված բոլոր գործողությունները՝ կազմակերպվել, վերահսկվել և համապատասխան մեթոդական և կազմակերպչական օգնություն է ցուցաբերվել պրակտիկաների ընթացքում:

Ընդհանուր առմամբ պրակտիկաների կազմակերպման համար ներգրավված են շուրջ 200 տարբեր կազմակերպություններ՝ հանրակրթական դպրոցներ, մարզադպրոցներ, վերականգնողական կլինիկաներ, մարզական ակումբներ, հեռուստաընկերություններ, լրատվամիջոցներ և այլն: Կազմակերպված պրակտիկաների համար բաժնի կողմից նախապատրաստվել և պրակտիկաների ընթացքում օգտագործվել են համապատասխան փաստաթղթեր՝ մատյաններ, պրակտիկայի տետրեր, խմբերի ցուցակներ, պայմանագրեր: Շուրջ 50 ուսանողի համար կազմակերպվել է նաև տարբեր պրակտիկաների վերահանձնում:

Պրակտիկաների ընթացքը վերահսկվել է բաժնի, ռեկտորատի, դեկանատների և համապատասխան ամբիոնների կողմից: Պրակտիկաների ընթացքում մեթոդիստների հետ պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ կատարված աշխատանքները քննարկելու և առաջացող խնդիրները լուծելու նպատակով: Պրակտիկաների ավարտին Բակալավրիատի և Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժիններ են հանձնվել պրակտիկաների խմբերի գնահատված տեղեկագրերը:

Որակի ապահովման բաժնի կողմից իրականացվել է պրակտիկաներից ուսանողների բավարարվածության ֆոկուս–խմբային հետազոտություն: Նույն մեթոդով ուսումնասիրվել է նաև պրակտիկայի ղեկավարների/մեթոդիստների կարծիքները: Ներկայացված զեկույցի եզրակացություններում վեր են հանվել մի շարք խնդիրներ և կատարվել են առաջարկություններ, որոնք նկատի կառնվեն հետագա աշխատանքներում:

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Դասիչը	Մասնագիտությունը	Դասիչը կրթական ծրագիրը	Որակավորում
011401.00.7	Մասնագիտական մանկավարժություն	011401.09.7 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	**Մանկավարժության մագիստրոս** առկա/հեռակա
		011401.10.7 Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա	
101401.00.7	Սպորտ	101401.02.7 Առողջարարական ֆիզիկական կուլտուրա (կինեզիոլոգիա)	**Սպորտի մագիստրոս** առկա/հեռակա
		Ադապտիվ սպորտ՝ 101401.03.7	**Սպորտի մագիստրոս** հեռակա
032101.00.7	Լրագրություն	032101.01.7 Լրագրություն	**Լրագրության մագիստրոս** առկա/հեռակա
031301.00.7	Հոգեբանություն	031301.01.7 Հոգեբանություն	**Հոգեբանության մագիստրոս** առկա
041301.00.7	Կառավարում	041301.01.7 Մենեջմենտ	**Կառավարման մագիստրոս** առկա
041401.00.7	Շուկայագիտություն (մարկետինգ)	041401.01.7 Մարկետինգ	
101501.00.7	Զբոսաշրջություն	101501.06.7 Սպորտային տուրիզմ	**Զբոսաշրջության մագիստրոս** առկա/հեռակա

Մագիստրատուրայի 2021-2022 ուսումնական տարվա առկա ուսուցման համակարգի ընդունելությունն ընթացել է 2 փուլով և ընդհանուր հաշվարկով ընդունվել է 99 ուսանող՝ 8 կրթական ուղղություններից: Առաջին փուլով մագիստրատուրա է ընդունվել 31 ուսանող, բոլորն էլ անվճար առանց տարկետման իրավունքի, որից 1-ը նպատակային տեղի համար (Արցախից): Երկրորդ փուլով մագիստրատուրա է ընդունվել 68 ուսանող, որից 2-ը՝ Սփյուռքից: Երկրորդ փուլով ընդունվածներից 18-ը այլ բուհերի շրջանավարտներ են: Եղել է 2 վերականգնում՝ ազգային բանակից զորացրվելուց հետո (անվճար):

Մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգում ընդունելությունը ըստ կրթական ուղղությունների ունի հետևյալ պատկերը՝

Ինչ վերաբերում է Մագիստրատուրայի հեռակա ուսուցման համակարգի ընդունելությանը, պետք է նշել, որ ընթացիկ ուսումնական տարում ընդունվել է 24 ուսանող, որոնցից 16–ը այլ բուհերի շրջանավարտներ են:

Ըստ կրթական ուղղությունների ունենք հետևյալ պատկերը՝

Պետք է նշել, որ մագիստրատուրայի առկա ուսուցման վճարովի համակարգից իրենց դիմումի համաձայն ինստիտուտից ազատվել է 7 մագիստրանտ, անվճար համակարգից՝ 2 մագիստրանտ, 2 մագիստրանտ հեռացվել է բավարար կրեդիտներ չունենալու պատճառով և մեկ մագիստրանտ տեղափոխվել է այլ բուհ:

Ուսանողների հեռացումների հիմնական պատճառները	2021-2022	
	քանակը	**%**
Հեռացված ուսանողներ	17	15.04%
Ուսանողների հեռացումների հիմնական պատճառները	**քանակը**	**%**
Իր դիմումի համաձայն	10	58.82%
Հեռացված	7	41.18%

Այսպիսով, ընդհանուր առմամբ 2021-2022 ուսումնական տարում մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերում սովորում են 113 մագիստրանտ:

Ուսումնական գործընթացը, ինչպես նաև ուսանողների հաճախումները, մշտապես վերահսկվել են բաժնի և մասնագիտական ամբիոնների կողմից: Այս ուսումնական տարվա ընթացքում, շնորհիվ համատեղ աշխատանքի, ուսանողների հաճախումները բավարար են եղել:

Հաշվետու տարում որոշ կրթական ծրագրերում ապահովվել է բացարձակ առաջադիմություն, իսկ որոշների դեպքում նկատվել են առաջադիմության 50%-ի շեմից նվազման միտում: Առաջադիմությունը ներկայացվել է տարանջատված՝ ըստ կրթական ծրագրերի:

2021 թ. դեկտեմբերի 15-27-ը կազմակերպվել է հեռակա ուսուցմամբ շրջանավարտների մագիստրոսական թեզերի պաշտպանությունը, որոնց ընդհանուր թիվը 40 է: Մեկ հոգին նախորդ տարվա շրջանավարտ է, որպես երկտարեցի՝ իր դիմումի համաձայն, մասնակցել է թեզի պաշտպանությանը: Ըստ մասնագիտությունների հրավիրվել են հանձնաժողովի նախագահներ: «Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտության «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» և «Ֆիզիկական դաստիարակության տեսություն և տեխնոլոգիաներ» կրթական ուղղությունների հանձնաժողովի նախագահն էր Վանաձորի պետական համալսարանի Կրթական բարեփոխումների և վերապատրաստումների կենտրոնի ղեկավար, մ.գ.թ., դոցենտ Վաղինակ Նազարյանը, «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» կրթական ուղղության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովինը՝ ԵՊԲՀ «Ռեաբիլիտալոգիայի, ֆիզիոթերապիայի և սպորտային բժշկության» ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Անահիտ Իսախանյանը, «Լրագրություն» կրթական ուղղության հանձնաժողովինը՝ ԵՊՀ ակադեմիկոս, Հ. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Վ. Եղիազարյանը, «Ադապտիվ սպորտ» և «Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա» կրթական ուղղությունների հանձնաժողովներինը՝ ՀՊՄՀ հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի մ.գ.թ. Ի. Հարությունյանը:

Թեզերի պաշտպանության արդյունքները՝ ըստ կրթական ուղղությունների, ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Մագիստրատուրայի 2021-2022 ուստարվա հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման գնահատականները

№	ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՆԱԿԸ	ԿԱՐՄԻՐ ԴԻՊԼՈՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ		ԳԵՐԱ ԶԱՆՑ՝ 90-94 միավոր A		ԳԵՐԱ ԶԱՆՑ՝ 95-100 միավոր A+		ԼԱՎ՝ 80-84 միավոր B		ԼԱՎ՝ 85-89 միավոր B+		ԲԱՎԱՐԱՐ 60-69 միավոր C		ԲԱՎԱՐԱՐ 70-79 միավոր C+		Չեն ներկայացել	
			n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%
1.	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	28	14	50	16	57.1	6	21.4	1	5.5	3	16.6	-	-	2	11.1	-	-
2.	Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա	10	3	30	4	40	1	10	1	10	1	10	-	-	-	-	3	30
3.	Մարզական լրագրություն	1	-	-	-	-	1	100	-	-	-	-	-	-	-	-	-	-
4.	Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա	2	1	50	-	-	2	100	-	-	-	-	-	-	-	-	-	-
6.	Ադապտիվ սպորտ	2	-	-	2	100	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը		43	18	41.8	22	51.1	10	23.2	2	4.6	4	9.3	-	-	2	4.6	3	6.9

Ինչ վերաբերում է մագիստրոսական թեզերի արդիականությանն ու բովանդակությանը, պետք է նշել, որ մագիստրանտները՝ ըստ իրենց թեզերի ուղղվածության, կատարել են մեծածավալ և բազմակողմանի ուսումնասիրություններ և ըստ այդմ ստացել փորձարարական արժեքավոր տվյալներ:

2021-2022 ուսումնական տարվա մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի մագիստրոսական թեզերի պաշտպանությունն ընթացել է ըստ հաստատված ձևաչափի՝ հիմքում ունենալով ՀՀ ԿԳՄՍ նախարարության և Ինստիտուտի հրամանները:

Մագիստրատուրայի առկա ուսուցման շրջանավարտների մագիստրոսական թեզերի պաշտպանությունը տեղի է ունեցել Ինստիտուտի ռեկտորի 2022 թ. ապրիլի 19-ի №230-Լ և ապրիլի 26-ի №239-Լ հրամաններով հաստատված համապատասխան ժամանակացույցի և ընթացել է 2022 թ. մայիսի 13-31-ը ներառյալ:

Հաշվետու ուսումնական տարում մագիստրոսական թեզերի պաշտպանության համար ձևավորվել են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներ, և ըստ կրթական ուղղությունների՝ հրավիրվել են հանձնաժողովի նախագահներ:

Այսպես՝ «Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտության «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» կրթական ուղղության հանձնաժողովի գործունեությունը ղեկավարում էր Վանաձորի պետական համալսարանի Կրթական բարեփոխումների և վերապատրաստումների կենտրոնի ղեկավար, մ.գ.թ., դոցենտ

Վաղինակ Նազարյանը, «Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա» կրթական ուղղության հանձնաժողովի գործունեությունը՝ ՀՊՄՀ հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի մ.գ.թ. Ի. Հարությունյանը, «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» կրթական ուղղության հանձնաժողովի գործունեությունը՝ ԵՊԲՀ «Ռեաբիլիտալոգիայի, Ֆիզիոթերապիայի և սպորտային բժշկության» ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Անահիտ Իսախանյանը, «Հոգեբանություն» մասնագիտության հանձնաժողովի գործունեությունը՝ Երևանի պետական համալսարանի «Ընդհանուր հոգեբանության ամբիոնի» պրոֆեսոր, հ.գ.թ. Վարդուհի Պապոյանը, «Մենեջմենտ» և «Մարկետինգ» կրթական ուղղությունների հանձնաժողովի գործունեությունը՝ Եվրասիական ֆոնդային բորսաների միության գլխավոր քարտուղար, տ.գ.թ. Կ. Սարոյանը, «Զբոսաշրջություն» կրթական ուղղության հանձնաժողովի գործունեությունը՝ Զբոսաշրջության կոմիտեի խորհրդական, տ.գ.թ. Ռուզան Խաչատրյանը և «Մարզական լրագրություն» կրթական ուղղության հանձնաժողովի գործունեությունը՝ Հ. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Վ. Եղիազարյանը:

Բոլոր կրթական ուղղությունների հանձնաժողովների աշխատանքները սկսվել են առավոտյան ժամը 09^{30} և ավարտվել 15^{30}: Հանձնաժողովներում ամփոփիչ ատեստավորումն անցել է կազմակերպված, օբյեկտիվ գնահատմամբ, փոխադարձ հարգանքի մթնոլորտում: Բողոքարկում չի արձանագրվել:

Հաշվետու ուսումնական տարում մագիստրոսական թեզի պաշտպանությանը թույլատրվել են մասնակցել մագիստրատուրայի առկա ուսուցման ընդհանուր 91 մագիստրանտ: Որից «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» կրթական ուղղության երկու մագիստրանտ, որպես երկտարեցի՝ իրենց դիմումի համաձայն մասնակցել են թեզի պաշտպանությանը:

Թեզերի պաշտպանության արդյունքներն ըստ կրթական ուղղությունների ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Մագիստրատուրայի 2021-2022 ուստարվա առկա ուսուցման ամփոփիչ ատեստավորման գնահատականները

№	ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՆԱԿԸ	ԿԱՐՄԻՐ ԴԻՊԼՈՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ		ԳԵՐԱ ՀԱՆՑ՝ 90-94 միավոր A		ԳԵՐԱ ՀԱՆՑ՝ 95-100 միավոր A+		ԼԱՎ՝ 80-84 միավոր B		ԼԱՎ՝ 85-89 միավոր B+		ԲԱՎԱՐԱՐ 60-69 միավոր C		ԲԱՎԱՐԱՐ 70-79 միավոր C+		Չեն ներկայացել	
			n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%
1.	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	29	7	24.1	7	24.1	11	38	2	6.9	3	10.3	-	-	6	20.6	-	-
2.	Առողջարարա	32	15	46.8	9	28.1	8	25	6	18.7	1	3.1	-	-	8	25	-	-

	կան ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա																	
3.	Մարզական լրագրություն	3	3	100	-	-	3	100	-	-	-	-	-	-			-	-
4.	Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա	5	4	80	-	-	5	100	-	-	-	-	-	-	-	-	-	-
5.	Հոգեբանություն	5	5	100	-	-	5	100	-	-	-	-	-	-	-	-	-	-
6.	Մենեջմենտ	7	3	42.8	4	57.1	-	-	2	28.5	-	-	1	14.2				
7.	Մարկետինգ	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1	100	-	-
8.	Սպորտային տուրիզմ	9	4	44.4	6	66.6	-	-	-	-	-	-	3	33.3	-	-	-	-
Ընդամենը		91	41	45	26	28.5	32	35.1	10	10.9	4	4.3	4	4.3	15	16.4	-	-

2021-2022 ուսումնական տարվա սկզբում Ինստիտուտում ուսանել են պետական պատվերով 4 ասպիրանտներ (2-ը՝ առկա, 2-ը՝ հեռակա) և 17 հայցորդ:



2021-2022 ուստարում Ինստիտուտի հայցորդ է ձևակերպվել Նարեկ Էդուարդի Խաչատրյանը Ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնում ԺԳ.00.02 դասիչով «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ) մասնագիտությամբ, ինչպես նաև

Դավիթ Արայիկի Հակոբյանը՝ Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնում:

Հաշվետու տարում Ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի հայցորդ Էվելինա Էդուարդի Ղանթարչյանի հայցորդության հնգամյա ժամկետը ավարտվել է, իսկ հայցորդներ Այնաշ Տյուլյուբաևան (Ցիկլիկ մարզաձևերի ամբիոն), Եկատերինա Յուրտայևան, Մերուերտ Իմանբաևան, Իզաբելլա Ղազարյանը (Ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոն) և Եղիա Յայլյանը (Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոն)՝ ելնելով անձնական պատճառներից, դադարեցրել են հայցորդության ուսումնառությունը:

Այժմ Ինստիտուտում ուսանում են 4 ասպիրանտ (2-ը՝ առկա, 2-ը՝ հեռակա) և 13 հայցորդ (աղյուսակ 1):

Մասնագիտական որակավորման քննություն է հանձնել Ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի հայցորդ Նարեկ Արայիկի Էլոյանը (գիտական ղեկավար՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ելենա Հակոբյան) և պատրաստվում է նախնական փորձաքննությանը:

Հաշվետու ուստարում հաստատվել են ասպիրանտ Աննա Աշոտի Մարտիրոսյանի և հայցորդներ Մելինե Հրաչյայի Հովհաննիսյանի, Կարինե Ժորայի Հակոբյանի, Գոհար Աշոտի Գասպարյանի, Արմինե Գեղամի Նովրուզյանի և Նարեկ Էդուարդի Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեմաները և գիտական ղեկավարները:

2022թ. հունիսի 29-ին մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսության նախնական փորձաքննություն է անցել Ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի հայցորդ Սաթենիկ Գառնիկի Խաչատրյանը:

Հաշվետու տարում ասպիրանտների և հայցորդների համար կազմակերպվել է ուսումնական գործընթաց՝ հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերով, որոնք ավարտվել են քննություններով:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն է ներկայացվել հաշվետու տարում ընդունված, ավարտած և սովորող ասպիրանտների, դոկտորանտների, հայցորդների թվաքանակի և շարժի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն՝ համաձայն «Պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի» և «Վիճակագրական տեղեկությունների ներկայացման» ձևի և կարգի:

Աղյուսակ 1

Ինստիտուտի հայցորդների և ասպիրանտների

ՑՈՒՑԱԿ

Ամբիոնը	Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Գիտական ղեկավար	Մասնագիտությունը և դասիչը	Թեմայի անվանումը
ՀԱՅՑՈՐԴ 2018թ.					
ՖԴՏ, մեթոդիկա և ԱՖԿ	1	Խաչատրյան Սաթենիկ Գառնիկի	Ֆրունզիկ Ղազարյան	ԺԳ. 00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ)	Առողջ ապրելակերպի դասավանդման մեթոդիկան ֆիզիկական կուլտուրայի դասերին
	2	Էլոյան Նարեկ Արայիկի	Ելենա Հակոբյան		Տուրիստական պատրաստության մեթոդական առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում
2019թ.					
ՖԴՏ, մեթոդիկա և ԱՖԿ	3	Մատվիևսկայա Անաստասիա	Սուսաննա Հովեյան	ԺԳ. 00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ)	Հոգեկան զարգացման խանգարումներ ունեցող երեխաների սոցիալական ներառումը ֆիզիկական կուլտուրայի միջոցներով
Բժշկակենսաբանական գիտություններ	4	Բոլոտովա Ելենա	Նունե Տեր-Մարգարյան		Աուտիզմով երեխաների ֆիզիկական դաստիարակության մեթոդիկայի առանձնահատկությունները տարածական կողմնորոշման հմտությունների ձևավորման փորձում
ՖԴՏ, մեթոդիկա և ԱՖԿ	5	Վդովին Դմիտրի	Ելենա Հակոբյան		Աուտիզմով երեխաների ծնողների ուսուցման մեթոդիկան ֆիզիկական դաստիարակության հիմունքներին
Սպորտի մանկավարժության և հոգեբանություն	6	Մուրադյան Գոհար	Աշոտ Չատինյան		Ուսանող-լրագրողների մասնագիտական կոմպետենցիաների հսկման և գնահատման համակարգը ֆիզկուլտուրային-մարզական բուհերում

2020թ.					
Սպորտի մանկավարժության և հոգեբանություն	7	Աբգարյան Վարսիկ	Աշոտ Չատինյան	ԺԳ. 00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ)	Դեռահաս մարզիկների սոցիալականացման գործընթացի բարելավման մանկավարժական տեխնոլոգիան (բռբցքամարտի օրինակով)
2021թ.					
Մարզական լրագրություն	8	Նովրուզյան Արմինե Գեղամի	Աշոտ Չատինյան	ԺԳ. 00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ)	7-9 տարեկան սպորտային պարուհիների առաջատար շարժողական ընդունակությունների մշակման առանձնահատկությունները
Սպորտի մանկավարժության և հոգեբանություն	9	Հովհաննիսյան Մելինե Հրաչյայի	Լուսինե Ստեփանյան	ԺԹ. 00.01 «Ընդհանուր հոգեբա-նություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն»	Կոգնիտիվ գործառույթների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները ուշադրության շեղումներով անձանց մոտ
	10	Հակոբյան Կարինե Ժորայի	Լուսինե Ստեփանյան		Մասնագիտական այրման հոգեֆիզիոլոգիական գործոնները երկարատև սթրեսածին իրավիճակների ազդեցության պայմաններում
	11	Գասպարյան Գոհար Աշոտի	Հարություն Բաբայան		Անձնային գործոնների դերը շարժողական ակտիվության և առողջ ապրելակերպի համատեքստում
2022թ					
ՖԴՏ, մեթոդիկա և ԱՖԿ	12	Խաչատրյան Նարեկ Էդուարդի	Ելենա Հակոբյան	ԺԳ. 00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ)	Влияние интервального метода тренировки с применением эргогенного средства на скоростную выносливость футболистов
Սպորտի մանկավարժության և հոգեբանություն	13	Հակոբյան Դավիթ Արայիկի			

ԱՍՊԻՐԱՆՏ					
ՖԴՏ, մեթոդիկա և ԱՖԿ	1	Հակոբյան Հովհաննես Հակոբի (հեռակա, պպ)	Արմեն Հակոբյան	ԺԳ. 00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ)	Պատանի շախմատիստների ֆիզիկական պատրաստության կատարելագործման ուղիները
Մարմն. և սպ. պարեր	2	Պետրոսյան Արմեն Տիգրանի (հեռակա, պպ)	Ֆրունզիկ Ղազարյան		Կրտսեր դպրոցականների շարժողական ընդունակությունների մշակման մեթոդիկան մեթոդիկան մարմնամարզության միջոցներով
ՖԴՏ, մեթոդիկա և ԱՖԿ	3	Ավետիսյան Արման Վաչագանի (առկա, պպ)	Աշոտ Չատինյան		10-12 տարեկան ձյուդոիստների ֆիզիկական պատրաստության գործընթացի կատարելագործումը քրոսֆիթի տարրերի կիրառմամբ
Բժշկակենսաբանական գիտությունների ամբիոն	4	Մարտիրոսյան Աննա Աշոտի (առկա, պպ)	Լուսինե Ստեփանյան	Գ.00.09 «Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա»	Սպորտային կողմնորոշման հոգեֆիզիոլոգիական ասպեկտները
Բժշկակենսաբանական գիտությունների ամբիոն	5	Մկրտչյան Լիլիթ Կարենի (առկա, պպ)		Գ.00.09 «Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա»	
Սպորտի մանկավարժության և հոգեբանություն	6	Սինանյան Աննա Համլետի (առկա, պպ)		ԺԹ. 00.01 «Ընդհանուր հոգեբանու-թյուն, հոգեբանության տեսություն և պատ-մություն, անձի հոգեբանություն»	

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ռազմավարական նպատակով նախատեսված է հետևյալ խնդիրները.

1. Մշակել և ներդնել գիտահետազոտական գործունեությանը խթանող մեխանիզմներ,
2. Նպաստել ուսանողների գիտական և նորարարական ակտիվության ու ստեղծագործական նախաձեռնությունների զարգացմանը,
3. Սահմանել ՀՖԿՍՊԻ–ի գիտահետազոտական գործունեության գերակա ուղղությունները, նպատակները և դրանց հասնելու ճանապարհային քարտեզը,
4. Նպաստել ՀՖԿՍՊԻ–ի գիտական հետազոտությունների արդյունքների կիրառելիության բարձրացմանը և առևտրայնացմանը,
5. Ստեղծել ոլորտային գերազանցության լաբորատորիաներ՝ SPIN–off–երի ստեղծման ակնկալիքով,
6. Ապահովել գիտահետազոտական մտքի միջազգայնացում և համատեղ ծրագրերի մշակում:

Վերջին 2-3 տարիների ընթացքում Ինստիտուտում իրականացվել են լայնածավալ կառուցվածքային–կազմակերպչական և կադրային փոփոխություններ, որոնք նպաստել են բուհի գործունեության կատարելագործմանը, այդ թվում նաև՝ գիտական գործունեության բարելավմանը: Ձևավորվել են նոր գիտական ուղղություններ՝

1. ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները
2. ֆիզիկական կուլտուրայի և սպորտի սոցիալ–հասարակական, պատմամշակութային հիմնախնդիրները
3. ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության բժշկակենսաբանական հիմնախնդիրները
4. արտադրական ալպինիզմ,
5. մարզիկների հոգեբանական աջակցում և սպասարկում,
6. առողջ ապրելակերպի ձևավորման հիմնախնդիրներ,
7. ադապտիվ ֆիզիկական կուլտուրա,
8. մարզական լրագրություն:

Գիտահամակարգող բաժինը, որպես կառուցվածքային ստորաբաժանում, ստեղծվել է 2021 թվականի նոյեմբերի 1–ին (հրաման N 544-Ա 07) որպես «Կոչումներ շնորհելու և հրատարակչախմբագրական» խորհրդի իրավահաջորդ (հրաման N 46, 12.12.2019 թ.): Վերանայվել է բաժնի կանոնակարգը, որը հաստատվել է Գիտական խորհրդի 2022 թվականի ապրիլի 29–ի նիստում:

Գիտահամակարգող բաժնի նպատակն է՝ համակարգել Ինստիտուտի գիտական գործունեության աշխատանքները, նպաստել գիտական ներուժի բացահայտմանն ու կատարելագործմանը:

Բաժնի խնդիրներն են.

- բացահայտել Ինստիտուտի գիտական ներուժը,
- երիտասարդության շրջանում խթանել գիտության զարգացումը,
- ուսումնասիրել արդի գիտության ոլորտային ուղղությունները,
- աջակցել դրամաշնորհային ծրագրերի կազմմանն ու իրականացմանը:

Գիտահամակարգող բաժինը 2021-2022 ուստարում իրականացրել է հետևյալ գործառույթները.

- գիտական հետազոտությունների ուղղությունների մշակում,
- Ինստիտուտի տարեկան գիտաժողովի ծրագրի կազմում, աշխատանքների համակարգում,
- ներբուհական, հանրապետական, միջազգային գիտահետազոտական թեմաների ուսումնասիրություն,
- ինստիտուտի երիտասարդ դասախոսների, ասպիրանտների հետ սեմինարների, քննարկումների կազմակերպում և անցկացում,
- գրախոսությունների աշխատանքների համակարգում,
- գիտական աշխատանքների ներբուհական մրցույթների անցկացում,
- կազմում և համապատասխան մարմնի հաստատմանն է ներկայացնում բաժնի գործունեությանը վերաբերող ներքին իրավական ակտերի և դրանց փոփոխությունների նախագծերը,
- բաժնի գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվության կազմում,
- գիտական դրամաշնորհ տրամադրող կազմակերպությունների հետ աշխատանքների իրականացում, նորարարական գիտահետազոտական ծրագրերի ներգրավում,
- բաժնին ուղղված Ինստիտուտի ռեկտորի հրամանների, գրավոր և բանավոր հանձնարարականների, խորհրդի որոշումների կատարում:

Հաշվետու ուսումնական տարում կազմակերպվել են երիտասարդ դասախոսների գիտական սեմինարներ, որում ընդգրկվել են ինստիտուտի մինչև 40 տարեկան 74 դասախոս: Գիտական սեմինարների անցկացման համար կազմվել է համապատասխան ծրագիր և ժամանակացույց, որ ներկայացված է ստորև.

Աղյուսակ 1

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ
2021–2022 ՈՒՍՏԱՐՎԱ ԳԻՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

№	Դասախոսի ազգանուն, անուն, հայրանուն	Դասախոսության թեմա	Ժամկետ
1	Խիթարյան Դ. Ս. Ռեկտոր, մ.գ.թ., պրոֆեսոր,	Բուհի հետագա զարգացման հեռանկարները	27 հունվարի, 2022 թ.
2	Ստեփանյան Լ. Ս. Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, կ.գ.թ., դոցենտ,	Ուսումնադաստիարակչական և գիտական գործընթացի կատարելագործման ուղիները	3 մարտի, 2022 թ.
3.	Ղազարյան Ֆ. Գ. Գիտահամակարգող բաժնի ղեկավար, մ.գ. դ., պրոֆեսոր	Ուսուցումը ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության համակարգում	31 մարտի, 2022 թ.
4	Հակոբյան Ե. Ս. մ.գ. դ., պրոֆեսոր	Շարժումների կուլտուրայի հիմնախնդիրը և իրականացման ուղիները	28 ապրիլի, 2022 թ.
5.	Բաբայան Հ. Ա. հոգ. գիտ. թեկ., պրոֆեսոր	Հոգեբանության դերը սպորտի մասնագետների պատրաստության գործում	26 մայիսի, 2022 թ.

Աղյուսակ 2

2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ
ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ԳՀ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

N	Ամբիոն	Տեղա-կան հրատ.	Միջազ. հրատ. Sco-pus	Մենագր., ձեռնարկ	Գիտաժ. մասն.	Վերա-պատ րաստում-ներ	Դրամաշ. ծրագրեր	Արտերկ գիտա–ժողով. մասն.
ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ, ՍՊՈՐՏԱՅԻՆ ՏՈՒՐԻԶՄԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ								
1.	Ֆիզիկական վերականգնման	4	6, որից՝ **Sco-pus–3**	2/ուսմեթ. ձեռն./	4	5	2	-
2.	Սպորտի կառ. և մարկետինգի	-	-	-	-	-		
3.	Մարզական լրագրության	6	-	2 / 1 մենագր., 1 մեթ. ձեռ./	3	7	1	-
4.	Սպորտային տուրիզմի և փրկ.գործի	1	1	1/ուսմեթ. ձեռն./	-	-	-	-
5.	Սպորտի մանկ. և հոգեբան.	16	2	2 / 1 մենագր., 1 մեթ. ձեռ./	3	5	-	-

ՄԱՐԶՉԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ								
	Ըմբշամ. և արևելյան մարզաձևերի	3	1	1 մենագր.	1	-	1	-
	Ֆուտբոլի	7	2	-	-	-	-	-
	Ծանրամարտի, բռնցքամարտի և սուսերամ.	1	-	-	-	-	-	-
	Մարզախաղերի	3	-	1/ուսմեթ. ձեռն./	-	-	-	-
	Մարմնամարզ., սպորտ. պարերի, գեղ. և շախմատի	2	1	-	-	-	-	-
	Ցիկլիկ մարզաձևերի	7	1	-	1	3	-	-
	ՖԴՏՄ և ԱՖԿ	16	4	1/ուսմեթ. ձեռն./	*1*	3	-	-
ՀԱՄԱԲՈՒՀԱԿԱՆ ԱՄԲԻՈՆՆԵՐ								
	Հասարակակ. և հումանիտար գիտությունների	5	3	2/ուսմեթ. ձեռն./	3	35	1	-
	Բժշկակենսաբ. գիտությունների	4	17	1/ուսմեթ. ձեռն./	4	4	1	-

SCOPUS, WoS

Աղյուսակ 3

2021 թվ. «Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ» պարբերականի ամփոփ տեղեկագիր

№	ԱՄԲԻՈՆԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՔԱՆԱԿ
	ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ, ՍՊՈՐՏԱՅԻՆ ՏՈՒՐԻԶՄԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ	
1	Ֆիզիկական վերականգնման	-
2	Սպորտի կառավարման և մարկետինգի	-
3	Մարզական լրագրության	3
4	Սպորտային տուրիզմի և փրկարարական գործի	1
5	Սպորտի մանկկավարժության և հոգեբանության	10 (որից՝ 1–ը համատեղ+ՖԴՏ)
6	Հասարակագիտության և հումանիտար գիտությունների	-
7	Բժշկակենսաբանական գիտությունների	1
	ԸՆԴԱՄԵՆԸ	15
	ՄԱՐԶՉԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ	
1	Ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի	2
2	Ֆուտբոլի	2
3	Ծանրամարտի, բռնցքամարտի և սուսերամարտի	1
4	Մարզախաղերի	2
5	Մարմնամարզության, սպորտային պարերի, գեղասահքի և շախմատի	2
6	Ցիկլիկ մարզաձևերի	4
7	ՖԴՏՄ և ԱՖԿ	5(+1՝ հոգ.+ՖԴՏ համատեղ)
	ԸՆԴԱՄԵՆԸ	18
	ԱՅԼ ԲՈՒՀԵՐ	
	ԵՊՀ	2
	Շիրակի պետական համալսարան	1
	Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարան	1
	ՀՀ պաշտպանության նախարարություն	1
	Իջևանի թիվ 5 հիմնական դպրոց	1
	Սոֆիայի (Բուլղարիա) Վասիլի Լևսկու անվան ազգային սպորտային ակադեմիա	1
	ԸՆԴԱՄԵՆԸ	**7**
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ	**40**

2021թ. «Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ» խորագրով պարբերականի ամփոփիչ արդյունքները.

Մանրազնին փորձաքննությունից ու գրախոսությունից հետո տպագրության **<u>երաշխավորվեց</u> <u>40 գիտական հոդված,</u>** այդ թվում՝ 33–ը (82,5 %)՝ ՀՖԿՍՊԻ–ից, 7–ը (17,5%)՝ այլ բուհերից, կազմակերպություններից և երկրներից՝ **Երևանի պետական համալսարան (2), Շիրակի պետական համալսարան, Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարան, ՀՀ պաշտպանության նախարարություն, Իջևանի թիվ 5 հիմնական դպրոց, Սոֆիայի (Բուլղարիա) Վասիլի Լևսկու անվան ազգային սպորտային ակադեմիա, «Գերմիոնա» կրթական համալիր (համատեղ), «Գազպրոմ Հայաստան» (համատեղ):**

Մերժվել է 2 հոդված (5%), համահեղինակությամբ տպագրվել է 15–ը (37,5%), հայերեն՝ 34 հոդված (85%), ռուսերեն՝ 5 (12,5%) և անգլերեն՝ 1 հոդված (2,5%):

Հարկ է արձանագրել, որ «Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ» խորագրով պարբերականի N 1 (3) և 2 (4) հատորներում հոդված տպագրած բոլոր հեղինակներն ու համահեղինակներն արժանացել են հավաստագրերի:

2021 թվականին տեղի ունեցավ նաև ՀՖԿՍՊԻ–ի ամենամյա ուսանողական գիտաժողովը՝ «Սպորտ, առողջություն, կրթություն» խորագրով՝ նվիրված Արցախյան գոյամարտի հերոսներին և ՀՀ անկախության հռչակման 30–ամյակին:

Ուսանողական գիտաժողովին հրավիրվել էին նաև հանրապետության այլ բուհերի ուսանողներ:

Ընդհանուր առմամբ ամբիոններից գիտաժողովներին զեկուցումներով հանդես եկան 49 ուսանող: Լավագույն աշխատանքները երաշխավորվեցին՝ ներկայացնելու ինստիտուտի ուսանողական գիտաժողովին:

Գիտաժողովին մասնակցելու ամփոփ տեղեկագիրը՝ ստորև.

Գիտաժողովին հաջորդեց «Սպորտ, առողջություն, կրթություն» խորագրով ուսանողական տարեգրքի լույսընծայումը (14 հոդված)՝ նվիրված Արցախյան գոյամարտի հերոսներին և ՀՀ անկախության հռչակման 30–ամյակին: Հոդվածագիր բոլոր ուսանողներն արժանացան հավաստագրերի:

2021-2022 ուստարում բաժինն ուսումնասիրել և գիտական խորհրդի երաշխավորմանն է ներկայացրել հետևյալ ուսումնամեթոդական ձեռնարկները և դասագիրքը.

1. Մուրադյան Ա. Ե., Ֆիզիկական թերապիան և առողջարարական ֆիթնեսը մանկաբարձությունում, Դասագիրք, 101 էջ (Ֆիզիկական վերականգնման ամբիոն),
2. Ղազարյան Ֆ. Գ., Ֆիզիկական դաստիարակության տեսության ներածություն, 109 էջ (ՖԴ տեսության և ԱՖԿ),
3. Դավթյան Ե., Դավթյան Ա., Անվասայլակով բասկետբոլիստների պատրաստության առանձնահատկությունները, 111 էջ (Մարզախաղերի ամբիոն),
4. Խաչատրյան Լ. Գ., Ֆիզիկական ռեաբիլիտացիան ներքին հիվանդությունների բուժման և կանխարգելման գործընթացում, 290 էջ (Ֆիզիկական վերականգնման ամբիոն),
5. Հակոբյան Ե. Գ., Շախմատի դասավանդման մեթոդաբանության հիմնահարցերը, 106 էջ (Մարմնամարզության, սպորտային պարերի և շախմատի ամբիոն),
6. Զաքարյան Ն., Ղուլյան Կ., Ճշմարիտյան Մ., ֆիզիկական կուլտուրայի և սպորտի էկոլոգիա, 46 էջ (Բժշկակենսաբանական գիտությունների ամբիոն),
7. Գևորգյան Ն., Սպորտը և «դժվար» դեռահասների վարքի շտկումը, 87 էջ (Մանկավարժության և հոգեբանության ամբիոն),
8. Բաղդասարյան Ա., Հակոբյան Լ., Մկրտիչյան Ա., Ժուռնալիստի վարպետություն, 88 էջ (Մարզական լրագրության ամբիոն),
9. Սարգսյան Է. Թ., Մովսիսյան Լ. Հ., Ձնահյուսերի առաջացման պատճառները և վտանգները, 117 էջ (Սպորտային տուրիզմի և փրկարարական գործի ամբիոն):

«Սպորտ Կաբ» գիտահետազոտական կենտրոնի գործունեությունը հիմնված է Ինստիտուտի ռազմավարության մեջ ներառված գիտահետազոտական առաջնահերթությունների, ինչպես նաև ինստիտուցիոնալ կամ արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող հետազոտական ծրագրերի ժամանակացույցի վրա:

Կենտրոնի գիտահետազոտական աշխատանքներն ընթանում են ըստ ներկայացվող հայտերի՝ ընտրելով համապատասխան մեթոդներ և սարքավորումներ: «Սպորտ Կաբի» գործառույթների մեջ է մտնում նաև ուսանողների, մագիստրանտների և ասպիրանտների մեթոդական և հետազոտական աշխատանքների կազմակերպման գործընթացը՝ ապահովելով այդ աշխատանքների անհրաժեշտ ծրագրային և տեխնիկական սպասարկումը:

Կենտրոնում իրականացվում է մարզիկների ֆունկցիոնալ թեստավորում, որը ներառում է սիրտանոթային և շնչառական ֆունկցիաների, մարմնակազմության և հենաշարժիչ համակարգի կենսամեխանիկական ցուցանիշների գնահատում:

Կենտրոնի ղեկավարի անմիջական համակարգմամբ հետազոտական աշխատանքներում ներգրավված են երկու տեխնիկներ, մեկական գիտաշխատող,

բուժքույր և լաբորանտ: Գիտահետազոտական և ֆունկցիոնալ գնահատման աշխատանքներին կենտրոնի աշխատակիցները մասնակցում են թիմային սկզբունքով:

«Սպորտ Կաբը» իր աշխատանքները սկսել է ընթացիկ ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում՝ փետրվար ամսից: Գործունեությունը սկսելուն պես կենտրոնի ղեկավարը և աշխատակիցները մշակել են տարբեր հետազոտական ծրագրեր և դիմել տարբեր կազմակերպությունների արտաքին ֆինանսական օժանդակություն ստանալու համար: Ընթացիկ տարում դրական պատասխան է ստացվել միայն Հայկական ազգային կրթության և գիտության հիմնադրամից, որի ֆինանսավորմամբ կենտրոնում իրականացվում է հետազոտական ծրագիր վերականգնողական գիտության ոլորտում:

«Սպորտ Կաբի» աշխատակիցների թիմը իրականացնում է նաև հետազոտական ծրագիր, որում ներառված են ձյուդո մարզաձևի տարբեր մարզադպրոցների սաներ: Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնում հետազոտվել են 106 մարզիկներ: Այս ծրագիրը, որի սկիզբը դրվել է ընթացիկ տարում, բավականին ծավալուն է և ունի մեկից ավել հետազոտական նպատակներ: Ծրագրի միջոցով փորձ է արվում պարզել պատանի ձյուդոիստների ֆունկցիոնալ վիճակի և կատարողության վրա շնչառական համավարակի ազդեցությունը: Միաժամանակ, ծրագրի հեռավոր նպատակն է իրականացնել ձյուդոյի տարբեր մոտեցումների, մարզումային տարբեր ռազմավարությունների համեմատական վերլուծությունը՝ հիմք ընդունելով տարբեր մարզադպրոցներից ստացված ֆունկցիոնալ գնահատման տվյալները:

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Ռազմավավարական նպատակով նախատեսված է հետևյալ խնդիրները՝

1. Ապահովել ՀՖԿՍՊԻ–ի ֆինանսական մուտքերի բազմազանություն, ֆինանսական միջոցների անհրաժեշտ ներհոսք,
2. Զարգացնել ֆինանսական պլանավորման համակարգ, կատարել ֆինանսների նպատակային բաշխում, բարձրացնել ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման արդյունավետությունը,
3. Բարելավել և արդիականացնել ՀՖԿՍՊԻ–ի շենքային պայմանները, բարձրացնել կիրառման արդյունավետությունը:

Նախատեսված է զարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ լսարանային, լաբորատոր պայմանները, բազմազանել Ինստիտուտի ֆինանսական աղբյուրները և դրանք նպատակաուղղել հաստատության զարգացման կարիքներին:

Դիտարկվող ժամանակահատվածում բուհում իրականացվել են հիմնանորոգման ծավալուն աշխատանքներ: Վերանորոգման և շինարարական աշխատանքներ են իրականացվել ՀՖԿՍՊԻ-ի տարբեր մասնաշենքերում մասնավորապես ՝

1. Վերանորոգվել է ինստիտուտի 1-ին մասնաշենքի 1–ին հարկում գտնվող գրադարանը ամբողջությամբ (157.8մ²): Վերանորոգման համար ծախսվել է 8,180,033 ՀՀ դրամ:

2. Կահավորվել է ամբողջությամբ գրադարանը, որի արժեքը կազմում է 9.649.350 ՀՀ դրամ:

3. Վերանորոգվել է Ինստիտուտի 1-ին մասնաշենքի 1–ին հարկում գտնվող միջանցքից 150 մ² մակերեսով տարածք, որի վրա ծախսվել է 1.952.000 ՀՀ դրամ:

4. Վերանորոգվել և կահավորվել է Ինստիտուտի 1-ին մասնաշենքի 2–րդ հարկում գտնվող 203 լսարանը ամբողջությամբ, վերազինվել է տեխնիկական միջոցներով (դյուրակիր համակարգիչ, օդորակիչ, պրոյեկտոր):

5. Վերանորոգվել է Ինստիտուտի 1-ին մասնաշենքի 2–րդ հարկում գտնվող լրագրության ամբիոնն ամբողջությամբ 80մ² և Ինստիտուտի 2-րդ մասնաշենքի 8–րդ հարկը ամբողջությամբ (330.8մ²), որը իր մեջ ներառում է երեք լսարանային սենյակ, մեկ դասախոսական սենյակ, մեկ ամբիոնի վարչի համար նախատեսված սենյակ և ընդունարան, մեկ աշխատանքային սենյակ, երկու սանհանգույց:

Որոնց վրա ծախսվել է 26.381.136 ՀՀ դրամ:

6.Վերանորոգվել է Ինստիտուտի 1-ին մասնաշենքի 1–ին հարկի սպասասրահը և ձախակողմյան հատվածը (Քոլեջ) որը իր մեջ ներառում է հինգ լսարանային սենյակ, երկու դասախոսական սենյակ, մեկ տնօրենի համար նախատեսված սենյակ, երեք սանհանգույց նախկին երկուսի փոխարեն: Ամբողջությամբ 679.8մ² մակերեսով տարածք, որի վրա ծախսվել է 21.278.584 ՀՀ դրամ:

7. Կահավորվել են Ինստիտուտի 1-ին մասնաշենքի 1–ին հարկը (Քոլեջ) ամբողջությամբ:

8. Ինստիտուտի տարբեր սենյակներում տեղադրվել են թվով 4 հատ օդորակիչներ, որի համար ծախսվել է 893.700 ՀՀ դրամ:

9. Վերանորոգվել է Ինստիտուտին պատկանող կաթսայատունը, որի համար ծախսվել է 920.000 ՀՀ դրամ:

Հիմնանորոգման և ենթակառուցվածքների արդիականացման համար հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է 68.361.103 ՀՀ դրամ

Ուսումնական կարիքների բավարարման ու արդյունավետ պլանավորման նպատակով ամբիոնների և համապատասխան ստորաբաժանումների կողմից ներկայացվել են պահանաջագրեր և զեկուցագրեր, որոնց հիման վրա ձեռք են բերվել անհրաժեշտ ռեսուրսներ: Ներկայացված պահանջագրերի մեծ թիվը ցույց է տալիս, որ բուհում եղել է տեխնիկական անհրաժեշտ վերազինումների և հագեցվածության պակաս:

Համապատասխան տեխնիկական միջոցներով և սարքավորումներով լրացուցիչ ապահովման ու թարմացման անհրաժեշտությունը հիմնավորող պահանջագրերը, որպես կանոն, բավարարվել են և հետևողական կերպով ընթացք է տրվել անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման գործընթացին:

Այսպիսով՝ լսարաններն ու ուսումնական լաբորատորիաները տեխնոլոգիապես վերազինելու համար 2021-2022 ուստարվա ընթացքում կատարվել է 6.982.830 միլիոն դրամի ներդրում, որի շրջանակում ձեռք է բերվել համակարգչային գույք, համակարգչային պարագաներ, դյուրակիր համակարգիչներ, բազմաֆունկցիոնալ տպագրական սարքեր, տեսահսկման սարքեր, տեսախցիկներ, WEB և շարժական տեսախցիկներ, խոսափողեր և ականջակալեր:



Ներկայացված գծապատկերից երևում է, որ կայուն հենքի վրա են դրվել հիմնանորոգման ու վերանորոգման աշխատանքներն ու նյութատեխնիկական հիմնական միջոցների, սարքավորումների ձեռքբերումը, որի նպատակն է բարելավել ուսումնական և աշխատանքային միջավայրը: Ընդհանուր միտումն առանձին ուղղություններով ծախսերի ավելացումն է՝ պայմանավորված տվյալ տարվա նպատակադրումներով և առաջնահերթություններով:

Թեև բուհում առկա են կրթական գործընթացի կազմակերպման համար բավարար պայմաններ, սակայն իրականացվող ՄԿԾ-ների պահանջներին համապատասխան ուսումնական ու աշխատանքային միջավայրի շարունակական բարելավումը մնում է ռազմավարական կարևոր նպատակ: Լսարաններից շատերը դեռևս հարմարեցված չեն ինտերակտիվ մեթոդներ կիրառելու և գործնական դասեր կազմակերպելու համար, իսկ Smart գրատախտակների և համակարգչով ու պրոյեկտորով հագեցած լսարանների քանակը սակավաթիվ է:

Մարզադահլիճներում առկա մարզային գույքը մաշված է, դահլիճին կից հանդերձարանները փոքր են, կահավորված չեն անհրաժեշտ գույքով և ունեն հիմնանորոգման կարիք: Սանիտարահիգենիկ նորմերին համապատասխանելու տեսանկյունից ևս մարզադահլիճների սանհանգույցները վատ վիճակում են:

Թեև ֆինանսական միջոցները կառավարվում են հնարավորինս նպատակային, այդուհանդերձ ֆինանսական հատկացումների բաշխման, կառավարման և օգտագործման արդյունավետության բարձրացումն ընթացիկ գերակայություն է և գտնվում է ՀՖԿՍՊԻ-ի ռեկտորի և համապատասխան ստորաբաժանումների ղեկավարության ուշադրության կենտրոնում:

Ֆինանսական մուտքերի դիվերսիֆիկացումը ևս օրակարգային հարց է, որի լուծման համար տարվում են Ինստիտուտի մատուցած ծառայությունների և իրականացվող ծրագրերի առևտրայնացման, վճարովի ծառայությունների տեսականին ու ծավալներն ընդլայնելու և այդ ծառայությունների եկամտաբերությունը բարձրացնելու, կրթական, հետազոտական և հանրային ծառայությունների ոլորտներում հայտարարվող միջազգային դրամաշնորհային ծրագրերին բուհի մասնակցությունն ակտիվացնելու գործընթացներ:

Ընդհանուր եկամուտների մեջ դրամաշնորհներից ստացված եկամուտների ծավալը անհամեմատ աճել է՝ կազմելով ընդհանուր եկամուտների 7%-ը, իսկ լրացուցիչ կրթության ծավալը կազմել է 0.7%:



Արդյունքում ունենք վերափոխված գրադարանային միջավայր:

ՀՖԿՍՊԻ-ի կազմակերպական կառուցվածքում իրականացված փոփոխությունների արդյունքում գրադարանի զարգացումը բուհում դիտարկվում է իբրև ռազմավարական ուղղություն: Ներկայումս մշակվում է գրադարանի զարգացման ծրագիր, որը հնարավորություն կտա բարելավել գրադարանային ֆոնդի համալրումները: Նախատեսվում են բարեփոխումներ գրադարանային սպասարկման, գրադարանային ֆոնդի թվայնացման, տեղական միջգրադարանային և միջազգային գրադարանային ցանցերի, գիտատեղեկատվական շտեմարանների հետ համագործակցության ձևավորման և զարգացման ուղղություններով:

Հաշվետու տարում ամբողջականացվել է հիմնական ուսումնական գրականության թվայնացման և գրադարանի էլեկտրոնային քարտարանի ձևավորման գործողությունների փաթեթը: Գրադարանը բաղկացած է ընթերցասրահից, սպասարկման և կոնֆերանս–սրահներից: Գրքային ֆոնդը գտնվում է ընթերցասրահում և կոնֆերանս–սրահում: Գրադարանն ունի 2.398 ընթերցող՝ 2.158 ուսանող, 240 աշխատակից:

Գրքերի քանակն այժմ 33.146 միավոր է: Շարունակվում է գրադարանային ֆոնդի համալրումն անհրաժեշտ և պահանջված գրականությամբ: Գրադարանը նվիրատվության կարգով ստացել է 71 միավոր գիրք:

Մշակման փուլում է գրադարանի զարգացման հայեցակարգը, որով նախատեսվում է ստեղծել էլեկտրոնային ռեսուրսների ներբուհական պորտալ, ընդլայնել գրադարանի մասնակցությունը միջազգային գրադարանային ցանցերին, բարձրացնել ուսանողների և դասախոսական կազմի մասնակցությունը՝ տեղեկատվական ռեսուրսների պլանավորման և զարգացման աշխատանքներին:

Գրադարանային ֆոնդի համալրումը կատարվում է ներքևից վերև եկող առաջարկություններով. ամբիոնների և այլ ենթակառուցվածքների կողմից ներկայացվում է համապատասխան պահանջարկը, որը բավարարվում է նախապես հատկացված գումարներով: Արդյունքում՝ ակտիվացել է համագործակցությունը ամբիոնների հետ, առցանց գրախանութներից գնումներ իրականացնելուց առաջ ամբիոններից հավաքագրվել է ժամանակակից պահանջված մասնագիտական հայալեզու և օտարալեզու գրականության անհրաժեշտ ցանկը:

Ինստիտուտի գրադարանի զարգացման համար կարևոր է տեղեկատվական հոսքերի ընդլայնումը՝ առավել արդիական գիտական և ուսումնամեթոդական տեղեկատվություն տրամադրելու նպատակով: Այդ նույն նպատակով ստեղծվել է էլեկտրոնային գրադարանը: Օրակարգային խնդիր է ՀՀ էլեկտրոնային գրադարանների հետ համագործակցության հաստատումը և էլեկտրոնային քարտարանի ստեղծումը:

Գրադարանային միջավայրի վերափոխման աշխատանքների շրջանակում նախատեսվում է ստեղծել քննարկումների համար առանձին սենյակներ, ճեմասրահում «փափուկ» հատվածներ քննարկումների համար: Գրադարանում սպասարկումը կիրականացվի բաց դարակների սկզբունքով:

Գրադարանը նպատակ ունի նաև կատարել հետևյալ աշխատանքները.

1. Օտարել ողջ մաշված, արդիականությունը կորցրած գրականությունը, հանձնել մակուլատուրա՝ ձեռք բերել նոր գրքեր: Դիմել ՀՀ ԿԳՄՍ նախարարություն՝ նոր գրքեր ձեռք բերելու համար: Հաշվառել մերժումների քանակը և դրա հիման վրա կազմակերպել համալրման աշխատանքներ:
2. Գրադարանի վեբ-կայքի պատրաստում: Ակտիվ գործարկել էլեկտրոնային կայքը, մեծացնել էլեկտրոնային գրականության հասանելիությունը:
3. «Գրադարանը՝ ինչպես ինտելեկտուալ զարգացման կենտրոն». տարածք՝ նախատեսված կլոր սեղանների, դասախոսությունների, սեմինարների, կոնֆերանսների, գիտական թեզերի պաշտպանության համար:
4. Կատարել դասախոսների հեղինակած գրքերի շնորհանդեսներ, որոնք կոգևորեն և՛ դասախոսին, և՛ ուսանողին: Ստեղծել այնպիսի շտեմարան, որը կօգնի ուսանողին դյուրությամբ պատրաստվել քննություններին:
5. Համագործակցել այլ գրադարանների հետ, փորձի փոխանակման նպատակով ակտիվ ներգրավվելով վերապատրաստման բոլոր ծրագրերին:
6. Իրականացնել թրեյնինգներ սպորտային բովանդակությամբ՝ նոր հրատարակությունների վերաբերյալ:
7. Պատրաստել կարծիքների հարթակ, որտեղ ուսանողները կարող են ներկայացնել իրենց առաջարկները և դժգոհությունները:
8. Ստեղծել գրքափոխանակության անկյուն (դասախոսությունները ևս կարող են ներառվել գրադարանի ֆոնդում՝ ամրապնդելով գրադարան - ամբիոն կապը):

ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

1. Միջազգայնացման գործընթացի ընդլայնում և ամրապնդում ռազմավարական նպատակով սահմանված է ընդլայնել ՀՖԿՍՊԻ–ի միջազգայնացմանն ուղղված գործընթացները՝ ապահովելով բուհի շարունակական ակտիվ մասնակցությունը միջազգային ինտեգրման գործընթացներին:

2016 թվականից ՀՖԿՍՊԻ–ում գործել է Միջազգային և գիտատեղեկատվական կենտրոնը, որի հիմքի վրա 2019 թ. դեկտեմբերին ստեղծվել է Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի բաժինը (այսուհետ՝ ՄՀԶԾ), որը համակարգում է Արտաքին կապերի և ռազմավարական ծրագրերի գծով պրոռեկտորը:

Բաժինն իրականացրել է՝

- արտասահմանյան ուսումնական հաստատությունների և գիտական կենտրոնների հետ համագործակցության պայմանագրերի և համաձայնագրերի բանակցային գործընթացների կազմակերպում,
- միջազգային ծրագրերի իրականացման կազմակերպում

- ՄՀԶԾ բաժնի կանոնակարգի հաստատում
- ՀՀ ԿԳՄՍ նախարարության համապատասխան ստորաբաժանման հետ համագործակցելով՝ արտասահմանյան ուսանողների ամենամյա ընտրության և ընդունելության կազմակերպում
- արտասահմանյան երկրների ֆիզիկական կուլտուրայի ակադեմիաների, ինստիտուտների և մարզական կազմակերպությունների հետ համագործակցում
- Ինստիտուտի և օտարերկրյա բուհերի, գիտական հիմնարկների, գերատեսչությունների, իրավաբանական ու ֆիզիկական անձանց հետ պայմանագրերի (համաձայնագրերի, ինչպես նաև համագործակցության ծրագրերի, պլանների) նախապատրաստման կազմակերպում և կնքված պայմանագրերի պահանջների, պարտավորությունների կատարման վերահսկողության իրականացնում
- Ինստիտուտում կարճաժամկետ դասախոսություններ կարդալու նպատակով օտարերկրյա մասնագետների հրավերների ձևակերպում, նրանց կեցության պայմանների կազմակերպում, ըստ անհրաժեշտության նաև նրանց գործունեության վերաբերյալ վկայագրերի հանձնում,
- Erasmus+ ծրագրի շրջանակներում դասախոսների փոխանակում
- գիտության զարգացման նպատակով բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում հոդվածների տպագրման առաջարկներ և տպագրման պրոցեսի կազմակերպում
- միջազգային դրամաշնորհային ծրագրի իրականացում
- Սփյուռքի և արտասահմանցի դիմորդների ընդունելության գործընթացի կազմակերպում

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի համալսարանների միջազգային ասոցիացիայի անդամ է (շուրջ 52 համալսարան):

Միջազգայնացման տեսանկյունից կարևոր է տարբեր դեսպանատների, միջազգային պատվիրակությունների, արտասահմանյան գիտնականների և դասախոսների այցերի կազմակերպումը:

Կնքված երկկողմ համաձայնագրերի նպաստել են՝

✓ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի զարգացմանը

✓ դասախոսների, ուսանող-մարզիկների, հետազոտողների համատեղ ուսումնագիտական, մարզական, ֆիզկուլտուրային-առողջարարական ծրագրերի իրականացմանը

✓ փորձի փոխանակման, գիտահետազոտական գործունեության արդյունքների վավերացմանը: Կազմակերպվել են ամենամյա հանրապետական և միջազգային գիտաժողովներ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի սոցիալ–հոգեբանական, բժշկակենսաբանական, մանկավարժական, պատմամշակութային թեմաներով, որին մասնակցել են արտերկրների մասնագետներ ու մարզիկ ուսանողներ:

Ինստիտուտը համագործակցում է նաև՝

✓ ԱՊՀ առաջատար ֆիզկուլտուրային-մարզական ուսումնական հաստատությունների ռեկտորների խորհուրդի հետ:

✓ Կենտրոնական Ասիայում և Եվրոպայում «Օլիմպիական սպորտ և սպորտ բոլորի համար» մարզական և ուսումնական բարձրագույն կրթական հաստատությունների միջազգային և ազգային գլոբալ կոնֆեդերացիայի հետ:

✓ աշխարհի սպորտային առաջատար համալսարանների ասոցիացիայի լիիրավ անդամ է:

✓ Ինստիտուտից Միջազգային օլիմպիական ակադեմիայի (ՄՕԱ) ամենամյա նստաշրջաններին մասնակցություն են ունենում դասախոսներ, երիտասարդ մասնակիցներ, որից հետո իրենց գործունեությունն են ծավալում ՀՀ-ում օլիմպիական գաղափարների տարածման ուղղությամբ, տպագրվում են ՄՕԱ-ի պարբերականներում:

2021թ. հունվարին ՀՖԿՍՊԻ-ին՝ որպես Հայաստանի ազգային օլիմպիական ակադեմիա, դարձավ Եվրոպական օլիմպիական ակադեմիայի լիիրավ անդամ, ինչի արդյունքում Հայաստանն էլ ավելի կսերտացնի իր համագործակցությունը օլիմպիական մեծ ընտանիքին:

2021-2022 ուսումնական տարում միջազգայնացման և արտաքին կապերի հաստատագրմանը միտված պայմանագրերի և հուշագրերի վավերացման գործընթացում հաշվի են առնվել գործընկերների առանձնահատկությունները, պայմանագրի բովանդակությունը համաձայնեցվոծ է համագործակցային ծրագրի նպատակներին և խնդիրներին, մասնավորապես՝ շեշտը դրվել է պայմանագրի շրջանակում կողմերի ամրագրված պարտականությունների, ակնկալվող արդյունքների, կոնկրետ գործողությունների և արդյունավետության գնահատման ցուցիչների վրա: Դրա արդյունքում հաշվետու տարում կնքվել է ևս 3 պայմանագիր՝ Մոսկվայի օլիմպիական հերթափոխի մարզական քոլեջի, Լեհաստանի Բիդգոշի համալսարանի և

Erasmus+ ծրագրի շրջանակներում՝ Լեհաստանի Ջոզեֆ Պիլսուդսկու անվան ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ակադեմիայի հետ:

Միջազգային գիտաժողովների և համագործակցային ծրագրի արդյունքներն ու ձեռքբերված փորձը դասախոսական կազմին, ուսանողներին ներկայացվել է տեղեկատվական հանդիպումների միջոցով, հաշվետվությամբ ամփոփվել է գիտխորհրդում: Գիտության զարգացման նպատակով ՄՀԶԾ բաժինը աջակցել է բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում հոդվածների տպագրման առաջարկները և տպագրման պրոցեսի կազմակերպմանը:

Ինստիտուտում կոնկրետ քայլեր են կատարվել նաև միջազգային համագործակցությունը կենտրոնացված և ապակենտրոնացված մակարդակում իրականացնելու համար: Աշխատանքներ են տարվում դրամաշնորհային ծրագրերին հայտագրվելու համար: Այս տարի հայտագրվել է Ճապոնիայի դեսպանատան կողմից հայտարարված դրամաշնորհային ծրագիրը՝ GCGP Grant assistance for Cultural Grassroots Projects. «Ձյուդոյի և կարատեի դահլիճի վերանորոգման նախագիծ» անվանումով: Ճապոնիայի կառավարության կողմից տրամադրված դրամաշնորհային ծրագրի՝ https://tinyurl.com/24xmzr69 Դրամաշնորհային աջակցություն մշակութային համայնքներին՝ «Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ձյուդոյի և կարատեի դահլիճի վերանորոգման նախագիծ»-ի իրականացում:

2020-2021 ուստարում ՄՀԶԾ բաժինը նշանակալի նախաձեռնողականություն է ցուցաբերել միջազգային վեբինարների, տեսակոնֆերանսների կազմակերպման և անցկացման հարցում: Բուհի աշխատակիցներին վեբինարներում, կլոր սեղան-քննարկումներում, կոնֆերանսներում ներգրավելու նպատակով մասնակցության հրավերներ են ուղարկվել (25 հրավեր) համապատասխան ամբիոններին, բաժիններին: Ուսանողները տեսահանդիպում են ունեցել նաև Մոսկվայի օլիմպիական հերթափոխի մարզական քոլեջի հետ՝ ներկայացնելով մասնագիտական ամբիոնները, հնչեցրել իրենց հետաքրքրող հարցերն ու արտահայտել իրենց դիրքորոշումը, ինչը վկայում է թե՛ ուսանողների հետաքրքրվածության աճի, և՛ թե անգլերենով, ռուսերենով հաղորդակցվելու հմտությունների բարելավման մասին: Հեռավար սեմինարներին ու թրեյնինգներին մասնակցություն է կազմակերպվել ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան գործընկերների հետ, որոնք նպատակ ունեն խթանելու միջբուհական հաղորդակցության զարգացումը, նպաստելու ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի շարժունությանը՝ երաշխավորելով միջազգային համագործակցային ծրագրերի իրականացման շարունակականությունը:

Նշենք, որ իրականացված գործողություններն ու միջոցառումները լուսաբանվել են առավելապես ինստիտուտի ֆեյսբուքյան պաշտոնական էջում, իսկ այժմ նաև ՄՀԶԾ

բաժնի սոցիարթակներում (Facebook https://www.facebook.com/ASIPCSInternational/, Instagram), որոնք ներկայումս բուհի շահակիցների շրջանում տեղեկատվության տարածման մատչելի և հասանելի միջոցներն են: Այստեղ տեղադրվել են մրցույթների (թվով 6) https://tinyurl.com/43yzpzf3 հնարավորությունները:

2021-2022 ուստարում իրականացվել են՝ միջազգային երիտասարդական, գիտագործնական համաժողովների, ֆորումների, միջազգային գիտական կոնֆերանսների, Կրթաթոշակների հրավերներ. ընդհանուր 66 հրավեր, 15 դիմորդ:

https://tinyurl.com/2p9bp6mr
https://tinyurl.com/2p876xxu
https://tinyurl.com/mnwptuww
https://tinyurl.com/3c6ejyw9

Իրականացվել է միջազգային կազմակերպությունները ներկայացնող պատվիրակների հյուրընկալում, հանդիպումների շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածություններ՝ https://sportedu.am/archives/8606 https://sportedu.am/archives/9704

Թեև վերջին տարում բուհում միջազգային համագործակցության ոլորտում բավականին դրական շարժընթաց է գրանցվել, դեռևս վերանայման ու բարելավման կարիք ունեն աշխատանքային ընթացակարգերն ու կանոնակարգերը: Նախատեսվում է մշակել և ներդնել նաև մեթոդաբանական ուղենիշեր, քանի որ բուհում սակավաթիվ են դրամաշնորհային նախագծեր կազմող փորձառու աշխատողները, ուստի առկա է դրամաշնորհային նախագծեր մշակելու վերաբերյալ վերապատրաստումների անհրաժեշտություն:

Ինստիտուտում դեռևս ցածր է ուսանողների և դասախոսների օտար լեզվի իմացության մակարդակը, ինչը խոչընդոտում է միջազգային փոխանակման ծրագրերի արդյունավետ իրականացմանը: Օտար լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու նպատակով 2020-2021 ուսումնական տարվանից ավելացվել են անգլերենի ժամերը (օտար լեզվի դասավանդումը կազմակերպվում է 3 կիսամյակում՝ նախկին 1 կիսամյակի փոխարեն), մրցութային հավաքագրման արդյունքում ՊԴ կազմը համալրվել է օտար լեզվի դասավանդման բարձր որակավորում ունեցող դասախոսներով, վերանայվել են դասավանդման և ուսումնառության մոտեցումներն ու մեթոդները:

Էրազմուս + շարժունության ծրագրի իրականացում միջազգային շարժունության ծրագրով կնքված պայմանագրով հյուրընկալել ենք համապատասխան մասնակցին, կատարվել է ինֆորմացիայի փոխանակում, կնքվել է դասախոսների շարժունության պայմանագիր, ըստ որի իրականացվել է շարժունությունը: https://tinyurl.com/mrxx3dub.

Էրազմուս + շարժունության ծրագրի շրջանակներում նեկայացվել է նաև կարողությունների զարգացման (Capacity building) 2 ծրագրի հայտագրում: Ստեղծվել է կոնսորցիում 8 բուհերի միջև, լրացվել է ինֆորմացիոն թերթիկը, առդեմ և առցանց հանդիպումներ են տեղի ունեցել, https://tinyurl.com/332cbzwk:

Վերապատրաստումների իրականացում

Կնքված պայմանագրերի, համագործակցությունների շրջանակներում, ինչպես նաև ստացված հրավերներին համապատասխան, կատարվել է մասնակիցների ընտրություն, թեմաների համապատասխանեցում և հաստատում, ապահովվել է մասնակցությունը և տեղի է ունեցել հավաստագրերի հանձնում/ստացում:

Իրականացվել է վերապատրաստման երեք ծրագիր

https://tinyurl.com/32j5nkns, https://tinyurl.com/3ezessnx, https://tinyurl.com/mry7fz3e,

https://sportedu.am/archives/6205

Վարպետաց դասերի կազմակերպում

Պատրաստվել են հրավերներ, հյուրընկալվել են մասնագետներ, կազմակերպվել են դասընթացներ, հանձնվել են երկու հավաստագրեր https://tinyurl.com/mrk26a9u

https://sportedu.am/archives/7520

Գործուղումների կազմակերպում

Պայմանավորվածություններ են ձեռք բերվել, մշակվել են պայմանագրերի նախագծերը, պատրաստվել գործուղման թերթիկները, հաստատվել են նամակագրական կապեր:

Իրականացվել է թվով 4 գործուղումների կազմակերպման գործընթաց՝

https://tinyurl.com/5h9aumu3, https://tinyurl.com/3u2ct7np,

https://sportedu.am/archives/7351, https://sportedu.am/archives/9549

Պայմանագրերի կնքում միջազգային կապերի ընդլայնում

Կապ է հաստատվել կազմակերպությունների հետ, կազմակերպվել են գործուղումներ դեպի գործընկեր բուհեր, տեղի են ունեցել առցանց հանդիպումներ, քննարկումներ և կնքվել են պայմանագրեր՝ 5 պայմանգիր՝

- Վասիլ Լևսկու սպորտի ազգային ակադեմիա
- Պ. Ֆ. Լեսգաֆտի անվան Ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և առողջության ազգային պետական համալսարան
- Ուկրաինայի ֆիզիկական դաստիարակության և սպորտի ազգային համալսարան
- Չայկովսկու ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ակադեմիա
- Վոլգայի տարածաշրջանի Ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և զբոսաշրջության համալսարան:

Միջազգային բուհերի կրթական ծրագրերի ուսումնասիրում, համեմատական վերլուծության փաթեթի կազմում և ներկայացում

Կատարվել են միջազգային բուհերի ուսումնասիրություններ, ուսումնասիրվել են կայք էջերը, կրթական ծրագրերի բովանդակությունը, կառուցվածքը, ուսումնական պլանները, վերջնարդյունքները, ինչի հիման վրա մշակվել են ուսումնական պլաններ՝ ՀՖԿՍՊԻ-ի հենակետային քոլեջի համար, ինչպես նաև մշակվել է ընդհանուր ֆիզիկական պատրաստության նորմատիվային չափորոշիչներ քոլեջի, բակալավրիատի ընդունելության, հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Կատարվել են մոտ 60 միջազգային բուհերի ուսումնասիրություններ

Խորքային ուսումնասիրության են ենթարկվել 5 միջազգային բուհեր

National Sports Academy (NSA) "Vassil Levski", https://www.lsu.lt/, https://www.lspa.lv/eng/, http://lesgaft.spb.ru/, AWF - Uczelnia

Տեղեկատվական օրերի կազմակերպում

Պատրաստվել է Ինստիտուտը ներկայացնող նյութ (Presentation), ինչպես նաև Ինստիտուտի մասնագետները իրենց ծրագրերով այցելել են Դիլիջանում հյուրընկալված սփյուռքահայ երիտասարդներին, ներկայացրել են բուհի կրթական ծրագրերն ու հնարավորությունները:

https://tinyurl.com/4vchyj5u, https://tinyurl.com/3yxys95v

Օտարերկրյա և սփյուռքահայ քաղաքացիների ընդունելություն

2021-2022 ուստարում բուհ ընդունվել են սփյուռքի և արտերկրի 22 քաղաքացի՝ 19–ը առկա, 1–ը՝ հեռակա, 2-ը՝ մագիստրատուրա:

Կազմակերպվել է նաև նախապատրաստական բաժնի ընդունելություն, ինչի արդյունքում ընդունվել են 2 դիմորդներ:

Հաշվետու տարում ինստիտուտում բակալավրի աստիճանով սովորում են արտերկրի և սփյուռքի 62, իսկ նախապատրաստական բաժնում՝ 2 քաղաքացիներ: Ընդհանուր թվով 64 ուսանող, որից 3–ը՝ հետբուհական:



ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

Ռազմավարական նպատակով սահմանված են հետևյալ խնդիրները՝

1. Ստեղծել երկարաժամկետ համագործակցային կապեր ՀՖԿՍՊԻ–ի արտաքին շահակիցների և հանրային կառույցների հետ:
2. Բարձրացնել ՀՖԿՍՊԻ-ի հասարակական պատասխանատվությունը և ապահովել գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:
3. Մշակել և իրականացնել ՀՖԿՍՊԻ–ի գործունեության մասին տեղեկատվական և քարոզչական ակտիվ քաղաքականություն:

Հանրային և ինստիտուցիոնալ կապերի բաժնի գործառույթն ուղղված է ՀՖԿՍՊԻ–ի՝ որպես բացառիկ ոլորտային բուհի, դրական իմիջի ձևավորմանը, հեղինակության բարձրացմանը, բուհի առաքելության և գործունեության համար նպաստավոր հաղորդակցային միջավայրի ապահովմանը, առաքելության և գործունեության վերաբերյալ հանրային իրազեկմանը, գիտահետազոտական, կրթական և սպորտային ոլորտներում առաջատար դիրքի ամրապնդմանը: Բաժնի գործառույթի երկրորդ բաղադրչը ներառում է գլխադասային գերատեսչության (ՀՀ ԿԳՄՍՆ), ՀՀ գործադիր, օրենսդիր և տեղական ինքնակառավարման մարմինների, ոլորտային կազմակերպությունների, բուհերի, մասնագիտացված ընկերությունների հետ

գործընկերային և փոխգործակցային հարաբերությունների ձևավորմանը, սպասարկմանը և զարգացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում բաժնի կողմից իրականացվել է բուհի գործունեության (կրթական, գիտահետազոտական, մարզական, միջազգային, հանրային նշանակության) վերաբերյալ տեղեկատվության տարածում, քարոզչության և հանրային կապերի ամրապնդմանն ուղղված աշխատանքներ: Ինստիտուցիոնալ և համագործակցային հարաբերությունների ձևավորման և ամրապնդման նպատակով նամակագրություն է իրականացվել Հայաստանում գործող տարբեր ոլորտների առաջատար կազմակերպությունների, այդ թվում նաև՝ գործընկեր բուհերի, հետ: Գործընկերային հարաբերությունների ձևավորումն ուղղված է աջակցելու ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման, ուսանողների կրթության որակի և ուսուցման պայմանների լավացմանը:

Հաշվետու ժամանակաշրջանի նոյեմբեր ամսից բաժինը ձեռնամուխ է եղել ՀՖԿՍՊԻ–ի պաշտոնական կայքի (www.sported.am) վերակառուցման, նորացման և եռալեզու տարբերակի ստեղծման աշխատանքներին: Կայքի սպասարկման գործում առաջնահերթությունը տրվել է հրապարակվող տեղեկատվության հասնալիության և մատչելիության ուղղությամբ տարվող աշխատանքներին՝ նախատեսված կայքի բոլոր այցելուների, այդ թվում նաև՝ դիմորդների և ուսանողների համար:

ՀՖԿՍՊԻ պաշտոնական կայքի այցելությունների համեմատական ինֆոգրաֆիկաներից (2020-2021 թթ. և 2021–2022 թթ.) պարզ երևում է, որ ավելացել են պաշտոնական կայքի ինչպես ընդհանուր այցելուների քանակը (26,9%), այնպես էլ նոր այցելուների թիվ (17,7%): Հաշվետու ժամանակահատվածում կայքի այցելուների թիվը կազմել է 164,9 հազար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի՝ 129,9 հազարի դիմաց, իսկ նոր այցելուների քանակը համապատասխանաբար կազմել է 25,9 հազար, նախորդ ժամանակահատվածի՝ 22,0 հազարի դիմաց:



Ինստիտուտի գործունեության թափանցիկության, ինչպես նաև իրականացվող միջոցառումների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության հասանելիության և

մատչելիության ապահովման նպատակով ուսումնասիրվել է բուհի թիրախային լսարանը: Առանձին ծառայությունների մասին Ֆեյսբուք սոցիալական ցանցում իրականացվել է տեղեկատվության թիրախավորված, հասցեական տարածում (վճարովի ուղղակի շուկայավարում/direct marketing):

ՀՖԿՍՊԻ ֆեյսբուքյան էջի արդյունավետության համեմատական ինֆոգրաֆիկաները ((2020-2021 թթ. և 2021–2022 թթ.):



Դիտումների քանակն ավելացել է 40,9 տոկոսով՝ 2020-2021 թթ. 2.588.320–ի դիմաց 2021-2022 թթ. կազմելով 3.646.253 դիտում:



Տարածումների քանակն ավելացել է 57,8 տոկոսով՝ 2020-2021 թթ. 2.377–ի դիմաց 2021-2022 թթ. կազմելով 3.752 տարածում:

Հավանումների քանակն ավելացել է 68,6 տոկոսով՝ 2020-2021 թթ. 49.970–ի 2021-2022 թթ. դիմաց կազմելով 84.278 հավանում:

Նամակագրական և կազմակերպչական աշխատանքներ են իրականացվել «Սպորտուս» հենակետային քոլեջի լիցենզավորման համար անհրաժեշտ փաստաթղթային փաթեթը ձևավորելու և ՀՀ ԿԳՄՍ նախարարություն առաքելու ուղղությամբ:

Իր առջև դրված նպատակներին և ղեկավարներից ստացած հանձրարականների կատարման նպատակով հաստատվել է ոչ միայն նամակագրային համագործակցություն, այլ նաև իրականացվել են բազմաթիվ միջանձնային շփումներ, բանակցություններ, քննարկումներ ձեռք են բերվել համապատասխան համաձայնություններ: Նշված համաձայնությունները վավերացվել են կնքված հուշագրերով:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և ՀՖԿՍՊԻ գիտական խորհրդի կողմից հաստատվել է բաժնի կանոնակարգը:

Ինստիտուտի գործունեության վերաբերյալ տեղեկատվության հասանելիության մակարդակի բարձրացման նպատակով բաժինը մասնակցել է համապատասխան աշխատանքային խմբի մարզեր կատարած շրջայցերի կազմակերպմանը՝ ուղղված ընդունելության քննությունների կարգում կատարված փոփոխությունների իրազեկման աշխատանքներին:

Կազմակերպվել և իրականացվել են ինստիտուտի տասը լավագույն մարզիկների պարգևատրման արարողությունը, ինչպես նաև ակտիվ հանգստի և սպորտային տուրիզմի ոլորտներում արդյունավետ գործունեության և Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության զարգացման համար սպորտային տուրիզմի ոլորտի ներկայացուցիչներին շնորհակալագրերի հանձնման և 2021-2022 ուսումնական տարվա առաջադիմության արդյունքներով անվանական կրթաթոշակի արժանացած ուսանողների պարգևատրման արարողությունները: «Հայ Ձմեռ Պապ» լրագրողական բարեգործական հիմնադրամի հետ համատեղ կազմակերպվել է ՀՖԿՍՊԻ շրջանավարտ 44–օրյա պատերազմի նահատակ Սևակ Մնացականյանի անվան կրթաթոշակի հանձնման արարողությունը:

Առաջնորդնելով Հայաստանի ֆրանսիական համալսարանի հետ կնքված համաձայնագրի դրույթներով կազմակերպվել է տեղեկատվական հանդիպում՝ ուսանոքղների ձեռնարկատիրական հմտությունների զարգացման նպատակով, կազմակերպվել և իրականացվել են մի շարք միջոցառումներ ուղղված Ինստիտուտի կորպորատիվ հեղինակության բարձրացմանը և աշխատակիցների կորպորատիվ պատասխանատվության ձևավորմանը:

Ստեղծվել և բաժնում պահպանվում է հարուստ կոնտակտային բազա (մարզական՝ ֆուտբոլային ակումբներ, ֆիթնես սրահներ, ինչպես նաև հասարակական կազմակերպություններ, զանգվածային լրատվամիջոցներ, գործընկեր բուհեր, առաջատար տնտեսվարողներ, beting ոլորտի ներկայացուցիչներ և այլն):

Բաժինն ակտիվ մասնակցել է EXPO-2022 կրթական ցուցահանդեսի կազմակերպչական և ակտիվորեն լուսանաբել է ցուցահանդեսին բուհի մասնակցության ընթացքը: Հաշվետու ժամանակահատվածում բաժնի կողմից իրականացված աշխատանքները մեծապես նպաստել են ինստիտուտի գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածմանը, պաշտոնական կայքի այցելությունների ավելացմանը, սոցիալական ցանցում քարոզչական աշխատանքերի ակտիվացմանը և այդ աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Ընդհանուր առմամբ 2021-2022 ուսումնական տարում ՁԼՄ–ների հետ ակտիվ համագործակցություններ են ծավալվել, որոնց ներգրավվել են բուհի ռեկտորը, պրոռեկտորները, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ. հանդես են եկել հարցազրույցներով, մասնակցել հաղորդաշարերի, մանրամասն ներկայացրել բուհում իրականացվող կրթական ծրագրերն ու բարեփոխումները:

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում տեղի ունեցող միջոցառումների, բարեփոխումների և նորությունների մասին խոսել են՝ Առաջին ալիքի, Երկիր մեդիայի, Կենտրոն թիվիի, Նոր Հայաստան թիվիի, Հրազդան թիվիի, Արցախի հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոյի եթերներից.

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԶԱՆԵՑՈՒՄ

Լրացուցիչ և շարունակական կրթության բազմազանեցում ռազմավարական նպատակով նախատեսված է հետևյալ խնդիրները՝

1. Ներդրնել ոչ ֆորմալ կրթության բաղադրիչը, այդ թվում՝ ինստիտուտի ուսանողների համար,
2. Ապահովել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում ազգաբնակչության բոլոր տարիքային խմբերի համար շարունակական և ցկյանս կրթության հասանելիություն՝ միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի ներդրմամբ,
3. Իրականացնել ինստիտուտի ՊԴԱ–ի վերապատրաստման ծրագրեր,
4. Խթանել դպրոցականների շրջանում առողջ ապրելակերպը, կազմակերպել «Ամառային դպրոցնեչ» դպրոցականների, այդ թվում՝ ինստիտուտի աշխատակիցների երեխաների համար:

Բաժինը սկսել է գործնեություն ծավալել 2021 թ. նոյեմբերից և հասցրել է իրականացնել բազմաթիվ ծրագրեր: Բաժինը գործում է կանոնակարգին համապատասխան և իրականացնում է հետևյալ գործառույթները՝

Ոչ ֆորմալ կրթությանը առնչվող աշխատանքների կազմակերպում և համակարգում

1. Գրությունների պատրաստում, պահանջվող փաստաթղթերի հավաքագրում
2. Քննական գործընթացի կազմակերպում
3. Սեմինարների կազմակերպում
4. Երկարաժամկետ, կարճաժամկետ վերապատրաստումների իրականացում
5. Նոր ծրագրերի մշակում
6. Վերապատրաստման գործընթացին առնչվող հայտարարությունների տարածում
7. Դասախոսների հետ քաղիրավական պայմանգրերի կնքում
8. Կատարողական ակտերի պատրաստում
9. Մասնակիցների հետ պայմանագրերի կնքում

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Նախապատրաստական դասընթացների կազմակերպում՝ «Անատոմիա» և «Ընդհանուր կենսաբանություն» առարկայից 4 մասնակից, հայոց լեզվից՝ 1:

«Մերսում և առողջարարական ֆիզիկական կուլտուրա» հնգամսյա դասընթացի կազմակերպում՝ 15 ավարտած մասնակից, 14 ուսումնառվող, որոնց ուսումնառության ավարտը սույն թվականի սեպտեմբերին է:

«Ֆիթնես մարզչի» պատրաստման հնգամսյա դասընթացի կազմակերպում՝ 7 ավարտած մասնակից, 6 ուսումնառվող, որոնց ուսումնառության ավարտը սույն թվականի նոյեմբերին է:

Ֆիթնես ուժային ձևեր՝ 3 ավարտած մասնակից:

«Փոքրիկ օլիմպիկ» ամառային դպրոց հավաքագրում խմբերի բաշխում, օրակարգի կազմում՝ 26 մասնակից, 1 հերթափոխ:

Դասընթաց-սեմինար **«Ապրելակերպի բժշկություն»՝** մասնակցել է բուհի 31 աշխատակից:

Պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում՝ 1-ին փուլում 81 ուսուցիչ, 2-րդ փուլում նախնական 25 մասնակից, քանի որ գործընթացը ընթացքի մեջ է:

Կարճաժամկետ, միջնաժամկետ ծրագրերի մշակում և ներդրում, մասնավորապես՝ «Կինեզիոթեյփավորում», «Սպորտային գործունեության հոգեբանական ապահովում», «Պիլատեսի մարզիչների և հրահանգիչների պատրաստման»:

Բաժինը ունի իր տարբերանշանը և պաշտոնական ֆեյսբուքյան էջը:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ուսանողական կյանքի ակտիվության ապահովում ռազմավարական նպատակով սահմանվել են հետևյալ խնդիրները՝

1. Խթանել ուսանողների հասարակական գործունեությունը և նախաձեռնողականությունը:
2. Նպաստել ուսանողների գիտական, ինչպես նաև ուսանողական–մարզական գործունեության ակտիվացմանն ու արդիականացմանը:

3. Բարելավել ուսանողների աջակցության մեխանիզմները:
4. Խթանել ուսանողների հասարակական պատասխանատվության բարձրացման գործընթացների իրականացմանը:

Ուսանողական խորհրդի գործունեությունը

Հաշվետու տարում ուսանողական խորհուրդը (ՈՒԽ) պարբերաբար իրականացրել է ուսանողների իրավունքների և պարտականությունների մասին իրազեկող միջոցառումներ:

Ռազմահայրենասիրական միջոցառումների շրջանակում ՈՒԽ նախաձեռնությամբ ուսանողներն այցելեն են Եռաբլուր պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու Արցախյան պատերազմում զոհված հերոսների հիշատակին: Ակտիվացել են միջբուհական կապերը ուսանողական խորհուրդների հետ, համատեղ կազմակերպվել են ուսանողական բոուլինգի և բազկամարտի առաջնության խաղեր: ՈՒԽ հրավերով Եվրոպական համալսարանի ուսանողները այցելել ՀՖԿՍՊԻ, ինստիտուտի թանգարանում ծանոթացել բուհի 76-ամյա պատմությանը:

ՈՒԽ. «Բանավեճ-քննարկումների» ակումբի նախաձեռնած «Ֆիլմերը ժամանցի ավելի լավ տարբերակ են, քան գրքերը» խորագրով բանավեճ-քննարկումները մեծ հետաքրքրություն և աշխուժություն են առաջացրել ուսանողների շրջանում՝ գրքասեր ուսանողներին համախմբելով դասական և ժամանակակից գրականության բեսթսելերներին նվիրված քննարկումների սեղանի շուրջ:

Բուհում իրադարձային նշանակալի միջոցառում էր նաև «Տարվա 10 լավագույն մարզիկները» մրցանակաբաշխությունը:

Ուսանողական խորհուրդը ունի իր տարբերանշանը և պաշտոնական ֆեյսբուքյան էջը:

- ՀՖԿՍՊԻ-ի ուսանողական խորհուրդը նոր կիսամյակի մեկնարկին ընդառաջ կազմակերպեց հանդիպում բուհի ռեկտոր Դ. Խիթարյանի հետ, քննարկելու ուսանողներին հուզող հարցերը:
- ՀՖԿՍՊԻ-ի ուսանողական խորհուրդը կազմակերպեց միջոցառում՝ նվիրված գրքի տոնին:
- Ուսանողական խորհրդի աջակցությամբ տեղի ունեցավ «Հետպատերազմյան տրավմատիկ սթրեսային խանգարումների կարգավորման առանձնահատկությունները» թեմայով սեմինար:
- Ուսանողական խորհուրդը մասնակցեց բատմինտոնի մրցաշարին որի նպատակն էր բարձրացնել առողջ ապրելակերպի դերը:
- Մարտի 8–ի կապակցությամբ ուսանողական խորհուրդը կազմակերպեց միջոցառում նվիրված բուհի գեղեցիկ սեռի ներկայացուցիչներին:
- Ուսանողական խորհուրդը հանգստյան օրերին կազմակերպեց տարբեր խաղային մրցաշարե՝ր ուսանողական կյանքը էլ ավելի հետաքրքիր դարձնելու նպատակով:
- Ուսանողական խորհուրդը մասնակցեց հրաձգության մրցաշարին:
- Ուսանողական խորհուրդը կազմակերպեց ծառատունկ բուհի հարակից շրջակայքում:
- Ուսանողական խորհուրդը կազմակերպել է «Հարսանիք թիկունքում» ֆիլմի կինոդիտում:
- Տեղի ունեցավ «Հարսանիք թիկունքում» ֆիլմի քննարկումը՝ ռազմահայրենասիրական հայացքների զարգացման նպատակով:
- Ուսանողական խորհուրդը բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների գեղեցիկ սեռի ներկայացուցիչների համար կազմակերպել էր փոքրիկ անակնկալ:
- Ուսանողական խորհուրդը ուսանողների համար կազմապերպել էր ֆուդբոլի մրցաշար:
- Ուսանողական խորհրդի ուսանողները կամավոր կերպով մասնակից եղան Հուշահամալիրի տարածքում դիմակներ բաժանելու գործընթացին՝ պահպանելու համար համաճարակային կանոնները:
- Ուսանողական խորհուրդը մասնակցեց Երևանում անցկացվելիք ծառատունկին:
- Ուսանողական խորհուրդը մասնակից եղավ Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարանում կազմակերպված գալա համերգին:
- Ուսանողական խորհուրդը մասնակցեց «Կրթություն և կարիերա» Expo 2021-ին, ներկայացնելով սիրելի բուհը:
- Վազգեն Սարգսյանի անվան Ռազմական համալսարանում տեղի ունեցավ հանդիպում տարբեր բուհերի ուսանողների միջև, որտեղ ելույթ ունեցավ ՈՒԽ

նախագահ Դ. Ալեկսանյանը: Հանդիպման վերջում ծաղիկներ խոնհարեցինք զոհված զինծառայողների հուշակոթողին:

- Ուսանողական խորհրդի ուսանողները մասնակցեցին միջոցառման, որտեղ ներկա էին Արցախից եկած, պատերազմի հետևանքով տուժած ընտանիքները:
- Ուսանողական խորհուրդը «Բարի տնակ» բարեգործական ծրագրի հետ համատեղ տոն դարձրեց Արցախից եկած բալիկների օրը:
- Ուսանողական խորհուրդը մասնակցեց ռաֆթինգի առաջնությանը:
- Ուսանողական խորհուրդը կազամակերպեց պատմամշակութային այց դեպի Դիլիջան:
- Ուսանողական խորհուրդը մասնակից եղավ Արցախի պետական համալսարանի կողմից կազմակերպված ամառային ճամբարին:
- Ուսանողական խորհուրդը գիտելիքի տոնին նվիրված կազմակերպել էր գեղեցիկ միջոցառում առաջին կուրսի ուսանողներին հետաքրքիր դիմավորելու համար:
- Ուսանողական խորհուրդը կազմակերպեց հանդիպում բուհի ուսանողների հետ, լսելու ուսանողներին հուզող հարցերը և առաջարկությունները:
- Ուսանողական խորհուրդը կազմակերպեց քայլերթ դեպի Եռաբլուր:
- Ուսանողական խորհուրդը կամավորական կերպով մասնակից եղավ Հայաստանում անցկացվելիք աթլետիկայի մրցաշարին:
- Ամբողջ աշխարհում նշվում էր համալսարանական սպորտի միջազգային օրը: Հայաստանի ուսանողական մարզական ֆեդերացիան կազմակերպել էր ժայռամագլցման և պարանի ձգման մրցույթ, որին իր ակտիվ մասնակցությունն ունեցավ ՀՖԿՍՊԻ–ի ուսանողական խորհուրդը:
- Բուհի ռեկտոր Դ. Խիթարյանը ուսանողական խորհրդի ուսանողներին հանձնեց շնորհակալագրեր բարձր որակի թիմային աշխատանքներ կատարելու համար:
- Տեղի ունեցավ Երևանի Ռուսական Տան կողմից «Новая поколение 2021» հոբելյանական ֆորումը, որտեղ ելույթ ունեցան ՈՒԽ անդամները ներկայացնելով իրենց ծրագրերը:
- Ուսանողական խորհուրդը կազմակերպեց Ամանորյա մեծ միջոցառում, որտեղ բուհի ակտիվ և մեծ առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին տրվեցին մրցանակներ:

Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) աջակցությամբ, ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) հայաստանյան գրասենյակի կողմից անցկացվող «Ներգրավված քաղաքացի» համալսարանական դասընթացի առաջին փուլը տեղի ունեցավ 2022 թվականի մարտի 24–ից մինչև մայիսի 25–ը:

Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում ինտերակտիվ դասավանդման մեթոդաբանությամբ վերապատրաստված դասախոսներ՝ ՀՖԿՍՊԻ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Լուսինե Ստեփանյանը, Մարզական լրագրության ամբիոնի վարիչի ժ/պ Արևիկ Բաղդասարյանը և Հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոնի վարիչ Հասմիկ Ավագյանը

սկսեցին վերապատրաստել տարբերի կուրսերից հավաքագրված թվով 26 ուսանողների, որոնք «Ներգրավված քաղաքացի» դասընթացից սովորեցին, թե ինչպես դառնալ դրական փոփոխությունների դերակատարներ իրենց շրջապատում:

ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող վերապատրաստման դասընթացը միտված էր քաղաքացիական կրթությանը և ուսուցման ինտերակտիվ մեթոդաբանության կիրառմանը: Քաղաքացիական ներգրավվածությունը և ակտիվ քաղաքացի լինելը՝ գործող և առողջ ժողովրդավարության հիմքերն են:

«Ներգրավված քաղաքացի» դասընթացը երիտասարդներին հնարավորություն է տալիս ոչ միայն ձեռք բերել նոր հմտություններ և օգտագործել ներուժը ինտերակտիվ և նորարարական մեթոդաբանության կիրառմամբ, այլև նպաստում է համայնքներում փոփոխությունների իրականացմանը:

«Ներգրավված քաղաքացի» համալսարանական դասընթացի ամփոփիչ հանդիպմանը ուսանողները, կիրառելով դասընթացների ընթացքում ձեռք բերած ժողովրդավարական կառավարման և մարդու իրավունքների վերաբերյալ իրենց գիտելիքները, ներկայացրեցին ռազմակիրառական նշանակության (start–up) նախագծեր՝

- մեդիագրագիտության,
- ուսանողների մոտիվացիայի բարձրացման,
- սոցիալական տուրիզմի,
- արշավների ակումբի ստեղծման վերաբերյալ:

«Ներգրավված քաղաքացի» համալսարանական դասընթացի մասնակիցների վկայականների հանձնման արարողության ժամանակ ՀՖԿՍՊԻ ուսանողները ներկայացրեցին լավագույն նախագծերից մեկը՝ «Հորիզոնս» արշավների ակումբի ստեղծումը:

Նախագիծը հավանության արժանացավ, այնուհետև Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Նիկո Սխերմերսը հետաքրքրվեց «Ներգրավված քաղաքացի» համալսարանական դասընթացին մասնակցած ՀՖԿՍՊԻ–ի ուսանողների նախագծով և իր պատրաստակամությունը հայտնեց աջակցել ուսանողներին (գույքով և հանդերձանքով) ծրագրի իրագործման ընթացքում:

Նախագիծը շարունակում է իր գործունեությունը, իրականացնելով դասընթացներ, մեկ տասնյակից ավելի ուսուցողական արշավներ ՀՀ տարբեր գեղատեսիլ վայրեր:

ՖԻՄԱ ՄԱՐԶԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2021-2022 ուումնական տարվա ընթացքում իրականացվել են հետևյալ մարզական միջոցառումները՝

- անցկացվել է Արցախյան պատերազմում զոհված ուսանողների հիշատակին նվիրված մի շարք միջոցառումներ, որոնց նպատակն է մշտապես հիշել մեր հերոս տղաներին և վառ պահել զոհվածների հիշատակը, ինչպես նաև խթանել բուհում գործող մարզաձևերի հետագա զարգացումը և մասսայականացումը Հայաստանի Հանրապետությունում և ի հայտ բերել լավագույն մարզիկներին /7 մրցաշար տարբեր մարզաձևերից:
- «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եվ սպորտի պետական ինստիտուտի» «ՌԵԿՏՈՐԻ ԳԱՎԱԹ» ֆուտբոլի 4-րդ ավանդական մրցաշար, որի նպատակն է նպաստել աշխատակիցների առողջության ամրապնդմանը և առողջ ապրելակերպի պրոպագանդմանը, ի հայտ բերել լավագույն դասախոս-մարզիկներին՝ հանրապետական մարզական խաղերին նախապատրաստվելու և մասնակցելու համար:
- ՀՖԿՍՊԻ սեղանի թենիսի մրցաշար՝ ինստիտուտի աշխատակիցների միջև:
- ՀՖԿՍՊԻ թենիսի բուհական առաջնության սուպեր խաղաշրջան:
- ՀՖԿՍՊԻ մեծավաստակ աշխատողներ Շ. Երթևցյանի, Կ. Ջաներյանի, Կ. Ենգոյանի և Ա. Անտոնյանի հիշատակին նվիրված բռնցքամարտի բաց առաջնություն:
- Աշխարհի ուսանողների արագ շախմատի առաջին առաջնություն /1 տեղ/:
- «Օնլայն» ուսանողական արագ շախմատի և թիմային և անհատական համաշխարհային մրցումներ /2 տեղ/:
- ՀՀ ուսանողական մարզական 22-րդ խաղերի 3Х3 բասկետբոլի առաջնություն /1 տեղ/:

- ՀՀ ուսանողական մարզական 22-րդ խաղերի բադմինտոնի առաջնություն /3 տեղ/:
- ՀՀ ուսանողական մարզական 22-րդ խաղերի դրագոնբոութ և կոնցեպտ առաջնություն /2 տեղ/:
- ՀՀ ուսանողական մարզական 22-րդ խաղերի Լողափնյա վոլեյբոլի առաջնություն /աղջիկներ՝ 2–րդ տեղ, տղաներ՝ 1–ին տեղ/:
- ՀՀ ուսանողական մարզական 22-րդ խաղերի շախմատի /բլից/ աղջիկների և տղաների առաջնություն /աղջիկներ և տղաներ՝ թիմային 1-ին տեղ անհատական 1-ին տեղ/:

Լեհաստանի Լոձ քաղաքում անցկացված Եվրոպական համալսարանական 6-րդ խաղերում Հայաստանը 1 ոսկե և 1 բրոնզե մեդալ է նվաճել:
Խաղերի չեմպիոնի կոչումը նվաճել է Երևանի պետական բժշկական համալսարանի ուսանող Դավիթ Մակյանը՝ կարատե մարզաձևի կումիտե մրցակարգի մինչև 75 կգ քաշային կարգում դառնալով ոսկե մեդալակիր: Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ուսանող Գևորգ Բեգլարյանն էլ երրորդ տեղն է զբաղեցրել և բրոնզե մեդալ է նվաճել պարա սեղանի թենիս մարզաձևում:

Եվրոպական համալսարանական խաղերին այս տարի 38 եվրոպական երկրների 450 համալսարանների 5000 պատվիրակներ են մասնակցել, իսկ մրցումներն անցկացվել են 20 մարզաձևերից:

ՀՖԿՍՊԻ–ի «Ֆիմա» մարզական ակումբը ունի իր տարբերանշանը և պաշտոնական ֆեյսբուքյան էջը:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Որակի ապահովման ներքին համակարգի զարգացում ռազմավարական նպատակով սահմանվել են հետևյալ խնդիրները՝

1. Զարգացնել կրթության որակի ապահովման (ՈԱ) ներբուհական համակարգը, բուհում ամրապնդել որակի մշակույթը:
2. Բուհի բոլոր ստորաբաժանումներում և գործընթացներում ձևավորել ՊԻԳԲ (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում) շրջափուլով աշխատելու մեխանիզմներ:
3. ՀՖԿՍՊԻ–ի հիմնական շահակիցների կարիքների վերլուծության, հաշվետվողականության մեխանիզմների և բացահայտված արդյունքների հիման վրա իրականացնել բարեփոխիչ քայլեր ու գործողություններ:
4. Վերանայել և բարելավել ՈԱ–ի քաղաքականությունը, ընթացակարգերն ու մեխանիզմները՝ հիմնվելով ներքին և արտաքին գնահատումների արդյունքների վրա:
5. Նպաստել ՀՖԿՍՊԻ-ի ինտեգրմանը Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ):

2021-2022 ուսումնական տարում ՈԱԲ–ի կողմից պլանավորված աշխատանքների կատարողականը համաձայն 2021-2022 ուսումնական տարվա աշխատանքային պլանի և ՈԱԲ կանոնակարգով սահմանված նպատակների և խնդիրների:

Որակի ներքին ապահովման գործընթացների շրջանակում Որակի ապահովման բաժինը իրականացնում է որակի շարունակական բարելավմանն ուղղված փաստաթղթերի համալրում և վերանայում, նոր ընթացակարգերի և կառուցակարգերի գործարկում, տրամադրում է խորհրդատվական բազմագործառութային ծառայություններ, անցկացնում է հարցումներ և կատարում մասնագիտության կրթական ծրագրերի որակի կառավարման մշտադիտարկումներ ու վերլուծություններ, իրականացնում որակի ապահովման մեխանիզմների վերաբերյալ ներքին և արտաքին վերապատրաստումներ, ձևավորում և ընդլայնում է արտաքին շահակիցների հետ փոխգործակցային հարաբերությունները, կազմում է առաջարկությունների փաթեթներ՝ նպաստելով բուհի գործունեության բոլոր տիրույթներում որակի ներքին ապահովման մշակույթի կայացմանն ու զարգացմանը:

ՀՖԿՍՊԻ–ի որակի ապահովման (այսուհետ՝ ՈԱ) համակարգը բուհի գործունեության բոլոր ոլորտներին (կրթություն, գիտություն և հանրային ծառայություններ) վերաբերող գործընթացների պլանավորման, մշտադիտարկման, խնդիրների վերհանման, բարելավումների իրականացման գործընթացների ամբողջությունն է:

1. ՀՖԿՍՊԻ ինստիտուտցիոնալ հավատարմագրման գործընթացի համակարգում

2019-2020 ուսումնական տարվանից «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամում (այսուհետ՝ ՀՖԿՍՊԻ) պաշտոնապես մեկնարկել են բուհի վերահավատարմագրման աշխատանքները, որոնք պլանավորվել, համակարգվել, վերահսկվել և ամբողջացվել են Որակի ապահովման բաժնի կողմից (այսուհետ՝ ՈԱԲ):

Ինստիտուտում հավատարմագրման գործընթացի աշխատանքները իրականացվել են 4 փուլով, մասնավորապես ՝

1. Ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության զեկույցի պատրաստում և ներկայացում ՀՀ «Որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ
2. Փորձաքննություն՝ անկախ փորձագետների խմբի կողմից բուհի ինքնավերլուծության ուսումնասիրություն և այց բուհ
3. Փորձագիտական զեկույցում վերհանված խնդիրների և փորձագիտական խորհրդատվության հիման վրա թերությունների վերացման ծրագիր–ժամանակացույցի կազմում և ներկայացում ՈԱԱԿ

ՈԱԲ-ի համակարգմամբ ու վերահսկողությամբ և ռեկտոր Դ. Խիթարյանի անմիջական ներկայութամբ յուրաքանչուր ուրբաթ անցկացվել են աշխատանքային հանդիպումներ, ներկայացվել է աշխատանքների ընթացքը, ՈԱԲ–ի կողմից մանրամասնվել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության մեթոդաբանությունն ու գործիքակազմը:

Իրականացված հանդիպումների ընթացքում ՈԱԲ–ը աշխատախմբին ներկայացրել է մեթոդաբանական խորհրդատվություն, մանրամասնվել են 10 չափանիշ/չափորոշիչների վերլուծության սկզբունքները, տվյալների հավաքագրման, վերլուծության և գնահատման մեխանիզմները:

ՈԱԲ–աշխատախումբ համագործակցությունը առավել արդյունավետ դարձնելու նպատակով իրականացվել են նաև անհատական կանոնավոր հանդիպումներ չափանիշների պատասխանատուներից յուրաքանչյուրի հետ, որն առաջացել է մասնավորապես տվյալների հավաքագրման, վերլուծության մեխանիզմների, համապատասխան փաստաթղթային հիմքերի ընտրության վերաբերյալ աշխատախմբի ունեցած դժվարությունները հաղթահարելու նպատակով:

Այնուհետև ՈԱԲ–ի կողմից կատարվել են վերը նշված բոլոր չափանիշների և չափորոշիչների բովանդակության խմբագրում, առկա հիմքերի համապատասխանության ստուգում և այլ լրացուցիչ շտկողական աշխատանքներ:

Իրականացված վերանայումների արդյունքում ՈԱԲ–ը ամբողջացրել է ինքնավերլուծության զեկույցի նախնական տարբերակը (26.02.2021թ.)՝ զուգահեռաբար համակարգելով նաև զեկույցի թարգմանչական աշխատանքները, որոնց զգալի ներգրավվածություն են ունեցել Հասարակագիտության և լեզուների ամբիոնի դասախոսները:

2021 թ.–ի մարտի 29–ին ՀՖԿՍՊԻ–ի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլության զեկույցը ներակայացվել է ՈԱԱԿ, որը, սակայն, մեկ ամիս անց

վերադարձվել է բուհ տեխնիկական թերությունների պատճառով՝ զեկույցին կցված ոչ բոլոր հավելվածներն[1] են եղել հաստատված և մակագրված (ՈԱԱԿ N Հ- 04/21-068 որոշում 29.04.2021 թ.):

Հավատարմագրման կարգի համաձայն՝ նշված թերությունների վերացման համար բուհին տրվել է 1 ամիս ժամանակ, որի ընթացքում ՈԱԲ–ը համագործակցելով Իրավական ապահովման բաժնի և համապատասխան ստորաբաժանումների հետ լրացուցիչ ստուգել է արձանագրված հակասությունները, մասնավորապես՝ կային կնքված և մակագրված փաստաթղթեր, որոնք ԳԽ օրակարգում երբևէ ներառված չեն եղել («Որակի ապահովման ներքին քաղաքականություն») և հակառակը՝ տվյալ փաստաթուղթը ընդգրկված է եղել ԳԽ օրակարգում, ըստ ԳԽ արձանագրության՝ հաստատվել, սակայն հաստատված տարբերակները բուհի փաստաթղթային բազայում առկա չէր, ինչպես օրինակ՝

1. ՀՖԿՍՊԻ զարգացման ռազմավարական ծրագրի (2017-2021թ.թ.) գործողությունների կատարման պլան–ժամանակացույց
2. Ինստիտուցիոնալ հանձնաժողովի փորձագիտական խմբի կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա իրականացված հաշվետվություն
3. 2018-2019 ՀՖԿՍՊԻ ՌԾ կատարողականի զեկույց
4. ՀՖԿՍՊԻ մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և հաստատման կարգ (հատատված ԳԽ 12 նիստով, 28.12.2017թ.)
5. ՀՖԿՍՊԻ ուսանողի գիտելիքի գնահատման կարգ (2014թ.)
6. «ՀՖԿՍՊԻ» հիմնադրամի խորհրդատուների գործունեության կանոնակարգ
7. ՀՖԿՍՊԻ վարչական, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմերի աշխատողների աշխատանքային գործունեության գնահատման և խրախուսման կարգ
8. Որակի ապահովման քաղաքականության արդյունավետության գնահատում
9. «ՈԱ ներբուհական համակարգի հիմնախնդիրները և մարտահրավերները» միջազգային աշխատաժողովի վերաբերյալ հաշվետվություն
10. Որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության քաղաքականություն

ՈԱԲ–ը, շտկելով ՈԱԱԿ–ի կողմից նշված տեխնիկական թերությունները, նախատեսված ժամկետում ներկայացրել է զեկույցի վերանայված տարբերակը (27.05.2.21թ)՝ պաշտոնական գրությամբ պարզաբանելով նաև վերոնշյալ փաստաթղթերի հաստատված տարբերակների բացակայության խնդիրը, որին ի պատասխան՝ կայացվել է ՀՖԿՍՊԻ–ի ինստիտուցիոնալ կարողությունների վերանայված ինքնավերլուծությունը ընդունելու ՈԱԱԿ որոշումը (N Հ- 06/21-085, 10.06.2021):

2021թ. սեպտեմբերի 27-30–ը, ՀՖԿՍՊԻ–ում իրականացվել են փորձագիտական գնահատում իրականացվող խմբի այցերը, որոնց արդեն իսկ նախորդել էին բուհի հետ

[1] ՀՖԿՍՊԻ–ի տարբեր գործընթացներ կարգավորող նշված մշակվել են են մասնավորապես 2016–2018.թ.թ:

փորձագիտական խմբի կազմի համաձայնեցումն ու փորձագիտական խմբի ղեկավարի փոփոխությունը՝ ՈԱԱԿ առաջարկով:

Փորձագիտական այցերի արդյունքները ամփոփվել են արտաքին գնահատում իրականացվող խմբի և բուհի ղեկավար կազմի հետ հանդիպումով, որի ընթացքում փորձագիտական խմբի ղեկավարը ընդգծել է՝ մասնավորապես վերջին երկու տարվա ընթացքում ՀՖԿՍՊԻ–ուում իրականացված բարեփոխումները նպաստել են գրեթե բոլոր ոլորտների առաջընթացին:Փորձագիտական խումբը նշել է նաև, որ կատարված աշխատանքները դեռևս հատվածական են և ինստիտուցիոնալիզացման անհրաժեշտություն ունեն:

Փորձագիտական գնահատականները ամփոփվել են ՀՖԿՍՊԻ–ի Ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում՝ հավատարմագրման 10 չափանիշներից 4–ը գնահատելով անբավարար (Չափանիշ 2, 3, 6 և 9), (ՈԱԱԿ որոշում N Հ-12/21-198, 12.20.2021թ.)

Փորձագիտական զեկույցը ստանալուց հետո ՈԱԲ–ի համակարգմամբ և հսկողությամբ բուհը անմիջապես ձեռնամուխ է եղել զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի մշակման աշխատանքներին (սահմանված 1 ամսում): Այդ ընթացքում աշխատախումբը առցանց հանդիպում է ունեցել ՈԱԱԿ-ի մասնագետի հետ, որի ընթացքում ներկայացվել է բարելավման պլանի ձևաչափը, քննարկվել են՝ ակնկալվող արդյունքի ձեռքբերումը մշտադիտարկելու և այն գնահատելու տեսակետից բուհը ինչպիսի միջանկյալ որակական և/կամ քանակական (KPI) արդյունքներ է նախատեսում ունենալ:

Այնուհետև ՈԱԲ–ի մշակած ժամանակացույցով իրականացվել են կանոնավոր հանդիպումներ տասը չափանիշների պատասխանատուների հետ, դրվել են բարելավման պլանի նախնական տարբերակները ՈԱԲ ներկայացնելու վերջնաժամկետներ, անհատականացված հանդիպումների ձևաչափով դիտարկվել են հավատարմագրման առանձին չափանիշների բարելավման պլանները՝ այն փոխկապակցելով բուհի ռազմավարական նոր ծրագրով նախատեսված գործողություններին, կարևորելով վերջնարդյունքների և գնահատման ցուցիչների տարանջատման հարցը, նախանշելով նաև իրատեսական ժամկետներ ու հատկացվող բյուջետային ներդրումներ՝ տվյալ փուլի ակնկալվող արդյունքը ապահովելու համար:

Ամբողջացնելով ՀՖԿՍՊԻ–ի հավատարմագրման զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիր–ժամանակացույցը՝ ՈԱԲ–ը այն ներկայացրել է ԳԽ հաստատմանը, այնուհետև սահմանված ժամկետում փոխանցել ՈԱԱԿ (18.03.2022թ.):

Ծրագրի վերաբերյալ փորձագիտական խմբի կարծիքը Հավատարմագրման հանձնաժողովին տրամադրելուց առաջ ՈԱԱԿ-ի Դիտարկող խումբը առցանց հանդիպում է ունեցել ՀՖԿՍՊԻ-ի ռեկտոր Դ. Խիթարյանի և բուհի ղեկավար անձնակազմի հետ՝ ստանալու լրացուցիչ տեղեկատվություն անբավարար գնահատված տիրույթների բարելավման քայլերի վերաբերյալ (23.05.2022թ.):

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը ամբողջականացվել է

հունիսի 14–ին ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովի ընդունած որոշմամբ՝ ՀՖԿՍՊԻ–ին շնորհելով ինստիտուցիոնալ հավատարմագրում՝4 տարի ժամկետով:

2. Շարունակական աջակցություն որակի մշակույթի զարգացմանն ու որակի ներքին ապահովման (ՈՆԱ) համակարգի բարելավմանը

Մասնագիտական կրթության որակի ապահովման ոլորտ

Որակի մշակույթը բուհում ամրապնդելու նպատակով հաշվետու տարում ՈԱԲ–ը կազմակերպել և իրականացրել է ներքի շահակիցների հետ խորհրդատվական հանդիպում–քննարկումներ, թիրախային վերապատրաստումներ, որոնք նպաստում են որակի մշակույթի տարածմանը և հիմքեր են ստեղծում ոլորտի բարեփոխումների համար: Մասնագիտության կրթական ծրագրերի ներքին մշտադիտարկումների արդյունքների ներկայացման նպատակով հանդիպումներ են տեղի ունեցել բուհի ներքին շահակիցների՝ պրոռեկտորների, դեկանների, ամբիոնի վարիչների, կրթական ծրագրերի պատասխանատուների, դասախոսների, ուսանողների և որակի պատասխանատուների հետ:

Քննարկումները ծավալվել են մասնավորապես ՄԿԾ առանձին բաղադրիչների խորքային ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված խնդիրների, դրանց լուծման գործում որակի ներքին ապահովման համակարգի դերակատարման ուժեղացման տեսանկյունից:

Իրականացված հանդիպում–վերապատրաստումները ընդգրկել են մասնավորապես հետևյալ տիրույթները.

1. ՀՖԿՍՊԻ–ում իրականացվող պրակտիկաների ծրագրերի մշակման փորձի միջանկյալ ուսումնասիրություն, արդյունքների ներկայացում ներքին շահակիցներին: Տվյալ մշտադիտարկման նպատակով ուսումնասիրվել ու գնահատվել են «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ», «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» և «Լրագրություն» մասնագիտությունների կրթական ծրագրերով իրականացվող պրակտիկաների ծրագրերի մշակման փորձը, որի արդյունքում գնահատվել է նաև պրակտիկայի նորամշակ ծրագրերի վերափոխումների նպատակայնությունն ու արդյունավետությունը:
2. Դասընթացների նկարագրերի ներբուհական փորձի գնահատում, որի շրջանակում անցկացվել են եռօրյա հանդիպումներ կրթական տարբեր ստորաբաժանումների և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ *(ընդհանուր 42 մասնակից):*

Մշտադիտարկման նպատակով ուսումնասիրվել ու գնահատվել են «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ», «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա», «Լրագրություն» բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում ընդգրկված առարկաների նկարագրիչները (60 օրինակ):

3. «Թեստը՝ որպես ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման մեթոդ» մշտադիտարկման արդյունքների քննարկում, որի ընթացքում առարկայական թեստերի թերությունները ներկայացվել են առանձին օրինակներով, ինչպես

օրինակ՝ դասընթացների չհատվելու պահանջի, պարզից դեպի բարդ սկզբունքի պահպանումը, պատասխանների ճշմարտանման լինելու, տարբեր կուրսերում հանդիպող հարցարանների կրկնությունները՝ զուգահեռ մեկաբանելով թեստային առաջադրանքների օրինակելի նմուշներ, պարզաբանելով «հիբրիդային» թեստերի մշակումն ու մեթոդաբանությունը:

Հաշվի առնելով մասնագիտական կարիքները՝ ՈԱԲ–ը ամբիոններին, դասախոսական կազմին տրամադրել է ՄԿԾ մշակման ուղեցույցներ, ներկայացրել արդյունահեն դասավանդման և ուսումնառության մեթոդներ ու մոտեցումներ, հասանելի դարձրել վերջնարդյունքահեն գնահատման մեթոդների ընտրության ուղենիշներ: Դրանցում ներկայացված մոտեցումներն ու կրթական մոդելները ևս պարզաբանվել են առանձին հանդիպումների ընթացքում:

ՈԱԲ–ը շարունակում է իր համագործակցությունը ՈԱ պատասխանատուների հետ՝ որպես մասնագիտական կրթության որակի ապահովման խնդիրների և փորձի փոխանակման հարթակ: ՈԱ պատասխանատուների հետ համագործակցությունը զգալիորեն օժանդակել է նաև ուսանողական հարցումների գործընթացի իրազեկման, համակարգման աշխատանքներին (ուսանողական առցանց խմբերում հարցման հղումների տարածում):

Հաշվետու տարում ՈԱԲ–ը մասնակցել է երկու ֆակուլտետի ամբիոնների դասախոսական կազմի հետ ՀՖԿՍՊԻ–ի ռեկտորի նախաձեռնած հանդիպումներին, որոնց ընթացքում քննարկվել են ծածկագրված գրավոր քննություններին արձանագրված թերությունները, կարևորվել է արտագրությունների կանխարգելման առավել խիստ մեխանիզմների կիրառումը:

Այս համատեքստում կարևոր է ընդգծել՝ ինչպես ցույց են տալիս ուսանողական հարցումների արդյունքները՝ ուսանողների մեծ մասի կողմից գիտակցվում է ներկա փուլում քննությունների խստացման կարևորությունը, կա նաև համընդհանուր ընկալում, որ քննությունները կարող են բարձրացնել գնահատման օբյեկտիվությունը, սակայն արդյունավետ ուսուցման տեսանկյունից գործող թեստերը[2], գնահատման մոտեցումները չեն ապահովում կրթության որակի ապահովման խնդրի իրագործումը:

3. Որակի ներքին ապահովման համակարգի ներքին մշտադիտարկումներ

ՈԱԲ ռազմավարական գերակայություններից է բուհում ամրապնդել որակի ներքին ապահովման անկախ մշտադիտարկող կառույցի դերակատարումը, որը ձգտում է ՀՖԿՍՊԻ–ի առաքելությանը համահունչ իրականացնել շահակիցների համար ընդունելի, օբյեկտիվ և անկախ գնահատումներ՝ ապահովելով որակի ներքին և արտաքին մշտադիտարկումների թափանցիկությունն ու փոխկապակցվածությունը: ՈԱԲ-ի կողմից իրականացվող գնահատումները հիմք են որակի հավաստման և բարելավման համար:

[2] Գնահատողական դատողությունը ձևավորվել է ՈԱԲ–ի կողմից ՀՖԿՍՊի–ում գործող քննական թեստերի մշտադիտարկման արդյունքում:

3.1 ՀՖԿՍՊԻ–ի 2017-2021 ռազմավարական ծրագրի կատարողականի ամբողջական գնահատում

ՀՖԿՍՊԻ–ի ռազմավարական ծրագրի ավարտին (2021թ. դեկտեմբեր) Որակի ապահովման բաժինը իրականացրել է ՌԾ պլան–ժամանակացույցով սահմանված գործողությունների ամբողջական գնահատում, որի նպատակն է թափանցիկ և հրապարակայնորեն ներկայացնել բուհի զարգացման ռազմավարական խնդիրների ուղղությամբ իրականացված աշխատանքները, ապահովել ՀՖԿՍՊԻ–ի գործունեության հաշվետվողականությունը ներքին և արտաքին շահակիցներին:ՌԾ կատարողականի գնահատումը հնարավորություն է ընձեռում մշտադիտարկելու ՀՖԿՍՊԻ–ի զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման գործընթացը, բացահայտելու առկա խնդիրները և նախանշելու դրանց լուծման ուղիները:

Հաշվետու տարում ՈԱԲ–ը գործուն մասնակցություն է ունեցել նաև ՀՖԿՍՊԻ–ի 2022–2026 թ.թ.–ի ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքներին (հաստատված՝ Հոգաբարձուների խորհրդի 2022թ.–ի հունվարի 19–ի թիվ 3–Լ որոշմամբ):

Հաշվետու ժամանակահատվածում ՈԱԲ–ի կողմից իրականացվել են կրթական գործընթացի որակի ապահովման բարելավմանը միտված հետևալ մշտադիտարկումները.

3.2 2020-2021 ուսումնական տարվա ավարտական աշխատանքների որակի գնահատում (համադրական խորքային վերլուծություն)

Իրականացված ուսումնասիրության շրջանակում գնահատվել է 2020-2021 ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրով ավարտական որակավորման աշխատանքների որակը, վեր են հանվել ավարտական աշխատանքների որակի ապահովման խնդիրներն ու խոչընդոտները՝ մասնագիտական կրթության որակի ապահովման ներբուհական բարելավումների համատեքստում:

Հետազոտության նպատակներն են՝

- ✓ պարզել ավարտական աշխատանքների կատարման ներկա վիճակը,
- ✓ ուսումնասիրել՝ որքանով են ավարտական աշխատանքները համապատասխանում ՀՖԿՍՊԻ–ում սահմանված պահանջներին,
- ✓ համապարփակ վերլուծության միջոցով բացահայտել խնդիրների կոնկրետ տիրույթները,
- ✓ աջակցել ավարտական աշխատանքների որակի բարելավման գործընթացներին:

Դիտարկված ավարտական աշխատանքներում համընդհանուր է որակի ապահովման սկզբունքների թույլ կիրարկումը, ինչը կարող է լինել ուսանողի կողմից գիտահետազոտական աշխատանք իրականացնելու հմտությունների պակասի, ավարտական աշխատանքի կատարման գործընթացի ոչ կանոնավոր վերահսկելիության, ավարտական աշխատանքների ղեկավարման մեթոդաբանական դժվարությունների հետևանք: Ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են մասնավորապես բովանդակային հետևյալ խնդիրներն ու թերությունները. առանձնացնենք առավել կարևորները՝

1. ավարտական աշխատանքների թեմաները կրկնվում են՝ ըստ տարիների և նույն տարվա ընթացքում,
2. առատ են վերնագրերի և ենթավերնագրերի ոչ գիտական ձևակերպումները,
3. թեմայի արդիականության և աշխատանքի բուն բովանդակության անհամապատասխանություն,
4. ավարտական աշխատանքի համար անիրատեսական և լայն նպատակներ/խնդիրներ,
5. նկարագրված չեն նպատակը և/կամ խնդիրները, կիրառված մեթոդները,
6. հետազոտության արդյունքների վերաբերյալ տվյալների բացակայություն, վիճակագրական տվյալների հավաստիության ցածր ցուցանիշներ,
7. հետազոտության արդյունքների թերի վերլուծություն,
8. ակադեմիական ազնվության խախտման և գրագողության կոնկրետ դեպքեր,
9. ապահովված չէ գնահատման չափանիշահենությունն ու թափանցիկությունը:

3.3 Թեստը՝ որպես ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման մեթոդ (թեստային հարցարանների մշակման ներբուհական փորձի մշտադիտարկում)

ՀՖԿՍՊԻ-ի մասնագիտության կրթական ծրագրերի որակի ապահովման ներքին մշտադիտարկումները միտված են ՄԿԾ–ների տարբեր բաղադրիչների շրջափուլային վերանայումների համակարգի զարգացմանը, որն ամրագրված է նաև ՀՖԿՍՊԻ–ի ռազմավարական նոր ծրագրում և որակի ներքին ապահովման (ՈՆԱ) վերանայվող քաղաքականությունում:

Ուսանողների գիտելիքների գնահատման համակարգում թափանցիկության և օբյեկտիվության մեխանիզմների ուժեղացման նպատակով ՀՖԿՍՊԻ–ում 2019-2020 ուսումնական տարում ներդրվել է անանուն՝ ծածկագրված թեստային գրավոր քննությունների ընթացակարգը, ձևավորվել է տարբեր ՄԿԾ–ներում ներառված դասընթացների ընթացիկ և քննական թեստերի բազա, քննական գործընթացը իրականացվել է գրավոր թեստավորմամբ:

ՀՖԿՍՊԻ–ում գործող գնահատման թեստերի այս մշտադիտարկման շրջանակում համակողմանիորեն ուսումնասիրվել և վերլուծվել են տարբեր առարկաների թեստերի հատկորոշիչները, այսպես կոչված՝ «թեստի անձնագիրը, նախագիծը», ըստ որի մշակվում է թեստի կառուցվածքն ու բովանդակությունը:

Հետազոտության շրջանակում ուսումնասիրվել է ընդհանուր 129 քննական թեստ՝ հաստատված 2021-2022 ուսումնական տարվա ընթացիկ և կիսամյակային քննությունների համար (1–ից 4–րդ կուրս)

ՀՖԿՍՊԻ–ում թեստային առաջադրանքների մշակման փորձի ուսումնասիրության արդյունքներից պարզ է դառնում, որ՝

- ✓ Դասավանդողները ավելի են կարևորում տեղեկատվական և փաստերի մեխանիկական մտապահումը ուսանողի կողմից՝ նախապատվությունը տալով ճիշտ պատասխանի ընտրության առաջադրանքներին (պատասխանի շատ պարզ տարբերակներով):

- ✓ Թեստային առաջադրանքները կազմված չեն պարզից դեպի բարդը սկզբունքով, չունեն տրամաբանական հաջորդականություն:
- ✓ Թեստային առաջադրանքները ընդգրկում են միայն տեսական գիտելիքները ստուգող առաջադրանքներ, իսկ գործնական կարողություններն ու հմտություններ չեն ստուգվում, որն էլ դեռևս հնարավորություն չի տալիս լիարժեք բացահայտել և ճիշտ գնահատել սովորողների մասնագիտական հմտություններն ու կարողությունները:
- ✓ Առարկայական վերջնարդյունքներին համապատասխանեցված թեստային հարցարան մշակելու գործում դասախոսական կազմը ունի որոշակի դժվարություններ:

3.4 ՀՖԿՍՊԻ–ում իրականացվող պրակտիկայի ծրագրերի մշակման փորձի միջանկյալ ուսումնասիրություն

Բարձրագույն կրթության որակի ապահովման ժամանակակից քննարկումների համատեքստում հատկապես արդիական է դարձել պրակտիկ գիտելիքների և հմտությունների զարգացման կրթական մոդելի մշակման և ներդրման հարցը:

2019-2020 ուսումնական տարում ինստիտուտում մասնագիտության կրթական ծրագրերի վերանայման գործընթացի շրջանակում վերամշակվել է նաև պրակտիկայի ծրագրի ձևաչափը, ինչին հաջորդել են նոր ձևաչափով պրակտիկայի ծրագրերի կազմման աշխատանքները:

ՀՖԿՍՊԻ–ի Որակի ապահովման բաժնի կողմից իրականացված սույն միջանկյալ մշտադիտարկման նպատակն է ուսումնասիրել և գնահատել պրակտիկայի նորամշակ ծրագրերի[3] վերափոխումների նպատակայնությունն ու արդյունավետությունը, ծրագրերի մշակման գործընթացին մոտենալ արդյունքի տեսանկյունից, ինչպես նաև՝ դասախոսական կազմին և կրթական ծրագրերի մշակման աշխատանքային խմբերին գործնական խորհրդատվություն տրամադրել բացահայտված խնդիրների և անհամապատասխանությունների վերաբերյալ, ինչը կօգնի համարժեք քայլեր ձեռնարկել պրակտիկայի արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

Մշտադիտարկման շրջանակում ուսումնասիրվել են «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ», «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» և «Լրագրություն» մասնագիտությունների կրթական ծրագրերով իրականացվող պրակտիկաների ծրագրերը, որոնց բարելավման նպատակով խորհուրդ է տրվում.

- ✓ տարանջատել պրակտիկայի աշխատածավալի և ժամային բեռնվածության նպատակային բաշխվածությունը,

[3] Վերամշակված պրակտիկայի ծրագրերը գործնականում ուժի մեջ են մտնում 2023-2024 ուսումնական տարում:

- ✓ սահմանել հստակ առաջադրանքներ, հանձնարարականներ և գնահատման մեխանիզմներ, որոնցով հնարավոր կլինի գնահատել ուսանողի կողմից պրակտիկայի վերջնարդյունքների ձեռքբերումը,
- ✓ պրակտիկան դիտարկել որպես առանձին կրթական մոդուլ՝ ուսումնառության հստակ ձևակերպած վերջնարդյունքներով և համապատասխան ակադեմիական կրեդիտների տրամադրման հնարավորությամբ,
- ✓ պրակտիկայի ծրագրի մշակմանը ներգրավել գործատուներին և պրակտիկա անցկացնող հաստատությունների ներկայացուցիչներին,
- ✓ ներդնել պրակտիկայի գնահատման արդյունավետության բարձրացմանը միտված մեխանիզմներ՝ համապատասխան ընթացակարգով՝ պրակտիկան ընդունող կազմակերպության հետ նախապես քննարկելով և համաձայնեցնելով պրակտիկայի ծրագիրը, գնահատման չափանիշներն ու մեթոդները:

3.5 Մասնագիտական կրթական ծրագրերում իրականացված բենչմարքինգի արդյունավետության գնահատում

ՀՖԿՍՊԻ–ի մասնագիտության կրթական ծրագրերի վերջին վերանայումների (2020-2021 ուսումնական տարի) շրջանակում իրականացված բենչմարքինգի (համեմատական վերլուծություն) միջոցով փորձ է արվել բուհի կրթական ծրագրերը մոտարկել միջազգային լավագույն կրթափորձին:

Սույն միջանկյալ ուսումնասիրությունը նպատակ ունի գնահատելու ՀՖԿՍՊԻ–ի կրթական ծրագրերի բենչմարքինգի հուսալիությունն ու հենանիշ (էտալոնային) արտերկրյա բուհերի հետ համադրելիությունը, պարզելու՝ արդյոք բենչմարքինգի արդյունքում ձևավորվել է «շարժունության պատուհան» և ինչպես է այն նպաստում/կամ կարող է նպաստել ուսանողական և ակադեմիական շարժունությանը:

ՀՖԿՍՊԻ–ում իրականացվող բակալավրի կրթական ծրագրերի վերանայման գործընթացում միջազգային բուհերի համանման կրթական ծրագրերի հետ արված համեմատական վերլուծության (բենչմարքինգի) արդյունքների տեղայնացման ներբուհական փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս անելու դրական և բացասական եզրահանգումներ, որոնք որոշակիացնում են բենչմարքինգի միջոցով ՄԿԾ–ների միջազգայնացմանը նպաստելու գործընթացի ուժեղ և թույլ կողմերը:

Դրական փաստեր

- Համանման միջազգային կրթական ծրագրերի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) կարևորության գիտակցումը ՄԿԾ պատասխանատուների կողմից:
- Բենչմարքինգի արդյունքների տեղայնացումը վերանայված կրթական ծրագրերում (թեև այս փորձը դեռևս ինստիտուցիոնալացված չէ):
- Միջազգային ՄԿԾ առարկայացանկի մոտարկում, ներառված են դասընթացներ/մոդուլներ, որոնք կարող են նպաստել ուսանողների միջազգային մրցունակությանը («Լրագրություն» ՄԿԾ):

- Դասախոսական շարժունության այցի իրականացում, ուսանողական շարժունության ծրագրի նախապատրաստում («ՖԴՍՄ» ՄԿԾ):

Բացասական փաստեր

- Բենչմարքիգի քաղաքականության իրականացման ցածր արդյունավետություն:
- ՄԿԾ աշխատախմբերում բենչմարքինգի մեթոդաբանության և գործիքակազմի կիրառման փորձի պակաս:
- ՄԿԾ պատասխանատուների (աշխատախմբերի) ապակենտրոնացված աշխատանք, Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի բաժնի հետ թույլ համագործակցություն:
- Հստակ քանակական և որակական տվյալների վրա հիմնված խորքային համեմատական վերլուծությունների պակաս, որոշ դեպքերում՝ անհրաժեշտ տեղեկատվության բացակայություն («ՖԴՍՄ», «Կինեզիոլոգիա» ՄԿԾ–ներ):
- Միջազգային ՄԿԾ–ների ոչ ամբողջական համադրելիություն, ինչը կարող է լրացուցիչ դժվարություններ առաջացնել փոխանակման և շարժունության ծրագրեր իրականացնելիս:

4.Հետադարձ կապի մշակույթի զարգացում

Ներքին և արտաքին շահակիցների հետ կայուն հետադարձ կապի ձևավորում, հետադարձ կարծիքի միջոցով ստացվող տեղեկատվության կիրառումը որոշումների կայացման գործընթացում (ՊԻԳԲ շրջափուլի ապահովում)

2021-2022 ուսումնական տարում ևս ՈԱԲ–ի կողմից իրականացված հարցումները միտված են եղել ուժեղացնելու ներքին շահակիցների ներգրավվածությունն ու նրանց հետ արդյունավետ համագործակցությունը կրթության որակի ապահովման գործընթացներում:

Հաշվետու տարում ՈԱԲ–ը շարունակել է կանոնավոր իրականացնել սոցհարցումներ, ավելի շատ է կիրառվել դեմ առ դեմ հաղորդակցության, ֆոկուս խմբային քննարկումների մեթոդը, որը հնարավորություն է տալիս վերլուծություն կատարել ՈՆԱ յուրաքանչյուր ուղղության համար և բարելավման առաջարկություններ անել:

ՈԱԲ 2021-2022 աշխատանքային պլանի համաձայն՝ ներքին շահակիցների հետ իրականացվել են հետևյալ հարցումները.

4.1 Պրոֆեսորադասախոսական կազմի (ՊԴ) կարիքների վերհանում և գնահատում

ՀՖԿՍՊԻ–ի դասախոսական կազմի հետ պարբերաբար անցկացվող հարցումները իրականացվում են ՀՖԿՍՊԻ-ի գործունեության տարբեր ասպեկտների (ՊԴ կազմի մասնակցութունը բուհի կառավարմանը, ՊԴ կազմի և ղեկավարության միջև կայուն կապի ապահովում, դասավանդողների բավարարվածությունը տրամադրվող ռեսուրս-ներից, գիտահետազոտական գործունեություն, հետազոտական և նորարարական գործունեության փոխկապակցումը ուսուցման գործընթացին, միջազգայնացում) որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ մշակելու և իրականացնելու նպատակով, որը թույլ է տալիս վերհանել պրոֆեսորադասախոսական կազմի գործառնության դրական և

բացասական միտումները, առանձնացնել հիմնախնդիրները և ժամանակին արձագանքել դրանց:

Հարցման արդյունքում ստացված տվյալները թույլ են տալիս կատարել հետևյալ ***եզրակացությունները.***

✓ ՊԴ կազմի գոհունակությունը ներքին տեղեկատվական համակարգից, աշխատակիցների կարծիքների արտահայտման, բողոքներին արձագանքելու մեխանիզմներից

Դասախոսների մեծ մասը տեղեկացված է իր իրավունքներին և պարտականություններին ու պարբերաբար իրազեկվում է Ինստիտուտում իրականացվող կրթական բարեփոխումներին:

Հարցված դասախոսները մեծ կարևորությունն են տալիս բուհում կրթության որակի բարձրացմանն ուղղված բարեփոխումներին (87%), ապա՝ նյութատեխնիկական բազայի արդիականացմանը (64%), աշխատանքային պայմանների բարելավմանը (58%):

✓ ՊԴ կազմի գոհունակությունը դասավանդման գործընթացի համար ապահովված պայմաններից և ռեսուրսներից

2020-2021 ուստարի



2021-2022 ուստարի



Չնայած ռեսուրսների արդիականացման տեսանելի փոփոխություններին, իր աշխատանքային պարտականություններն ավելի լավ կատարելու համար դասախոսական կազմը ընդգծում է ուսուցման ժամանակակից պայմանների բարելավման անհրաժեշտությունը (ինտերակտիվ գրատախտակներ, վերանորոգված ու ջեռուցվող մարզադահլիճներ, արդիական ու նոր մարզագույք, մարզաբազա, մասնագիտական ժամանակակից գրականություն):

✓ ՊԴ կազմի գոհունակությունը դասավանդողների գիտահետազոտական գործունեությունը խթանող մեխանիզմներից

Հարցվածների միայն 43%-ն է համոզված, որ բուհում առկա է դասախոսների գիտական գործունեությունը խրախուսող հավելավճարների համակարգ, 41%-ը տեղյակ

չէ այդ մասին, իսկ 8%-ը կարծում է, որ չկա այդպիսի համակարգ: Պարզ է դառնում նաև, որ դասախոսների գիտական գործունեության հիմնական խոչընդոտներն են՝ հետազոտական սարքավորումների, մոտիվացիայի պակասը և ժամանակի սղությունը:

2020-2021 ուստարի



2021-2022 ուստարի



4.2 Վարչական անձնակազմի կարիքների վերհանում և գնահատում

Հետազոտության շրջանակում գնահատվել է վարչական կազմի գոհունակությունը աշխատանքային պայմաններից, վերապատրաստման հնարավորություններից, ինչպես նաև բացահայտվել են աշխատանքային դրդապատճառները և հավաքագրվել վարչական կազմի առաջարկությունները իրենց բաժնի և բուհի բարեփոխումների վերաբերյալ:

Հարցման վերլուծության արդյունքներից պարզ է դառնում, որ վարչական աշխատակիցների շրջանում գերակշռողը նոր մասնագիտական հմտություններ և փորձառություն ձեռք բերելու շարժառիթն է (38%), ապա՝ ոլորտի հմուտ մասնագետ դառնալը (34%): Աշխատակիցներին իրենց աշխատանքը առավել լավ կատարելու համար կարող է մոտիվացնել ավելի բարձր վարձատրությունը և ղեկավարի բարձր գնահատականը:

4.3 **Ուսանողական հարցումներ**

ՀՖԿՍՊԻ-ն կարևորում է ուսանողների ներգրավվածությունը կրթության որակի ապահովման գործընթացներում և ձգտում է ապահովել հետադարձ կապի շարունակականությունն ու ներկայացուցչականությունը:

Հաշվետու ժամանակահատվածում ՈԱԲ-ի կողմից իրականացվել են ուսանողական հետևյալ հարցումներն ու ֆոկուս խմբային հետազոտությունները.

4.3.1 Մասնագիտության ընտրության դրդապատճառների և կրթական միջավայրի բարելավման վերաբերյալ հարցում

Հարցման նպատակն էր պարզել ՀՖԿՍՊԻ ընդունված ուսանողների՝ Ինստիտուտում սովորելու որոշման վրա ազդող գործոնները, բացահայտել տվյալ մասնագիտության ընտրության դրդապատճառները, վերհանել ուսանողների կրթական ակնկալիքներն ու սպասումները, ինչպես նաև պարզել դիմորդների շրջանում բուհի մասին տեղեկատվության աղբյուրները:

Հարցվողների կեսից ավելի՝ 59%-ը նշել է, որ ընտրած մասնագիտությունն իրենց հոգեհարազատ է, կամ որ հետագայում կարող են աշխատել այդ մասնագիտությամբ (47%):

Հարցվածների 52%-ը *գոհունակությունն* է հայտնել բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական բարձր որակների, 32%-ը՝ ուսանողների նկատմամբ դրական վերաբերմունքի, 31%-ը դասավանդման նորարարական մոտեցումների ու մեթոդների, 18%-ը դասերի 70 որպե տևողության, 13%-ը ուսանողական հագեցած կյանքի և այլ պայմանների համար:

Բուհում կրթական միջավայրի բարելավման համար հարցվածները առավել մեծ նշանակություն են տվել քննական/գնահատման համակարգի բարեփոխման, պրակտիկայի առավել վաղ կազմակերպման, գրադարանը մասնագիտական նոր գրականությամբ համալրելու, բուհի մարզագույքի, շենքային/լսարանային պայմանների բարելավման, նոր դասավանդման մեթոդների ներդրման անհրաժեշտությանը:

Որո՞նք են ինստիտուտում ուսումնառության դրական կողմերը

2020-2021 ուստարի



2021-2022 ուստարի



Որո՞նք են ինստիտուտում ուսումնառության բացասական կողմերը

2020-2021 ուստարի



2021-2022 ուստարի



4.3.2 [Ուսանողների ուսումնական գործընթացն ապահովող ռեսուրսների և ինստիտուտի կողմից առաջարկվող ծառայությունների արդյունավետության գնահատում]

Հետամուտ լինելով ուսանողության կարիքների գնահատման շարունակականության ապահովմանը՝ ՈԱԲ–ը այս հարցումից առաջ հանդիպում է անցկացրել ուսանողության ներկայացուցիչներ հետ, հավաքագրել նրանց հուզող ներկայիս խնդիրներն ու մտահոգությունները: Ֆոկուս խմբային հանդիպումից հետո մշակվել է հարցաթերթիկ, որում ներառված հարցապնդումները, ի արձագանք, անդրադառնում են կրթական գործընթացի այսօրեական խնդիրներին, իրականացվող փոփոխությունների արդյունավետությանն ու նոր վերափոխումների անհրաժեշտությանը:

Հարցման վերլուծության արդյունքներն են.

Բուհի ուսանողների կեսից ավելին մեծամասամբ իրազեկված են իրենց իրավունքների և պարտականությունների, բուհում առկա ուսման վարձի զեղչման կարգի, ինչպես նաև մասնագիտության կրթական ծրագրի վերաբերյալ (նպատակ, վերջնարդյունք, որակավորման շնորհում, աշխատանքի հնարավորություններ և այլն): Այս մասին իրազեկողները հիմնականում նրանց դասախոսներն են, ամբիոնի վարիչները, բուհի ֆեյսբուքյան էջը, կուրսի խորհրդատուները:

Հարցումը նաև ցույց տվեց, որ բուհի սոցիալական էջն ունի առաջնային նշանակություն ինստիտուտի գործունեության և իրականացվող բարեփոխումների մասին տեղակատվության հաղորդման տեսանկյունից: Ուսանողների 57%-ը բուհի ֆեյսբուքյան էջից է տեղեկանում վերջինիս գործունեության և իրականացվող բարեփոխումների մասին, դասախոսներից՝ 44%-ը, իսկ բուհի պաշտոնական կայքից՝ 30%-ը:

Բուհի տարբեր ստորաբաժանումների և կառույցների աշխատանքը գնահատելիս ուսանողներն առավել բարձր գնահատականներ են տվել գրադարանին, անվտանգության ծառայությանը, ամբիոնների աշխատանքին, Որակի ապահովման

բաժնին, իսկ առավել ցածր գնահատականներ՝ Ուսանողական խորհրդի և Պրակտիկայի ու կարիերայի բաժնի աշխատանքին:

2020-2021 ուստարի



2021-2022 ուստարի



ՀՖԿՍՊԻ գնահատման համակարգում հաճախումներին 20 միավոր հատկացնելու վերջին որոշմանը դրական է վերաբերում ուսանողների գրեթե կեսը՝ 53%-ը, իսկ՝ 46%-ը բացասական:

Ստուգարքները քննություններով փոխարինելու բուհի որոշմանը ուսանողների գրեթե կեսը՝ 46%-ը, բացասաբար է վերաբերում: 20%-ը չեզոք կարծիքի է, և միայն 29%-ն է դրական վերաբերում այս որոշմանը:

Այս հարցմամբ ձեռք են բերվել բուհի ուսանողությանը հուզող մի շարք այլ հարցերի մասին տեղեկություններ, որոնք ներառված են բուհի ռեկտորին ուղղված առաջարկությունների բաժնում: Ուսանողների կողմից բարձրաձայնված խնդիրները վերաբերում են բուհի գույքային/նյութատեխնիկական հագեցվածությանը, շենքային պայմանների անբարեկարգ վիճակին, դասերի մեկնարկի ժամին և տևողությանը, առարկայացանկին, բուհի ընդունելության կարգի խստացմանը, դասախոսների աշխատավարձերի/մոտիվացիայի հարցերին, քննությունների և գնահատման համակարգի վերանայմանը, ինչպես նաև ուսման վարձերին:

4.3.3 [ՀՖԿՍՊԻ–ում դասավանդման որակի և դասընթացի արդյունավետության գնահատում]

Հարցման նպատակն է պարբերաբար ուսումնասիրելու դասավանդման և ուսուցման մեթոդաբանության առկա խնդիրները, աջակցելու ուսանողակենտրոն ուսուցման նոր մոտեցումների ներդրմանը, պարզորոշելու դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների թիրախային ոլորտներն ու ուղղությունները:

Ուսումնասիրության շրջանակում լրացվել է 2264 հարցաթերթ՝ 45%-ը բուհի Առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման, իսկ 55%-ը Մարզչամանկավարժական ֆակուլտետի ուսանողների կողմից:

ՀՖԿՍՊԻ բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների շրջանում անցկացված այս հարցումը օգնել է վերհանել բուհի պրոֆեսորադասախոսական կազմի յուրաքանչյուր ներկայացուցչի մասնագիտական և մանկավարժական որակները, ինչպես նաև վերջիններիցս ուսանողների գոհունակության աստիճանը:

4.3.4 ՀՖԿՍՊԻ–ում իրականացվող մասնագիտական պրակտիկայի գնահատում (ուսանողական հարցում, ֆոկուս խմբային քննարկում)

Համաձայն «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ ՀՖԿՍՊԻ) կողմից կազմակերպված պրակտիկայի գնահատման կանոնակարգի՝ ՀՖԿՍՊԻ–ի Որակի ապահովման բաժինը (ՈԱԲ) պարբերաբար իրականացնում է մասնագիտական պրակտիկայի գնահատում: Պրակտիկայի մասնակից ուսանողների հետ անցկացվող հարցումները նպատակ ունեն պարզելու և գնահատելու պրակտիկայից ուսանողների բավարարվածության աստիճանը և բարձրացնելու պրակտիկայի արդյունավետությունը:

Պրոբլեմային իրավիճակ: 2020-2021 ուսումնական տարում մանկավարժական/մասնագիտական պրակտիկայի գնահատման նպատակով ՈԱԲ–ի կողմից անցկացվել էր ուսանողական հարցում «Լրագրություն» (83% մասնակցություն), «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզոլոգիա» (45% մասնակցություն), «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» (54% մասնակցություն), որի արդյունքում գրանցվել էին պրակտիկայի արդյունավետությունից ուսանողների գոհունակության ցածր ցուցանիշներ. ուսանողների դժգոհությունները հիմնականում վերաբերում էին պրակտիկայի պատասխանատուների (ամբիոն, պրակտիկա ընդունող կազմակերպություն) թույլ վերահսկողությանը, մատնանշվում էր նաև մեթոդիստների կողմից պրակտիկանտների հետ անհատականացված աշխատանքների պակասը՝ գործնական հմտությունների զարգացման տեսանկյունից («Լրագրություն», «Կինեզոլոգիա»):

2021-2022 ուսումնական տարում ՈԱԲ–ի կողմից անցկացված ֆոկուս խմբային քննարկման (ՖԽՔ) նպատակն է 2020-2021 ուստարվա ուսանողական հարցման միջոցով ստացված քանակական տվյալների հիման վրա իրականացնել խորքային գնահատում՝ պարզելու 2021–2022 ուսումնական տարում ՀՖԿՍՊԻ–ում իրականացված պրակտիկայի արդյունավետությունը, վեր հանելու նախորդ ուսումնական տարվա պրակտիկայի ոչ արդյունավետ գործառնման պատճառները, գնահատելու ուսանողների գոհունակության ներկայիս վիճակը՝ փորձելով նաև հասկանալ, թե որքանով են հաղթահարվել նախորդ հարցմամբ բացահայտված թերությունները:

Ուսանողների, կրթական ծրագրի պատասխանատուների, պրակտիկայի մեթոդիստների, Որակի ապահովման, Պրակտիկայի և Կարիերայի բաժինների ղեկավարների մասնակցությամբ անցկացված ֆոկուս խմբային քննարկման արդյունքներից պարզ է դառնում, որ նախորդիվ արձանագրված խնդիրները որոշակիորեն հաղթահարվել են՝ հանգեցնելով պրակտիկանտների գոհունակության բարձրացմանը. 2021-2022 ուստարում պրակտիկանտները առավել գոհ են հետևյալ պայմաններից/գործոններից.

- ✓ Պրակտիկայի սկզբում պրակտիկայի ծրագրի և պրակտիկայի անցկացման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում,
- ✓ Պրակտիկան կազմակերպումը վերջինիս ծրագրին համապատասխան,

✓ Գիտելիքների և գործնական կարողությունների մակարդակի բարձրացման համար պրակտիկայի արդյունավետությունը (նախորդ տարվա համեմատ վերջինս առավել բարձր՝ 40% ցուցանիշ է արձանագրվել լրագրողների մոտ),

✓ Տեսական և գործնական առաջադրանքների հստակությունը (վերջինս նույնպես լրագրողների մոտ աճ է ունեցել այս տարի՝ 33%-ից 60%),

✓ Ընդունող կազմակերպության աջակցությունը պրակտիկայի ընթացքում և պրակտիկայի բազայում տեղի մասնագետի աշխատանքը:

4.3.5 ՀՖԿՍՊԻ–ում իրականացվող կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատում

Հարցման նպատակն էր բացահայտել և գնահատել ՀՖԿՍՊԻ–ի շրջանավարտների բավարարվածության մակարդակը բուհում ստացած կրթության որակից: Հարցմանը մասնակցել է ՀՖԿՍՊԻ–ի 423 շրջանավարտների, կամ՝ 529 շրջանավարտներից 80%-ը:

Հարցման արդյունքում ստացված տվյալները թույլ են տալիս կատարել հետևյալ ***եզրակացությունները.***

Մարզչամանկավարժական ֆակուլտետի շրջանավարտների ընդամենը 36%-ն է ցանկություն հայտնել բուհն ավարտելուց հետո աշխատել որպես մանկավարժ (ֆիզկուլտուրայի ուսուցիչ): Վերջիններս ավելի շատ հակված են աշխատել որպես մարզիչ (49%), կամ մարզիչ-մանկավարժ (14%)՝ ակնկալելով ավելի բարձր վարձատրություն այդ աշխատանքի դիմաց:

Ինչ վերաբերում է բուհում ստացած մասնագիտությամբ աշխատելու հեռանկարին, ապա կարելի է նշել, որ կինեզիոլոգները, սպորտային տուրիզմի և մենեջմենթի/մարքեթինգի մասնագետներն ավելի մեծ հեռանկար են տեսնում այդ առումով, քան մարզիչ-մանկավարժները: Բուհում ստացած գիտելիքները համապատասխան գործատուի մոտ (ըստ մասնագիտության) աշխատանքի անցնելու համար *լիովին բավարար է* համարել հարցված շրջանավարտների 64%-ը. վերջինս շատ բարձր է (86%) մարզիչ-մանկավարժների մոտ, իսկ համեմատաբար ցածր՝ լրագրողների (58%), մենեջմենթի/մարքեթինգի մասնագետների (43%) և կինեզիոլոգների մոտ (33%):

2020-2021 ուստարի



2021-2022 ուստարի



Ուսանողի գնահատականի վրա ազդող գործոններից այս տարի էլ ավելի բարձր (65%) տեղ են տվել *գիտելիքը կիրառելու կարողություններին*, իսկ գնահատականի վրա հաճախումների ազդեցությանը նախորդ տարվա 45%-ի դիմաց այս տարի 35%-ն է նշել:

Ինչ վերաբերում է շրջանավարտներին մտահոգող այլ խնդիրներին, ապա նախորդ տարվա նման, այս տարի ևս առավել հաճախ նշվել է մասնագիտական առարկաների ծրագրերի վերանայման (գործնական ուղղվածության առումով), կրթության խրախուսման նոր ձևերի ներդրման, շրջանավարտների աշխատանքի տեղավորման ուղղորդման աշխատանքների բարելավման և մի շարք այլ առաջնահերթությունների մասին:

Ըստ 2021-2022թ. հարցման արդյունքների՝ նախորդ տարվա համեմատությամբ բարելավվել են բուհում կրթության մեջ ժամանակակից տեխնիկական ռեսուրսներով (օրինակ՝ ինտերակտիվ լսարաններով) ապահովվածության մակարդակը, արտերկրում կրթությունը շարունակելու հնարավորությունները, ուսանողների գիտելիքների գնահատման օբյեկտիվությունը, բուհի կարիերայի կենտրոնի աշխատանքը, լսարանների վիճակը և կահավորանքը:

Միջին հաշվով, ՀՖԿՍՊԻ-ում ստացած իրենց կրթությունը «լավ» կամ «գերազանց» են գնահատել այս տարվա շրջանավարտների 84%-ը՝ նախորդ տարվա 80%-ի դիմաց: Իրենց ստացած կրթությունից այս տարվա շրջանավարտներից առավել դժգոհ են կինեզիոլոգներն ու սպորտային հոգեբանները, իսկ առավել գոհունակ՝ մարզիչ-մանկավարժները, մենեջմենթ/մարքեթինգի մասնագետներն ու սպորտային տուրիզմի մասնագետները:

5. **Վերապատրաստման, փորձի փոխանակման դասընթացների արդյունավետության մեկանգամյա գնահատում**

Հաշվետու ժամանակահատվածում, ՈԱԲ–ը համագործակցելով տարբեր ստորաբաժանումների հետ, կատարել է վերջիններիս կողմից իրականացված վերապատրաստումների արդյունավետության գնահատում, մասնավորապես ՝ «Լսարանից աշխատաշուկա» դասընթաց ուսանողների համար, «Գիտական սեմինար» երիտասարդ դասախոսների որակավորման բարձրացման դասընթացների շարք:

Գնահատման արդյունքներից պարզ է դառնում, որ վերապատրաստման ծրագրերում ընդգրկված մասնակիցները հիմնականում գոհ են մատուցված նյութի բովանդակությունից, դասընթացների մեկնարկին ունեցած ակնկալիքները հիմնականում համապատասխանում են ձեռքբերված վերջնարդյունքին՝ նպաստելով նոր գիտելիքների և հմտությունների յուրացմանը, վեր են հանվել են նաև որոշակի խնդիրներ և արվել են բարելավման առաջարկություններ:

6. **Տեղական և միջազգային պրակտիկայի ուսումնասիրության հիման վրա ՈՆԱ գործընթացները կանոնակարգող փաստաթղթերի վերանայում**

Որակի կառավարումը (ՊԻԳԲ շրջափուլով)՝ ներառյալ որակի ապահովման գործընթացները ՀՖԿՍՊԻ–ի կիառավարման նոր համակարգի հիմքում ընկած սկզբունքն է: Գործառնական մակարդակում Որակի ապահովման բաժինը մեծացրել է

իր ազդեցությունը որակի ներքին ապահովման տարբեր գործընթացների շարունակական գնահատման ոլորտում:

Կարևոր է ընդգծել նաև այն, որ վերջին տարիներին որակի ապահովման մի շարք մեխանիզմներ և գործիքներ կանոնավոր կերպով գործադրվում են, որոնք, սակայն, արտահայատված չեն ՈՆԱ գործող քաղաքականությունում. մասնավորապես բացակայում են ընթացիկ գնահատումներն ու բարելավման ընթացակարգերը առանձին խոշոր ուղղությունների համար (այս մոտեցման դեպքում խրախուսվում են հարցումների իրականացումը, գործընթացների խորքային վերլուծությունն ու գնահատումը):

Որակի ներքիան ապահովման քաղաքականության վերանայման նպատակով ՈԱԲ–ը իրականացրել է ՈՆԱ քաղաքականության համեմատական վերլուծություն (միջազգային բենչմարքինգ): Այնուհետև, հիմք ընդունելով ՈՆԱ միջազգային բենչմարքինգի արդյունքները, ՈԱԲ–ը վերանայել է որակի ապահովման քաղաքականությունը, որը հիմնված է մշտադիտարկման, որակի ապահովման ներքին աուդիտի, ներքին և արտաքին շահակիցների հետ կարիքների պարբերական գնահատման, բենչմարքինգի (համեմատական վերլուծություն) վերլուծական տվյալների վրա՝ բարձրագույն կրթության եվրոպական տարածքում (ESG) գործող չափանիշների և չափորոշիչների փոփոխություններին համապատասխան՝ հավաստիացնելով, որ դրանք վավեր են, արդիական և համապատասխանում են միջազգային հավատարմագրման ու որակի ապահովման ոլորտում առկա վերջին միտումներին ու զարգացումներին:

Որակի ապահովման քաղաքականությամբ սահմանված ՈԱ գործընթացների և ոլորտների պարբերական գնահատման նպատակով մշակվել և Գիտական խորհրդի նիստում հաստատվել է «Որակի ապահովման ներքին աուդիտի անցկացման կանոնակարգ»–ը:

ՈԱԲ-ը մասնակցել է նաև մի շարք հենքային փաստաթղթերի մշակմանն ու վերամշակմանը, ինչպես օրինակ՝

Վերանայված կրթական ծրագրեր, մասնավորապես՝

- ✓ «Ադապտիվ սպորտ» մագիստրոսի կրթական ծրագիր (հաստատված՝ 2022թ.–ի ապրիլի 29–ի Գիտական խորհրդի 97–Լ որոշմամբ)
- ✓ «Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա» բակալավրի կրթական ծրագիր (հաստատված՝ 2022թ.–ի ապրիլի 29–ի Գիտական խորհրդի 99-Լ որոշմամբ)
- ✓ «Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա» մագիստրոսի կրթական ծրագիր (հաստատված՝ 2022թ.–ի ապրիլի 29–ի Գիտական խորհրդի 98-Լ որոշմամբ)
- ✓ «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» մագիստրոսի կրթական ծրագիր (հաստատված՝ 2022թ.–ի ապրիլի 29–ի Գիտական խորհրդի 96-Լ որոշմամբ)

Ներքին իրավական ակտեր, կարգավորող փաստաթղթեր

- ✓ ՀՖԿՍՊԻ–ի կառուցվածքային ստորաբաժանումների վերանայված կանոնակարգեր

✓ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի

պրոֆեսորադասախոսական համակազմի և վարչական անձնակազմի թափուր հաստիքների համալրման ընթացակարգ

✓ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանումների, ՊԴ և վարչական աշխատակիցների տարեկան աշխատանքների պլանավորման, կատարված աշխատանքների ամփոփման և գնահատման» ընթացակարգ

✓ «Մանկավարժություն» որակավորումների ոլորտային շրջանակի բնութագրեր (6–րդ և 7–րդ մակարդակ)

7. **Համագործակցություն ՀՀ ՈԱԱԿ-ի հետ**

Համավարակի շարունակականությամբ պայմանավորված՝ ՀՖԿՍՊԻ–ի և ՀՀ Որակի ապահովման ազգային կենտրոնի հետ համագործակցությունը իրականացվել է առցանց հանդիպումների և քննարկումների միջոցով:

ՈԱԲ համակարգմամբ բուհը մասնակցել է ՈԱԱԿ–ի կողմից կազմակերպված «ՄԿԾ որակի ապահովման ներբուհական մեխանիզմները՝ ՄԿԾ բարելավման հիմքում» առցանց քննարկմանը, որտեղ «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» բակալավրի կրթական ծրագրի օրինակով ներկայացվել է ՄԿԾ բարելավման ներբուհական լավ փորձը, մասնավորապես՝ կրթական ծրագրի մշտադիտարկմամն շրջանակում ներքին և արտաքին շահակիցների հետ աշխատանքի արդյունքում իրականացրած բարեփոխումները, աշխատաշուկայի կարիքների ուսումնասիրման շարունակականությունը, դասախոսական կազմի վերապատրաստումների իրականացում՝ խառը ուսուցման գործիքների կիրառելիության անհրաժեշտության տեսանկյունից:

Նշենք, որ առնացք քննարկմանը մասնակցում էին ՀՀ տարբեր բուհերից դասախոսներ, ՄԿԾ պատասխանատուների, պրոռեկտորներ և այլ աշխատակիցներ (թվով 100 մասնակից):

ՈԱԱԿ–ի հետ համագործակցության շրջանակում ՈԱԲ–ը մասնակցել «Որակի ապահովումը՝ ապագայի հեռանկար» համաժողովին, որի **նպատակն էր քոլեջների ներկայացուցիչների և շահակիցների հետ քննարկել հավատարմագրման գործընթացի ազդեցությունը միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների զարգացման համատեքստում: Միջոցառման ընթացքում քննարկվել են արտաքին գնահատման գործընթացների արդյունքները և առկա մարտահրավերները կառավարման բարձր օղակների և որակի ապահովման պատասխանատուների տեսանկյունից, փորձագիտական կարողությունների ձևավորումը ու դրա ներգործությունը միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման համակարգի վրա:**

ՈԱԱԿ–ի հետ համագործակցային կապերի շարունակականության տեսանկյունից կարևոր է նաև ՈԱԲ–ի ղեկավար Գ. Մուրադյանի ներգրավումը

«Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի» հավատարմագրման փորձագիտական խմբի կազմում:

8. Միջազգային համագործակցություն

Հաշվետու տարում ՈԱԲ-ը ակտիվորեն ներգրավված է միջազգային գործընկեր կառույցների կազմակերպած միջոցառումներին և վեբինաներին, գործընկերային նոր հարաբերություններ է ձևավորել արտասահմանյան բուհերի ներկայացուցիչներին հետ:

Արդյունավետ էր մասնավորապես Վարշավայի Ժ. Պիլսուդսկու անվան ֆիզիկական դաստիարակության համալսարանի Ֆիզիկական դաստիարակության և առողջության ֆակուլտետի դասախոս, դոցենտ Մալգորզատա Չարմասի հետ ՈԱԲ–ի աշխատակազմի հանդիպումը, որը տեղի է ունեցել Էրազմուս+ դասախոսական միջազգային շարժունության ծրագրի շրջանակում: Հանդիպման ընթացքում քննարկվել են դասախոսական աշխատանքի մակարդակում կրթական ծրագրերի բարելավման մեխանիզմներն ու սկզբունքները, շեշտադրվել են կրթության որակի ընկալումների մի շարք ընդհանրություններ երկու բուհերի միջև, ինչպես օրինակ՝ որակի ապահովման գործընթացներում ուսանողների և դասախոսների լայն ներգրավում, պրակտիկ և հետազոտական ծավալի մեծացումը ուսուցման գործընթացում, աշխատաշուկայի կարիքների շարունակական վերլուծում և դրա արդյունքների ներառումը ՄԿԾ վերանայումներում, հետազոտական աշխատանքներում ուսանողների մասնակցության ներգրավումը:

Ընդհանրացնելով միջազգային գործընկերոջ հետ ունեցած հանդիպման առանցքային դրույթները՝ ՈԱԲ–ի ղեկավար Գ. Մուրադյանը շահակից ստորաբաժանումների հետ քննարկել է որակի ապահովման ներբուհական գործընթացների տեսանկյունից միջազգային գործընկեր ուսումնական հաստատության հետ հետագա համագործակցության հեռանկարները, արել օտարերկրյա բուհի կրթափորձից արդյունավետ փոխառություններ անելու առաջարկներ, քանի որ, ինչպես ՄԿԾ բենչմարքինգի ՈԱԲ–ի ուսումնասիրություններն են ցույց տալիս, երկու բուհերի միջև կան ՄԿԾ «շարժունության պատուհանի» ներդրման տեսանելի հնարավորություններ:

Միջազգային մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ ՀՖԿՍՊԻ–ում տեղի ունեցած հանդիպումների շրջանակում ՈԱԲ–ի ղեկավարը մասնակցել է Լիտվայի սպորտի համալսարանի ռեկտոր Դայանա Ռեկլայտիենեի հետ հանդիպում–քննարկմանը, որի ընթքացքում մատնանշվել են նաև երկու բուհերի գործունեության այն հիմնական ոլորտները, որոնց շրջանակում կարելի է փոխգործակցություն ծավալել, մասնավորապես՝ համատեղ կրթական ծրագրերի իրականացում, հետազոտական աշխատանքներում համագործակցություն, փոխանակման ծրագրերի, ամառային դպրոցների, կոնֆերանսների և այլ միջոցառումների կազմակերպում:

Հաշվետու տարում ՈԱԲ–ը մասնակցել է նաև մի միջազգային կրթական վեհաժողովների և վեբինարիների, որոնք նվիրված էին բարձրագույն ուսումնական

հաստատություններում որակի ներքին ապահովման համակարգի բարելավմանն ու ներկայիս զարգացումներին. ՈԱԲ–ը ակտիվ ներգրավվածություն է ունեցել մասնավորապես“Towards the Implementation of the National Qualification Framework’’, ″Improving Institutional Policies for Inclusive Higher Education″ առցանց աշխատաժողովի խմբային քննարկումներին:

ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

Կարիերայի կառավարում ռազմավարական նպատակով նախատեսված է հետևյալ խնդիրները՝

1. Նպաստել ՀՖԿՍՊԻ ուսանողների ու շրջանավարտների զբաղվածության և կարիերայի աճի հնարավորությունների զարգացմանը, աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանը:
2. Ընդլայնել ՀՖԿՍՊԻ–ի համագործակցությունը գործատուների հետ՝ նպաստելով ՄԿԾ-ների արդիականացմանը և կրթության որակի բարձրացմանը:
3. Ամրապնդել բուհ–շրջանավարտ–գործատու փոխներգործուն կապը:

Կարիերայի բաժինն իր առջև դրված խնդիրների լուծման նպատակով սերտ համագործակցում է ինստիտուտի այլ կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև տարբեր պետական, հասարակական և մարզական կազմակերպությունների հետ: Բաժնի հիմնական նպատակն է՝ շրջանավարտ–բուհ արդյունավետ և շարունակական կապի ստեղծումն ու ամրապնդումը, ինստիտուտի և գործատուների միջև արդյունավետ գործակցության հաստատումը, աշխատաշոկայում ՀՖԿՍՊԻ–ի ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացումը:

Բաժինը գործում է կանոնադրության համապատասխան:

Հաշվետու ժամանակահատվածում Կարիերայի բաժնի կողմից իրականացվել են բաժնի աշխատանքային պլանով նախատեսված գործողությունները:

Ամբողջ տարվա ընթացքում բաժինը սերտորեն կապ է պահպանել շրջանավարտների և գործատուների միջև, որի արդյունքում տարբեր կազմակերպություններում, ՀՀ հանրակրթական դպրոցներում և մանկապարտեզներում աշխատանքի են տեղավորվել ՀՖԿՍՊԻ ուսանողներ և շրջանավարտներ: Մասնավորապես, բաժնի անմիջական միջնորդությամբ ՀՖԿՍՊԻ–ի շրջանավարտները և ուսանողները աշխատանքի են անցել Երևանի Ալեքսանդր Շիրվանզադեի թիվ 21 հիմնական դպրոցում, Երևանի Աղասի Խանջյանի անվան թիվ 53 հիմնական դպրոցում, Միսաք Մանուշյանի անվան թիվ 48 հիմնական դպրեցում՝ թվով 2 ուսուցիչ, Արմեն Հովհաննիսյանի անվան թիվ 194 հիմնական դպրոցում, Նար-Դոսի անվան թիվ 14 դպրոցում, Կոստան Զարյանի անվան թիվ 117 դպրոցում, «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամում, «Օհանյան» կրթահամալիրում, ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի թիվ 2 հիմնական դպրոցում, ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի Վարդգես Պետրոսյանի անվան հիմնական դպրոցում, Երևանի թիվ 109 ավագ դպրոցում, ՀՀ Կոտայքի մարզի Պռոշյան

համայնքի Պետրոս Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոցում, ԱՀ Ստեփանակերտի Գրիբոյեդովի անվան 3–րդ դպրոցում, ԱՀ Պատարայի միջնակարգ դպրոցում, ԱՀ Ստեփանակերտ քաղաքի Խ. Աբովյանի անվան 1–ին դպրոցում, ՀՀ Լոռու մարզի Մեդովկա համայնքի միջնակարգ դպրոցում, «Երևակ» կրթահամալիրում, ՀՀ Արարատի մարզի Դաշտավան համայնքի միջնակարգ դպրոցում, ԱՀ Ասկերանի շրջանի Խնապատի միջնակարգ դպրոցում, «Ավետիս» մանկապարտեզում, «Արևամանուկ» մանկապարտեզում, Երևան կրթահամալիրում, Օհանյան կրթահամալիրում, ՀՀ Վայոց Ձորի Ազատեկ համայնքի միջնակարգ դպրոցում, Երևանի թիվ 151 մանկապարտեզում, «Ալեգրո» սպորտային համալիրում, «ԳՐԱՆՏ ՍՊՈՐՏ» մարզաառողջարարական համալիրում, «SoftConstruct» ընկերությունում, «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամում, «Վորլդ Վիժն Հայաստան» զարգացման և բարեգործական միջազգային կազմակերպությունում, «Team Telecom Armenia», «Ջելիֆիշ», «Ուսանողի Տուն», «Ջրաշխարհ», «Reebok Sports Club Armenia», «Իմեքս գրուպ», «Օռանժ ֆիթնես» ընկերություններում, «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամում, Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիայում:

- Հանրային և ինստիտուցիանոլ կապերի պատասխանատուի հետ համագործակցությամբ պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ և ոլորտային գործունեություն ծավալող լավագույն շրջանավարտների հետ, ներկայացնելով նրանց օրինակելի գործունեությունը և փորձը:
- Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի բաժնի հետ համատեղ Դիլիջանում «Քայլ դեպի տուն» ուսումնաճանաչողական ծրագրով հայրենիքում գտնվող սփյուռքահայ պատանիներին ներկայացվել է բուհի հնարավորությունները, ինչպես նաև կազմակերպվել է մի շարք մարզական միջոցառումներ:
- 2022 թվականի ապրիլի 27-ից 29-ը ՀՖԿՍՊԻ-ին ներկայացվել է «Կրթություն և կարիերա EXPO 2022»-ին: Նախապատրաստական աշխատանքների շրջանում բաժինը համագործակցել է բուհի բոլոր ամբիոնների և ղեկավար կազմի հետ: EXPO-ին իրենց գործուն մասնակցությունն են ունեցել մոտ 15 ուսանողներ տարբեր ամբիոններից:
- Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են այցեր Երևանի և ՀՀ մարզերի դպրոցներ, որոնց ընթացքում բարձր դասարանի աշակերտների հետ իրականացվել են մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ: Խոսել ենք ՀՖԿՍՊ-ում իրականացվող կրթական ծրագրերի, բուհի նպատակների մասին: Շրջայցերին ներգրավված են եղել բուհի ուսանողներ և դասախոսներ:
- Հաշվետու ժամանակահատվածում Ինստիտուտում շրջայցեր են կազմակերպվել տարբեր դպրոցների և մարզադպրոցների երեխաների համար, որոնց ընթացքում երեխաները կարողացել են ավելի լավ պատկերացում կազմել Ինստիտուտի կրթական ծրագրերի և հնարավորությունների մասին:

- Հաշվետու ժամանակահատվածում թարմացվել և համալրվել է շրջանավարտների բազան:
- Հաշվետու ժամանակահատվածում բաժնի և գործընկեր կազմակերպությունների կողմից ուսանողների և շրջանավարտների համար պարբերաբար կազմակերպվել և անցկացվել են դասնթացներ՝ աշխատաշուկյում անհրաժեշտ տարբեր գիտելիքներ և հմտություններ զարգացնելու համար:
- Գործատուների կողմից Ինստիտուտում պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ ուսանողների և շրջանվարտների հետ, որոնց ընթացքում ներկայացվել են իրենց ընկերությունները, թափուր աշխատատեղերը, ուսանողներին և շրջանավարտներին տրվող հնարավորությունները:

Մասնագիտությամբ աշխատող բակալավրի շրջանավարտներ՝ ըստ կրթական ծրագրերի





Մասնագիտությամբ աշխատող մագիստրատուրայի շրջանավարտներ՝ ըստ կրթական ծրագրերի



Ներկայացված տվյալներից պարզ է դառնում, որ մասնագիտական ոլորտում շրջանավարտների զբաղվածության մակարդակը բավականին ցածր է, ինչն առաջին պլան է մղում ուսանողների կարիերայի զարգացմանն օժանդակելու բուհի հանձնառության կանորությունը:

Ուսանողների և ապագա շրջանավարտների հետ հաղորդակցական հոսքերը կառավարելու նպատակով ներդրվել է ուսանողների էլեկտրոնային փոստի հասցեների ներբուհական համակարգ: Ուսանողներին տրամադրված էլեկտրոնային հասցեն պահպանվելու է նաև ուսումնառության ավարտից հետո, ինչը կնպաստի շրջանավարտների հետ գործուն կապի արդյունավետության բարձրացմանը:

Վերանայվում են գործատուների և շրջանավարտների հետադարձ կապի ուսումնասիրման մեխանիզմներն ու գործիքակազմը, ինչն իր հերթին կօգնի ուսումնասիրելու և գնահատելու բուհում իրականացվող մասնագիտական կրթության որակն ու կրթական ծրագրերի բովանդակության հուսալիությունը:

Հաշվետու տարում բաժինը շարունակել է իր ֆեյսբուքյան էջով ուսանողներին իրազեկել մասնագիտական աշխատաշուկայում առկա թափուր տեղերի մասին,

կազմակերպել կլոր սեղան-քննարկումներ ոլորտի գործատուների հետ, որոնց կողմից բարձրաձայնված խնդիրները դիտարկվում են նաև ՄԿԾ-ների վերանայման ժամանակ:

Ուսանողական խորհրդի հետ համատեղ անցկացվել են առցանց դասընթացներ CV գրելու հմտությունների, աշխատաշուկային ճիշտ և շահեկան ձևով ներկայանալու վերաբերյալ, մասնագետները ուսանողներին գործնական խորհուրդներով ծանոթացրել են կարիերա սկսելու քայլերի հաջորդականությանը, տրամադրել գործնական առաջխաղացում ունենալու խորհրդատվություն:

ԲՈՒՀ–ԳՈՐԾԱՏՈՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

2019-ից բուհում նոր կառուցվածքային ստորաբաժանում է գործում. այն է՝ Ինստիտուցիոնալ հարաբերությունների բաժին, որի հիմնական գործառույթն ուղղված է գլխադասային գերատեսչության (ՀՀ ԿԳՄՄՆ), ՀՀ գործադիր, օրենսդիր և տեղական ինքնակառավարման մարմինների, ոլորտային կազմակերպությունների, բուհերի, մասնագիտացված ընկերությունների հետ գործընկերային և փոխգործակցային հարաբերությունների ձևավորմանը, սպասարկմանը և զարգացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում բաժնի կողմից համագործակցային հարաբերությունների վերաբերյալ նամակագրություն է իրականացվել Հայաստանում գործող տարբեր ոլորտների առաջատար տնտեսվարողների հետ՝ ուղղված ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի սպասարկման որակի, ինչպես նաև ուսումնական և աշխատանքային պայմանների լավացմանը: Ուսումնական գործընթացի կազմակերպմանն են ուղղված եղել նաև տարբեր մարզական կազմակերպությունների մարզաբազաներից օգտվելու նպատակով հաստատված ինստիտուցիոնալ հարաբերությունները: Գործընկերային հարաբերություններ են ձևավորվել «Հայաստանի թվային գրադարանների» ասոցիացիայի հետ, կազմակերպվել և իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված ինստիտուտի կորպորատիվ հեղինակության բարձրացմանը և աշխատակիցների կորպորատիվ պատասխանատվության ձևավորմանը:

Բուհում իրականացվող կրթության որակի ապահովմանն է ուղղված համագործակցային նամակագրության կազմակերպումը և ուսանողների գործնական դասերի կազմակերպմանը և պրակտիկայի անցկացմանը նպաստող գործընկերային հարաբերությունների ձևավորումը: Այդ նպատակով իրականացվել են սերտ և արդյունավետ աշխատանքներ մարզաձևերի ազգային ֆեդերացիաների հետ: Բաժնում ստեղծել է հարուստ կոնտակտային բազա (մարզական, այդ թվում նաև՝ ֆուտբոլային ակումբներ, ֆիթնես սրահներ, հասարակական կազմակերպություններ, զանգվածային լրատվամիջոցներ, գործընկեր բուհեր, առաջատար տնտեսվարողներ, beting ոլորտի ներկայացուցիչներ և այլն):

Ինստիտուցիոնալ հարաբերությունների բաժնում կատարվել են աշխատանքներ՝ լրացուցիչ կրթական ծրագրերի տեսակների ավելացման ուղղությամբ, կազմակերպվել են սեմինարներ, իրականացվել են հանդիպումներ և քննարկումներ: Իր առջև դրված նպատակներին և ղեկավարներից ստացած հանձրարականների կատարման նպատակով հաստատվել է ոչ միայն նամակագրային համագործակցություն, այլև իրականացվել են բազմաթիվ միջանձնային շփումներ, բանակցություններ, քննարկումներ, ձեռք են բերվել համապատասխան համաձայնություններ: Նշված համաձայնությունները վավերացվել են կնքված հուշագրերով:

Բաժինն ակտիվորեն մասնակցել է մասսայական միջոցառումների կազմակերպման և անցկացման աշխատանքներին (հուշ–երեկո, մեծարման միջոցառում, թեմատիկ հանդիպումներ, սեմինարներ և այլն), այդ թվում նաև՝

մարզաձևերի ազգային ֆեդերացիաների հետ համատեղ: 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում ՀՀ բոլոր մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ կազմակերպվել է ՀՀ հանրակրթական դպրոցներում «Ֆիզկուլտուրա» առարկայի հեռավար դասավանդման ուղեցույց, ինչի անհրաժեշտությունն առաջացել էր համաճարակային սահմանափակումների պատճառով:

Բաժինն ակտիվ մասնակցություն է ունեցալ EXPO-2021 կրթական ցուցահանդեսին ներկայանալու նպատակով ներկայացուցչական բուկլետների պատրաստման գործում: Հաշվետու ժամանակահատվածում Հայ կամավորների միության հետ համատեղ կազմակերպել և իրականացրել է սպորտի ոլորտի կառավարման, շուկայագիտության և PR ոլորտի մասնագետների համար նախատեսված դասընթացների շարք:

Նշենք, որ վերահիշյալ աշխատանքներն իրականացվել են արտակարգ պայմաններում և ռեժիմով՝ հաշվի առնելով COVID-19 համավարակի և Հայաստանի Հանրապետության նկատմամբ սանձազերծված 44–օրյա պատերազմի պատճառով ստեղծված իրավիճակը: Բաժնի կողմից իրականացված նամակագրային հարաբերությունները մեծապես նպաստել են պատերազմական և հետպատերազմական ժամանակաշրջանում ինստիտուտի մասնագետների և ուսանողների ակտիվ մասնակցությանը վիրավոր և հաշմանդամություն ստացած զինծառայողների ֆիզիկական վերականգնման գործընթացում:

2020-ից ինստիտուտը որդեգրել է գործատու ոլորտից դասախոսական կազմի ձևավորման քաղաքականություն, ընդլայնվել են գործատու կառույցների հետ մասնագիտական պրակտիկայի անցկացման, աշխատաշուկայից հրավիրված մասնագետների հետ համատեղ մագիստրոսական ատենախոսության շրջանակում հետազոտական նախագիծ իրականացնելու հնարավորությունները՝ որպես միջոց գործատուի հետ շարունակաբար շփվելու, աշխատաշուկայի պահանջը ուսանողին հասցնելու, գործատուից եկած ազդակներին համապատասխան պրակտիկ կրթություն իրականացնելու համար:

Այս համագործակցության հիմնական նպատակը բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստումն է, ինչը փոխշահավետ կարող է լինել գործակցող կողմերի համար. որակյալ շրջանավարտն ապահովվում է աշխատանքով, ընկերությունն էլ համալրվում է պահանջված մասնագետով:

2021-2022 ուսումնական տարում ՀՖԿՍՊԻ–ն շարունակում է ամրապնդել բուհ–գործատու համագործակցային կապերի սերտացմանը. ընդլայնվել է գործատու հաստատությունների և կառույցների գործակցային ծրագրերի շրջանակը: Հուշագրեր են ստորագրվել մի շարք գերատեսչությունների և գործընկեր կառույցների հետ, ինչպես օրինակ՝

ինստիտուտի բակալավրի և մագիստրոսի տարբեր կրթական ծրագրերի ուսումնառողների պրակտիկայի անցկացման նպատակով գործատու կառույցների հետ կնքվել է շուրջ 300 պայմանագիր:

Արտաքին շահակիցների հետ ինստիտուցիոնալ հարաբերություններ ձևավորելու նպատակով ՀՖԿՍՊԻ–ն պրոակտիվ ներդրում է ունեցել նաև բարձրագույն կրթության

ոլորտային շրջանակի մշակման աշխատանքներին: ՀՀ մանկավարժական բուհերի ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խմբի հետ համատեղ մշակվել է Որակավորումների ոլորտային շրջանակի (ՈՈՇ) նախագծային տարբերակը և ներկայացվել ՀՀ ԿԳՄՍ նախարարություն:

Նախագծում ՀՖԿՍՊԻ առաջարկները վերաբերել են ոչ միայն փաստաթղթի կառուցվածքին, վերջնարդյունքների ձևակերպման հիմնական բնութագրիչներին, այլև մշակվող փաստաթղթով ապագա մանկավարժի որակավորման հուսալիության ու արժանահավատության հավաստմանը: Բուհի կողմից ներկայացրած դիտարկումներն ու առաջարկությունները հիմնականում ընդունվել են և արտահայտվել ՈՈՇ-ի նախագծային տարբերակում:

ՀՖԿՍՊԻ–Ի ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՔՈԼԵՋԻ ՀԻՄՆՈՒՄ

ՀՖԿՍՊԻ–ի 2022-2026 թթ. ռազմավարական 1 նպատակով սահմանվել է խնդիր՝ ապահովել 5-րդ մակարդակի՝ մասնագիտական կրթություն, հիմնել միջին մասնագիտական ուսումնական հաստատություն (ՄՄՈՒՀ) :

Հաշվետու ժամանակահատվածում այդ ուղղությամբ կատարվեն են հետևյալ աշխատանքները՝

1. Շուկայի մշտադիտարկում
2. Հիմնավորման մշակում
3. Մասնագիտությունների ընտրություն
4. Առաքելության և տեսլականի սահմանում
5. Քոլեջի բռենդավորում
6. Ամբողջական փաթեթի պատրաստում և ներկայացում ԿԳՄՍՆ
7. ՀՖԿՍՊԻ–ին տրվել է լիցենզիա՝ իրականացնելու նախնական արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ներկայացված 4 ուղղություններով:

Կատարված աշխատանքները ներկայացված է ստորև՝

Ժամանակակից հանրությունը բնորոշվում է փոփոխությունների բարձր դինամիզմով, այդ թվում նոր և պահանջված մասնագիտությունների առաջացմամբ: Այդ մասնագիտությունները ուսումնասիրվում են ինչպես բարձրագույն ուսումնական հաստատություններում, այնպես էլ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում (ՄՄՈՒՀ):

ՀՖԿՍՊԻ–ի հենքի վրա ՄՄՈՒՀ հիմնելու գաղափարը դեռևս 2017 թվականին քննարկվել և ներկայացվել է որպես ռազմավարական նպատակ՝ բուհի 2017-2021 թթ զարգացման ռազմավարական ծրագրում, սակայն քայլեր չեն ձեռնակվել այդ նպատակը կյանքի կոչելու ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարության ռազմավարական առաջնահերթություններից մեկը աշխատաշուկայի օգտատեր հանդիսացող բնակչությանը միջին մասնագիտական կրթությունով ապահովումն է: Նշված ռազմավարական նպատակի իրագործման համատեքստում Հայաստանի ֆիզիկական

կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը ստանձնում է ոլորտային ՄՄՈՒՀ–ի կազմավորման պատասխանատվությունը՝ հիմք ընդունելով հետևյալ կարևորագույն գործոնները.

1. Հայաստանի Հանրապետությունում հանրակրթության կտրուկ փոփոխությամբ և այդ փոփոխությունն իրականացնելու համար անհրաժեշտ գործիքակազմի բացակայությամբ պայմանավորված անկատար վիճակում է «Ավագ դպրոցի» ինստիտուտը:

2. Հանրապետությունում առկա սպորտի ոլորտային ՄՄՈՒՀ–ների փոքր թվականաքը և մասնագիտական ուղղվածությունը: Հայաստանի Հանրապետությունում գործող ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտային երկու՝ Երևանի և Գյումրու օլիմպիական հերթափոխի մարզական քոլեջների առաքելությունը ազգային հավաքական թիմերի և բարձր նվաճումների սպորտի համար բարձրակարգ մարզիկներ պատրաստելն է:

3. Մեր ուսումնասիրությունների վերլուծության արդյունքները: Մասնավորապես սոցհարցումներ են կատարվել՝

- ՀՖԿՍՊԻ աշխատանքային խմբերի ճանաչողական այցերի ընթացքում հանրակրթական դպրոցների և այլ ուսումնական հաստատությունների աշակերտների շրջանում,
- մասնագիտական ցուցահանդեսների և աշխատանքի տոնավաճառների (career fair) ժամանակ,
- սոցիալական ցանցերի օգտատերերի շրջանում,
- էլեկտրոնային նամակագրության և հեռախոսազանգերի վերլուծությունների միջոցով:

Կատարված բոլոր ուսումնասիրությունների արդյունքներն ապացուցում են ՄՄՈՒՀ–ի հիմնադրման կարևորությունը: Ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և սպորտի հարակից ոլորտների համար մասնագետներ պատրաստող ՄՄՈՒՀ–ի առկայությունը հնարավորություն կընձեռի հիմնական դպրոցի շրջանավարտներին երեք տարիների ընթացքում հանրակրթական ծրագրին զուգահեռ ձեռք բերել մասնագիտական որակավորում, ինչը նրանց համար աշխատաշուկայում կայուն տեղ կապահովի և ամուր հիմք կհանդիսանա հետագա կարիերայի կայացման և զարգացման համար, միաժամանակ՝ նպաստելով ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայականացմանը հանրապետության ողջ տարածքում: Ստանալով միջին մասնագիտական որակավորում շրջանավարտը հնարավորություն կունենա բարձրագույն կրթական համակարգ սահուն մուտք գործելուց բացի նաև՝ դառնալ աշխատաշուկայի լիարժեք օգտատեր:

Տեսլականը

ՀՖԿՍՊԻ հենակետային միջին մասնագիտական քոլեջը («Սպորտուս») հավակնում է դառնալ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, ինչպես նաև սպորտը սպասարկող ոլորտների մրցունակ մասնագետներ և գիտնականներ պատրաստող բուհի հենակետային միջին մասնագիտական ուսումնական հաստատություն:

Առաքելությունը

Պատրաստել ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և հարակից ոլորտների աշխատաշուկայում մրցունակ և արհեստավարժ մասնագետներ՝ կրթական ժամանակակից ծրագրերի և դասավանդման նորարար տեխնոլոգիաների միջոցով:

Նպատակը

Մեր նպատակն է հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա միջին մասնագիտական որակավորմամբ ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և հարակից ոլորտների համար մասնագետներ պատրաստելը: Քոլեջի շրջանավարտները կարող են որպես հրահանգիչներ աշխատել մանկապատանեկան մարզադպրոցներում, մարզական ակումբներում, նախակրթարաններում, ամառային ճամբարներում, ինչպես նաև աշխատել որպես մերսողներ և զբոսաշրջության ոլորտի զբոսավար հրահանգիչներ: Հիմնական դպրոցի շրջանավարտները ՄՄՈՒՀ–ում ուսումնառության երեք տարիների ընթացքում հանրակրթական բաղադրիչին զուգահեռ ձեռք կբերեն մասնագիտական որակավորում:

Հավատարիմ մնալով բուհի առաքելությանը, արժեքներին և սկզբունքներին ստանձնում ենք՝

- իրականացնել որակյալ կրթություն, բարձրակարգ մասնագետների ներգրավմամբ
- տրամադրել օժանդակ ծառայություններ, որոնք կնպաստեն հետագա կարիերայի կայացմանը և կյանքի հմտությունների ձևավորմանը (soft skills),
- ստեղծել, պահպանել և զարգացնել գերազանցության էտալոն,
- ձևավորել համագործակցային միջավայր,
- խրախուսել ողջ կյանքի ընթացքում ուսուցման, մասնագիտական կատարելագործման և անձնային աճի կարևորությունը,
- պահպանել էթիկայի նորմերը՝ միջանձնային փոխգործակցության բոլոր մակարդակներում,
- ապահովել տեխնոլոգիական առաջընթաց՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ուսուցման և շարունակական բարելավման միջոցով հաջողության հասնելու և կարիերայի առաջընթացը ապահովելու համար:

Արժեքային ուղենիշները

- եզակիությունը,
- արհեստավարժությունը,
- կայունությունը,
- ճկունությունը:

Քոլեջի կրթական համակարգի հիմնական խնդիրն է պատրաստել որակյալ մասնագետներ և ապահովել նրանց մրցունակությունը աշխատաշուկայում՝ բարձր մասնագիտական որակավորման շնորհիվ:

Քոլեջի կրթական համակարգը հիմնված է լինելու հետևյալ սկզբունքների վրա.

• մասնագիտական կրթության ստանդարտացում՝ կրթության տարրական, հիմնական և խորացված մակարդակների հաստատում, կրթության շարունակականության ապահովում և մասնագիտական որակավորման պահանջվող մակարդակի ապահովում, ՀՀ–ում և արտերկրում մասնագիտական կրթության փոխարկելիության ապահովում,

• կրթության հումանիզացում՝ ուղղված հումանիզմի խթանմանը, կենտրոնացված համամարդկային արժեքներին, ուսանողի անհատականության ձևավորմանը,

• ուսանողակենտրոն ուսուցում՝ որպես ստեղծագործական և զարգացող կրթական համակարգ,

• հմտությունների վրա հիմնված մոտեցում՝ բարձրորակ վերապատրաստման և աշխատաշուկայում մրցունակության ապահովման միջոցով,

• ինտեգրացիոն մոտեցում՝ միջավայրի ամբողջական պատկերացման, համակարգային մտածողության ձևավորման և որակավորման բարձր մակարդակի խրախուսման միջոցով,

• ինտենսիվացում՝ ուղղված մասնագիտական կրթության բարելավմանը, ուսանողների հմտությունների և կարողությունների, այդ թվում՝ նաև աշխատանքի կազմակերպման մասին ընդհանրացված գիտելիքների ձևավորմանը,

• մշակութային համապատասխանություն՝ մշակութային արժեքների փոխանցման և արժեքային փոփոխությունների հարմարվողականության ունակության շնորհիվ:

Մասնագիտական ուղղությունները՝ միջին մասնագիտական

03.07 Ֆիզիկական կուլտուրա և սպորտ

23.07 Զբոսաշրջություն/ ըստ ճյուղերի / սպորտային

04.11 Բուժական մերսում

Նախնական արհեստագործական՝ թիկնապահական գործ

Քոլեջի տարբերանշանը

Քոլեջը ունի www.sportedu.am –ում «Սպորտուս»– պաշտոնական էջ, Facebook –ում սոցիալական ցանցում պաշտոնական էջ:


«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի հենակետային քոլեջ

ՍՊՈՐՏՈՒՍ

ՄՏԱԾԻՐ, ԳՈՐԾԻՐ, ՆՎԱՃԻՐ

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի «Սպորտուս» հենակետային քոլեջը ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և սպորտի հարակից ոլորտների համար մասնագետներ պատրաստող միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, որը հնարավորություն է տալիս հիմնական կրթության հիմքով առկա ուսուցման տարիների ընթացքում հանրակրթական ծրագրին զուգահեռ ձեռք բերել մասնագիտական որակավորում:

- «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսման տևողությունը 4 տարի է, ուսման վարձը՝ 220.000 ՀՀ դրամ:
- «Զբոսաշրջություն» միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսման տևողությունը 3 տարի է, ուսման վարձը՝ 250.000 ՀՀ դրամ:
- «Բուժական մերսում» միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսման տևողությունը 3 տարի է, ուսման վարձը՝ 250.000 ՀՀ դրամ:
- «Թիկնապահական գործ» նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրով ուսման տևողությունը 3 տարի է, ուսման վարձը՝ 250.000 ՀՀ դրամ:

«Սպորտուսը» հավակնում է դառնալ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, ինչպես նաև սպորտը սպասարկող ոլորտների մրցունակ մասնագետներ պատրաստող միջին մասնագիտական ուսումնական հաստատություն:

ՀՖԿՍՊԻ SWOT (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2021-2022	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ ԱՌԱՋԸՆԹԱՑ	**ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ**
1. ՀՖԿՍՊԻ 2022-2026 թթ. ռազմավարական ծրագրի առկայություն: 2. Ռազմավարական ծրագրի գործողությունների պլան–ժամանակացույցի առկայություն: 3. ՀՖԿՍՊԻ ռազմավարական կառավարման, ենթակառուցվածքային և վարչարարական փոփոխությունների իրականացում: 4. ՀՖԿՍՊԻ կազմակերպական կառուցվածքում կառավարման հորիզոնական և ինտեգրալ կապերի ապահովում: 5. Կառավարման համակարգում առավել արդյունավետ մոտեցումների ներդնում. որոշումների կայացման գործընթացում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության ապահովում: Կառավարման մասնակցային մոդելի զարգացում: 6. Ինստիտուտի կրթական և այլ գործընթացները կարգավորող փաստաթղթային հենքի վերանայման և մշակման գործընթացի ամփոփում: 7. Ներքին փաստաթղթաշրջանառության և հաղորդակցման գործընթացներում էլեկտրոնային գործիքակազմի գործարկման գործընթացի շարունակական բարելավում: 8. Գնահատականների մուտքագրման և պահպանման էլեկտրոնային համակարգի արդիականացում: 9. Պրոֆեսորադասախոսական կազմի հավաքագրման և համալրման գործընթացի իրականացումը հրապարակայնացված և բաց մրցութային ընթացակարգի ներդրում: 10. Գործատու ոլորտներից դասախոսներով ՊԴ կազմի համալրվածություն: 11. Օտար լեզուների ուսուցման աշխատածավալի մեծացում: 12. Կրթական ծրագրերի իրականացման բարենպաստ ուսումնական միջավայրի շարունակական բարելավում՝ որպես զարգացման առաջնահերթություն:	1. ՀՖԿՍՊԻ ռազմավարական զարգացման և որակի ապահովման գործընթացներում արտաքին առանցքային շահակիցների (շրջանավարտներ, գործատուներ) մասնակցության և նախաձեռնողականության ցածր մակարդակ: 2. Ֆինանսական պլանավորման և ֆինանսական մուտքերի ու ռեսուրսների բաշխման ոչ հստակ քաղաքականություն և ընթացակարգեր: 3. Ռիսկերի կառավարման համակարգի ոչ լիարժեք գործադրում և ճգնաժամերի դիմակայմանն ուղղված ռազմավարության թերի կիրառում: 4. Գիտահետազոտական աշխատանքներում դասախոսների և ուսանողների թույլ ներգրավվածությունը: 5. Գիտահետազոտական արդյունքների առևտրայնացման մշակույթի և դրա կանոնակարգման գործընթացների բացակայություն: 6. ՊԴ կազմի ընդհանուր հաստիքացուցակում օտարերկրյա գիտական կադրերի ներգրավվածության բացակայություն: 7. Դասերին ուսանողների հաճախելիության ապահովման մեխանիզմների անարդյունավետություն: 8. Ուսանողների գիտելիքների ու հմտությունների ստուգման և գնահատման չափանիշների ու կրթական վերջնարդյունքների միջև թույլ կապ: 9. Ուսուցման գործընթացում ուսանողի առաջընթացի օբյեկտիվ և թափանցիկ արձանագրման համար գնահատման քաղաքականության, գնահատման մեթոդների անկատարություն: 10. Շրջանավարտների զբաղվածության տվյալների դեռևս ցածր մակարդակ: 11. Ուսանողների շարժունության բացակայություն: 12. Հաջողված փորձի փոխանակման գործընթացների թույլ կառավարման հետևանքով տարբեր ամբիոնների և ՀՖԿՍՊԻ անհամաչափ զարգացվածություն:

13.Նյութատեխնիկական բազայի թարմացում, արդիականացում և բազմազանեցում, աշխատանքային պայմանների բարելավում: 14.Հատուկ կարիքներ ունեցող ուսումնառողների համար բուհի շենքային, լսարանային և գույքային պայմանների մատչելիության ապահովում: 15.Տեղական շուկայում պահանջարկ ունեցող նոր կրթական ծրագրերի ներդրման հնարավորությունների մշտադիտարկում: 16.«Սպորտուս» հենակետային քոլեջի գործունեության իրականացման արտոնման հաստատում ՀՀ ԿԳՄՍՆ-ի կողմից: 17.Հենակետային քոլեջում 4 ուղղությունների առկայություն: 18.Հենակետային քոլեջի բռենդավորում: 19.Իրազեկման աշխատանքների վարման արդյունքում ՀՀ ԿԳՄՍՆ–ի արտոնված տեղերի ամբողջական համալրում, հավելյալ տեղերի ավելացում: Ֆինանսական հոսքերի բազմազանեցում: 20. Հասարակայնության հետ կապերի ակտիվացում, բուհի գործունեության հանրայնացում, լուսաբանումների միջոցով ինստիտուտում գործող մասնագիտությունների գրավչության բարձրացում: 21.Դիմորդների և ընդունվողների ներհոսքի ապահովում: 22.Ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված համալիր մոտեցումների գործարկում, ծածկագրված քննակարգի ներդնում: 23.ՀՖԿՍՊԻ աշխատակազմի կատարողական բարելավմանը ուղղված ռազմավարության և մոտեցումների մշակում և հաստատում: 24.Պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական գործունեության խրախուսում, հավելավճարի հատկացում միջազգային բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում հրապարակումների համար: 25.Գործատու-բուհ կապերի ընդլայնում, ուսանողական պրակտիկայի հնարավորությունների ընդլայնման նպատակով	13. Որակի ապահովման գծով պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի փորձի պակաս: 14.Արտաքին շահակիցների թույլ ներգրավվածությունը ՈԱ հիմնարար գործընթացներին: 15. ՊԻԳԲ շրջափուլի ոչ լիարժեք կիրառում՝ կառավարման գործընթացներում: 16.Հաշվետվողականության համակարգում վերլուծական կարողությունների փորձի պակասը:

նոր գործընկերների ձեռքբերում, համագործակցության նոր պայմանագրերի և հուշագրերի կնքում: 26. Զանգվածային լրատվամիջոցների հետ համագործակցության ակտիվացում՝ բուհի կողմից մատուցվող կրթական ծառայությունների մասին տեղեկատվության տրամադրման, բուհի ղեկավար կազմի կողմից տրվող հարցազրույցների և մամուլի ասուլիսների միջոցով: 27. Որակի ապահովման քաղաքականության, ընթացակարգերի, մեխանիզմների, կարիքների վերհանման գործիքակազմի բազմազանությունը: 28. Որակի ապահովման ենթահամակարգի աճող ազդեցություն: 29.Ներքին շահակիցների հետ հետադարձ կապի կայուն մեխանիզմների կիրառում, հարցումների կանոնավոր իրականացում և դրանց արդյունքների ներդնում որոշումների կայացման գործընթացում: 30.Որակի ներքին ապահովման մշտադիտարկումների պարբերական գնահատումներ և վերլուծումներ: 31. Բացահայտված կարիք-նպատակային վերապատրաստում-ակնկալվող արդյունք-արդյունքի գնահատում՝ որակի ապահովման գործիքակազմի ներդնում և կիրառում: 32. Որակի ապահովման միջազգային կառույցների հետ համագործակցային կապերի ձևավորում, մասնակցություն միջազգային հեղինակավոր հարթակներում անցկացված վեբինարներին և քննարկումներին: 33.ՀՖԿՍՊԻ միջազգայնացման գործընթացի խթանում՝ օտարերկրյա գործընկեր համալսարանների և միջազգային կազմակերպությունների, այլ պետությունների ներկայացուցիչների հետ գիտակրթական համատեղ ծրագրերի մշակման միջոցով: 34.Գրավչություն օտարերկրյա ուսանողների համար և նրանց ներհոսք, ուսանողական և դասախոսական շարժունության	

ծրագրերի իրականացման նախադրյալների ստեղծում: 35.Նախապատրաստական դասընթացների և լրացուցիչ շարունակական կրթության իրականացում: Ֆինանսական մուտքերի բազմազանեցում: 36.Միջազգային առանցքային կառույցների հետ համատեղ տեսակոնֆերանսների կազմակերպում և անցկացում: 37.Կրթական ծրագրերի բարելավման, ինչպես նաև ՈՈՇ համապատասխանեցման նպատակով միջազգային բենչմարքինգի փաթեթի 4 առկայություն: 38. Միջազգային դրամաշնորային ծրագրերին մասնակցության հայտերի ներկայացում և հաստատում /5 ծրագիրի/: Ֆինանսական մուտքերի բազմազանեցում: 39.Միջազգային շարժունության ծրագրի իրականացում: 40. Եռալեզու կայքի առկայություն:	
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ**
1. ՀՖԿՍՊԻ կազմակերպական նոր կառուցվածքի փոփոխություններով պայմանավորված զարգացման հնարավորություններ: 2. ՀՖԿՍՊԻ Ռազմավարական ծրագրի (ՌԾ-ի) գնահատման ձևաչափի մշակում ըստ գործունեության արդյունավետության ցուցանիշների (ԳԱՑ-երի) 3. ՀՖԿՍՊԻ համապատասխան շենքային և լսարանային պայմանների, տեխնոլոգիական բազաների շարունակական բարելավում: 4. Արտաքին ֆինանսական մուտքերի ավելացում և բազմազանեցում ձեռնարկատիրական գործունեության տեսակների ընդլայնման ու լրացուցիչ կրթական վճարովի ծառայությունների ավելացման միջոցով:	1. Բուհերի խոշորացում: 2. Պետական ֆինանսավորման ոչ բավարար մակարդակ: 3. ՀՀ բնակչության եկամուտների ցածր մակարդակ: 4. Արտաքին շահակիցների և, հատկապես, գործատուների ոչ բավարար շահագրգռվածություն և ներգրավում բուհական կրթական գործընթացներում: 5. Բարձրորակ գիտամանկավարժական կադրերի համար արտաքին մրցակցության ուժեղացում: 6. Բուհերի միջազգայնացմանը նպաստող պետական անբավարար աջակցություն: 7. Ֆորս մաժորային այլ իրավիճակներ:

5. ՀՖԿՍՊԻ ֆինանսավորման համակարգի ապակենտրոնացում և ծրագրային բյուջեների կազմում և բաշխում ըստ ռազմավարական գերակա ուղղությունների ու ոլորտների: 6. Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաների ներմուծման ցուցանիշներ՝ պայմանավորված կրթության ձևերի բազմազանեցմամբ և մրցակցային առավելության ձեռքբերման անհրաժեշտությամբ: 7. ՀՀ բուհերի ազգային վարկանիշավորման ցուցանիշները բարձրացնելու նպատակով մասնագիտությունների գրավչության աստիճանի բարձրացում: 8. Երիտասարդ դասախոսների մենթորության և մասնագիտական կատարելագործման խրախուսմանն ուղղված մեխանիզմների մշակում և կիրառում: 9. Արտաքին և ներքին միջավայրերից ստացվող տեղեկատվության քանակական և որակական վերլուծությունների պարբերական իրականացում, կիրառվող մեխանիզմների արդյունավետության գնահատում:	
10. Համագործակցության ընդլայնում միջազգային գիտակրթական, մասնագիտական, ֆինանսավորող կառույցների, ընկերությունների և կազմակերպությունների հետ: 11. Բուհում իրականացվող հետազոտություններ՝ նպատակային ֆինանսավորման համար: 12. ՀՖԿՍՊԻ համագործակցային ձևաչափերի կիրառման դաշտի ընդլայնում, ինստիտուտի և ավագ դպրոցների ու միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների միջև պայմանագրերի կնքում՝ ուսանողների հավաքագրման նպատակով: 13. Օտարալեզու կրթական ծրագրերի ներդրման ոլորտում ստեղծված հնարավորությունների զարգացում:	

14. Հասարակության հետ կապերի ամրապնդում և շահակիցների հետ համագործակցության զարգացում: 15. ՀՖԿՍՊԻ գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածման աշխատանքների ընդլայնում, արդյունավետության բարձրացում (օրինակ՝ բարձրորակ տեղեկատվական նյութերի պատրաստում, դրանց տարածում դպրոցներում, միջին մասնագիտական հաստատություններում և բուհերում) և հետադարձ կապի ձևերի բազմազանեցում՝ սոցիալական ցանցերի, էլեկտրոնային ժամանակակից ռեսուրսների ավելի ինտենսիվ օգտագործմամբ: 16. ՈՆԱ համակարգի ազդեցության պարբերական գնահատում բուհի բարելավումների վրա:	

ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 11
Հեռ. (+37410) 55-33-10, (+37410) 55-10-04
info@sportedu.am,www.sportedu.am
https://www.fasebook.com/sportedu.am
https://tinyurl.com/4e2xymez
https://tinyurl.com/5d845555